



ՆԱԻՐԱ ՀԱԿՈՒՅԱՆ
ԱՆՆԱ ԽԱԶԱՏՐՅԱՆ
ԱՐՏԱԿ ԴԱԲԱՂՅԱՆ

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ
ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՁԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ
ՃԳՆԱԺԱՄԻ ԵՎ ԱՆՈՄԻԱՅԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ՈՒ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԿՈԼԵԿՏԻՎ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԻՐԱ ՀԱԿՈՒՅԱՆ ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ ԴԱԲԱՂՅԱՆ

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ
ԱՆՁԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՃԳՆԱԺԱՄԻ
ԵՎ ԱՆՈՄԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ՈՒ
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԿՈԼԵԿՏԻՎ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

2024

ՀՏԴ 159.923:316.6

ԳՄԴ 88.3+88.5

Հ 177

Մենագրությունը տպագրվում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող 21T-5A311 ծածկագրով «Հետպատերազմական շրջանում անձի արժեհամակարգի ճգնաժամի և անոմիայի հիմնախնդիրը և հաղթահարման մեթոդաբանությունը» գիտական թեմայի շրջանակներում

Երաշխավորվել է տպագրության ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական խորհրդի կողմից

Պատասխանատու խմբագիր՝

հոգ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Կ. Վարդանյան**

Հակոբյան Ն., Խաչատրյան Ա., Դաբադյան Ա.

Հ 177 Հետպատերազմական շրջանում անձի արժեհամակարգի ճգնաժամի և անոմիայի հիմնախնդիրն ու հաղթահարման մեթոդաբանությունը: Կոլեկտիվ մենագրություն/Ն.Հակոբյան, Ա.Խաչատրյան, Ա.Դաբադյան.-Եր.:«Ալվարդ Օհանջանյան Վառլենի» Ա/Զ, 2024. – 201 էջ:

Մենագրության մեջ ներկայացված է անձի արժեհամակարգի ճգնաժամի և անոմիայի հիմնախնդիրն ու հաղթահարման մեթոդաբանությունը հետպատերազմական շրջանում: Միջքնագավառային վերլուծությունների հիման վրա լուսաբանվել ու մեկնաբանվել է «անոմիա» երևույթի հայեցակարգային սահմանումը, բնութագրման չափանիշներն ու տիպաբանությունը: Ներկայացվել են անոմիայի առաջացման պատճառահետևանքային կապերը, հետպատերազմական հասարակությունում անձի և սոցիալական խմբերի արժեհամակարգի ճգնաժամն ու անոմիկ վարքի դրսևորման ձևերը: Վերհանվել են անոմիկ վարքի հաղթահարման եղանակներն ու սոցիալական ինտեգրացիայի հոգեբանական մեխանիզմները, ինչպես նաև հետպատերազմական շրջանում հոգեբանական աշխատանքի մոդելները: Մենագրությունը նախատեսված է հոգեբանների, սոցիոլոգների, մարդաբանական գիտակարգերով զբաղվողների, բուհերի ուսանողների, դասախոսների և ընթերցողների լայն շրջանակների համար:

ՀՏԴ 159.923:316.6

ԳՄԴ 88.3+88.5

ISBN 978-9939-1-1888-8

DOI: 10.54503/978-9939-1-1888-8

© Նաիրա Հակոբյան, Աննա Խաչատրյան, Արտակ Դաբադյան, 2024

Բովանդակություն

Նախաբան	4
Մաս 1	
Հետպատերազմական իրողության սոցիալ-հոգեբանական բնութագիրը	8
Մաս 2	
Արժեհամակարգի ճգնաժամի պատճառահետևանքային կապերը հետպատերազմական հասարակությունում	27
Մաս 3	
Սոցիալ-հոգեբանական անոմիայի հիմնախնդիրը և հայեցակարգային տիպաբանությունը	73
Մաս 4	
Սոցիալ-հոգեբանական անոմիայի և արժեհամակարգի ճգնաժամի համահարաբերակցային դրսևորումները	120
Մաս 5	
Սոցիալ-հոգեբանական անոմիայի և արժեհամակարգի ճգնաժամի հաղթահարման մեթոդաբանությունը	163
Վերջաբան	176
Գրականություն	178

Նախաբան

Հասարակական հնչեղություն ունեցող խոշորամասշտաբ փոփոխությունների շարքին է դասվում պատերազմը, որն ամբողջովին խաթարում է ցանկացած հասարակության հոգեբանական ու բարոյական դիմագիծը, պատճառ է դառնում արժեքային համակարգի ճգնաժամի, հոգեկան խռովքի, սթրեսների, ներքին ու արտաքին կոնֆլիկտների, փարաբնույթ ասոցիալ, անոմիկ վարքաձևերի և փրամադրությունների առաջացման ու դրսևորման:

Հասարակական համակեցության ձևերի և անձի արժեհամակարգի վրա իր հետքն է թողնում ոչ միայն պատերազմական բուն գործողությունների ընթացքն, այլև՝ հետպատերազմյան բարդ ժամանակաշրջանը, երբ հասարակության անդամների շրջանում փոխվում է անձնային արժեքների և գնահատումների համակարգը: Առաջ են գալիս էկզիստենցիալ բնույթի այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ո՞վ եմ ես, ի՞նչ կարող եմ անել, ո՞ւմ կարող եմ վստահել, ինչպե՞ս պիտի ապրեմ, ի՞նչ կարող եմ փոխել և այլն, որոնք պահանջում են ոչ միայն անհապաղ, այլև ոչ ավանդական պատասխաններ ու լուծումներ:

Քանի որ այդ շրջանին հատուկ է հասարակական նոր իրողությունները ընկալելու, պատերազմի հետևանքները վերապրելու աճող պահանջմունքը և դրան ուղեկցող՝ անձի արժեհամակարգի որոշակի փոխակերպումը, ուստի պարահակն չէ, որ հասարակության մեջ անձի սոցիալականացման և կենսագործունեության հետպատերազմյան շրջանի ուսումնասիրությունը մեծ կարևորություն է ներկայացնում հասարակական փոքրեր գիտակարգերի համար: Այդ իսկ պատճառով հիմնախնդրի ուսումնասիրման հոգեբանական տեսանկյունն առավելապես ամբողջական ներկայացնելու համար անհրաժեշտ է ներառել նաև հասարակագիտական և մարդաբանական մի շարք գիտությունների, մասնավորապես, ազգագրության, պատմության, սոցիոլոգիայի, մեթոդաբանությունն ու գիտական խնդիրների լայն շրջանակները:

Ցանկացած հասարակության մեջ հետպատերազմական շրջանում իրականացվող արմատական փոփոխություններն անմիջականորեն ներազդում են հասարակության սոցիալական, տնտեսական, բարոյահոգեբանական մթնոլորտի, բնակչության հոգեվիճակների ու վարքի վրա: Առաջ են գալիս սոցիալ-հոգեբանական մարզինալացման երևույթներ, ակտիվանում կամ փոխակերպվում են հոգեբանական պաշտպանական մեխանիզմները՝ ծնելով մինչպատերազմյան շրջանում արմատավորված և հասարակայնորեն նշանակալի վարքագծից տարբերվող անոմիկ դրսևորումներ, որոնք «սնվում են» հետպատերազմյան նոր իրողությունների սուբյեկտիվ ընկալումներով և ձևավորում նոր աշխարհայացք:

Հետպատերազմական շրջանն բնութագրվում է հոռետեսական տրամադրությունների զարգացմամբ, պատվասիրության անկումով, լարվածությամբ, անվստահությամբ վաղվա օրվա նկատմամբ, սթրեսներով ու կոնֆլիկտներով, հսկայական ծավալների հասնող միգրացիոն գործընթացներով, որոնք կազմալուծում են ազգի գոյապահպանության հիմքները: Հասարակության կոլեկտիվ կենսագործունեության գրեթե բոլոր՝ տնտեսական, սոցիալ-հոգեբանական, ազգային և այլ, բնագավառներում կարելի է տեսնել անոմիկ դրսևորումներ, որոնք հանգեցնում են, ընդհանուր առմամբ, հասարակության ապակայունացմանը և, մասնավորապես, Ես-ի արժեհամակարգի ճգնաժամին: Նման միտումների պայմաններում ակնհայտ է դառնում հոգեպաթոլոգիկ և սոցիալապես կենտրոնախույս երևույթների զարգացման հնարավորությունը:

Հետպատերազմական շրջանում գտնվող հասարակությունում, կապված անձի և սոցիալական խմբերի վարքային անոմիկ դրսևորումների, հոգեբանական ադապտացիայի ու դեզադապտացիայի, անձի արժեհամակարգի ահագնացող ճգնաժամի հետ, հրապապ է դառնում վերջիններիս շուրջ իրականացվող սոցիալ-հոգեբանական և անտրոպոլոգիական համատեղ հետազոտությունների կազմակերպումը, բացասականներուժի մարման ուղիների բացահայտումը, լուսաբանումն ու սոցիալ-հոգեբանական մեխանիզմների կիրառումը:

Առհասարակ հիմնախնդրին վերաբերող գիտական գրականության մեջ առանձնացվում են արժեքային համակարգի ուսումնասիրության սոցիոլոգիական, քաղաքագիտական, փիլիսոփայական ուղղություններ, որոնց ներկայացուցիչները հիմնախնդիրը դիտարկում էին բավականին լայն համատեքստում՝ ներառելով

սոցիալ-մշակութային կյանքի գրեթե բոլոր ոլորտները /Ռ. Փարկ, Է. Սթոունքվիստ, Դ.Գոլովենսկի, Ա.Գրին, Մ.Գոլդբերգ, Ե.Հյուգ, Հ.Ֆ.Դիկի-Կլարկ, Տ. Շիբուրանի, Ջ. Մանչինի և ուրիշներ/: Վերջին տարիներին արժեքային համակարգի վերաբերյալ ուսումնասիրության ասպարեզում նշանակալից ձեռքբերումներ ունեն ԱՊՀ երկրների հետազոտողները (Ե.Ստարիկով, Ա.Ի.Աթոյան, Ա.Ա. Ամիրովա, Ա.Գորբաչը, Վ.Ա.Շապինսկի, Ն.Ա.Ֆրոլովա, Ս.Ա.Կրասնոդենսկայան, Ի. Պոպովա, Ն. Նավջավանով, Ս.Պ. Բանկովսկայա և ուրիշներ):

Հետպատերազմական շրջանում անձի արժեքային համակարգի հիմնախնդիրը, շնորհիվ բազմաբովանդակ և բազմակողմանի հարցադրումների, գտնվում է տարբեր հետազոտողների՝ փիլիսոփաների, սոցիոլոգների, ազգագրագետների, մշակութաբանների և այլ գիտությունների ուշադրության կենտրոնում: Իրենց աշխատություններում երևույթին առնչվող տարբեր հարցեր են քննարկել Գ.Դ. Լուլովը, Ա. Ռ. Լուրիան, Դ.Վ. Չերբունինը, Լ.Ի. Բաևան և ուրիշներ:

Հարկ է նշել, որ անհամեմատ թույլ է ուսումնասիրված հետպատերազմական շրջանում անձի արժեհամակարգի ճգնաժամի հոգեբանական կողմը: Բացակայում է արժեքային համակարգի և անոմիայի դրսևորման միասնական ըմբռնումը և համապարփակ սահմանումը, լիովին վերհանված չեն արժեքային համակարգի ճգնաժամի և անոմիայի առաջացման, դրսևորումների սոցիալ-հոգեբանական բուն պատճառահետևանքային կապերը, մշակված չեն երևույթի բնութագրման մեթոդաբանական չափանիշները:

Հատկապես թույլ է ուսումնասիրված կամ գրեթե ուսումնասիրված չէ հիմնախնդրի գործնական կողմը. առանձնացված չեն հոգեբանական մեխանիզմները, մշակված չեն հետպատերազմական շրջանում անձի արժեքային համակարգի ճգնաժամին և անոմիայի դրսևորումներին բնորոշ վարքի բացասական պոպուլյարի մարման եղանակները, հստակեցված չեն սոցիալ-հոգեբանական աշխարանքների կառուցողական գործառույթները: Վերջիններս օրախնդիր են նաև մերօրյա հայ իրականության համար:

Նման պայմաններում հոգեբանական գիտակարգի առաջնահերթ խնդիրներից է ձևակերպել հետպատերազմական շրջանում արժեհամակարգի ճգնաժամի հասկացության ղաշվոր, սահմանել արժեհամակարգի ճգնաժամի շրջանակներում անոմիայի համապարփակ եզրույթն ու դրսևորման սոցիալական, հոգեբանական, ազգային առանձնահատկությունները, հետազոտել,

վերլուծել, իմաստավորել և գնահատել առաջադրված հիմնախնդրի պարճառահերկանքային կապերը, կատարել ընդհանրացումներ ու կանխատեսումներ, մշակել հետազոտվող հիմնախնդրի ուսումնասիրության միջառարկայական կապերի մեթոդաբանությունը և կանխանշել բացասական պոտենցիալի հաղթահարման ուղիներ: Այս հետազոտությունը կարող է արդյունավետ գործիք ծառայել առաջադրված խնդիրների հաղթահարման համար՝ գտնելու արժեքային համակարգի ճգնաժամի և անոմիայի դրսևորումների արդյունքում առաջ եկած սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների դեսպրոլկտիվ ուղղվածությունների մեղմացման ու չեզոքացման մեխանիզմները:

Մաս 1

Հետպատերազմական իրողության սոցիալ-հոգեբանական բնութագիրը

Հետպատերազմական իրողությունների ուսումնասիրությունները հոգեբանական գիտակարգում բազմաբովանդակ են և բազմաբնույթ: Հայտնի են հետազոտությունների մի քանի ուղղություններ, որոնք կարելի է ամբողջացնել երեք հիմնական՝ մակրո-, մեզո- և միկրո-մակարդակների ներկայացմամբ: Գործընթացների մակրո-մակարդակում պատերազմական և հետպատերազմական շրջափուլերի արտաքին միջավայրային, գլոբալ աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային գործոններն են, որոնք պայմանավորում են հասարակական գործընթացների զարգացումը կամ փոխակերպումը՝ պատերազմական գործողություններով պայմանավորված: Հետպատերազմական գործընթացների մեզո-մակարդակը ներկայացված է սոցիալական խմբերի կամ շերտերի ներսում սոցիալ-հոգեբանական գործընթացներով. դրանցից են անձանց և սոցիալական խմբերի միգրացիոն գործընթացները, սոցիալական կամ միջանձնային փոխգործողությունները՝ պայմանավորված հետպատերազմական իրողություններով: Գործընթացների միկրո-մակարդակը դրսևորվում է անձնային հատկությունների, սոցիալ-հոգեբանական նույնականացման և ինքնության առանձնահատկությունների շնորհիվ: Այս մակարդակում պատերազմն ինքնին և դրանից բխող հետպատերազմական շրջափուլի իրողությունները հոգեբանական տրավմայի աղբյուր են դառնում, ինչի հետևանքով հետպատերազմական շրջափուլում ի հայտ են

գալիս հոգեսոմատիկ փոփոխությունները և հոգեկանի հետտրավմատիկ երևույթները:

Հետտրավմատիկ սթրեսի, դրա հոգեֆիզիոլոգիական և մարդաբանական մեկնությունների շարքում դեռևս 1989 թվականին Գ. Էլդերը և Ե. Քլիփը բացահայտել են Երկրորդ համաշխարհային պատերազմի, ինչպես նաև՝ Կորեական պատերազմի, հետևանքով ի հայտ եկած հոգեբանական հետևանքները, որոնք կրում էին պատերազմի մասնակիցները [43]: Զ. Սոլոմոնը, Շ. Դեկելը և այլք հրատարակեցին իսրայելցի զինծառայողների շրջանում հետտրավմատիկ սթրեսի վերաբերյալ ուսումնասիրությունը, որում ընդգրկվեցին ինչպես պատերազմական գործողություններում մասնակից զինծառայողների, այնպես և ռազմական գերությունից ազատվածների վարքային առանձնահատկությունները, դրանցում արտահայտված հետտրավմատիկ սթրեսի հատկանիշները [71; 38]: Հետաքրքրական է այն փաստը, որ հետպատերազմական միջավայրի հոգեբանական ուսումնասիրություններում հեղինակները շեշտում են ոչ միայն կրած տրավմայի բացասական հետևանքները, այլև ուշադրություն են հրավիրում այն բանի վրա, որ պատերազմի ավարտին սոցիալական միջավայրի խորհրդանշական-տարածական, ինչպես նաև կառուցվածքային և վարքային նորագոյացությունները կամ փոխակերպումները կարող են հանգեցնել որոշակի դրական քոփինգ ռազմավարությունների մշակմանը, որոնք նպաստում են նոր հմտությունների ձևավորմանը և հետպատերազմական բարդ սոցիալ-հոգեբանական իրողությունների հաղթահարմանը [125; 157; 181; 182՝ 183; 193; 198]:

Այսպես, հայտնի է դարձել, որ հետտրավմատիկ սթրեսն ուղեկցում է մարտական գործողությունների գրեթե բոլոր մասնակիցներին: Պարզվել է նաև, որ հոգեբանական տրավմատիկ ապրումները կարող են պահպանվել երկար ժամանակ, այս կամ այն չափով իրենց զգացնել տալով նույնիսկ տասնամյակներ անց: Սակայն, այդ նկատառումների հետ մեկտեղ ձևակերպվեց նաև գաղափար առ այն, որ հետպատերազմական շրջափուլում ի հայտ եկած թե բացասական, և թե դրական հոգեբանական երևույթները զարգանում են համակարգային կերպով՝ արտահայտվելով անձի աշխարհայացքում, արժեհամակարգում և հաղորդակցական դաշտում: Մարտա-

կան գործողությունների և դրանց հոգեբանական հետևանքների վերաբերյալ խորքային վերլուծություններ են կատարել Կ. Օլդուինը, Ս. Քեմփբելը և այլ հեղինակներ, ովքեր ուսումնասիրել են հետպատերազմական միջավայրը և պատերազմի մասնակիցների հոգեկան առողջությունը, եկել են այն եզրակացության, որ ավելի ծանր և կյանքի համար էքզիստենցիալ վտանգ ներկայացնող մարտական գործողություններին մասնակցություն ունեցած զինծառայողների շրջանում պաշտպանական մեխանիզմները դրսևորվել են համալիր կերպով, ինչը հուշում է նրա մասին, որ ուժեղ սթրեսորներն առաջացնում են, համապատասխանաբար, ուժեղ հակազդեցություններ, մինչդեռ, մարտական գործողություններին մասնակցություն չունեցող անձանց շրջանում հետտրավմատիկ սթրեսը կրում էր համեմատաբար ավելի երկարաժամկետ և ցավագին բնույթ [21; 29]:

Հայտնի է նաև այն փաստը, որ Երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակից զինծառայողները հետպատերազմական փուլում առանձնացրել են կյանքի նորովի արժևորման, նոր նպատակների և պահանջմունքների ձևավորման գաղափարը՝ որպես առավել նշանակալի արժեքներ: Միաժամանակ, թվարկված արժեքները համեմատաբար թույլ են արտահայտվել պատերազմական գործողություններին անմիջական մասնակցություն չունեցած իրենց հասակակիցների շրջանում: Անշուշտ, այդ դիտարկումներն անհրաժեշտ է համալրել և վերլուծել՝ հաշվի առնելով մարտական գործողությունների տևողությունը, ինտենսիվությունը, այդ գործողությունների հետևանքով զինծառայողների մոտ առաջացած առողջական խնդիրները, հաշմանդամության առկայությունը և շատ այլ գործոններ, որոնք կարող են որակապես ազդել հետպատերազմական շրջափուլում անձի մոտ հաղթահարման ռազմավարությունների և պաշտպանական մեխանիզմների դրսևորումների վրա: Այդուհանդերձ, գիտական հրապարակում առկա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գոյություն ունեն որոշակի հոգեբանական գործընթացներ, որոնք դեռևս լիովին բացահայտված չեն և կարիք ունեն բազմակողմանի վերլուծության:

Հետպատերազմական իրողությունների սոցիալ-հոգեբանական բնութագրումները ամփոփվում են նոր սոցիալական տարածության և նոր սոցիալական ժամանակահատվածի ընկալումներում:

Հետպատերազմական շրջափուլի տարածա-ժամանակային ընկալումները, հոգեբանական նորագոյացությունները արտահայտվում են ինչպես անձի Ես-կոնցեպցիայի, այնպես և զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների կառուցվածքում, հանգեցնում են սոցիալական միջավայրի և սեփական անձի նորովի ընկալմանն ու արժևորմանը [200; 218; 221; 237]: Հետպատերազմական իրողությունների սոցիալ-հոգեբանական հետազոտության տեսանկյունից կարևորվում է սոցիալական միջավայրի ուսումնասիրման միջոցառումների մոտեցումը, որը նպատակ ունի բացահայտելու բնության, աշխարհի և սոցիումի հետ անձի հարաբերությունների էական հիմքերը: Դա թույլ կտա խոսել ոչ միայն հետպատերազմական փուլում ֆիզիկական տարածության կամ միջավայրի ընկալման, այլև անձի վարքագծի սոցիալ-հոգեբանական ու մշակութային կողմնորոշման, վարքագծում արտահայտվող բացասական ներուժի հաղթահարման, ինչպես նաև՝ հետպատերազմական հասարակությունում անձի կենսագործունեության կազմակերպման մասին [247; 257]:

Գիտական աղբյուրներում հետպատերազմական իրողությունները բացահայտվում են հիմնականում ոլորտային հետազոտություններում, որոնցում ներկայացվում են տեսական և մեթոդաբանական տարբեր մոտեցումներ: Սոցիալ-հոգեբանական և մարդաբանական գիտակարգերում հետպատերազմական իրողությունները դիտարկվում են սոցիումի մասին աշխարհայացքային պատկերացումների միջոցով, որոնց հիմքում ընկած են սոցիալական միջավայրի կառուցման տարբեր ձևերը: Այսպես, Յու. Մ. Լոտմանը [199], Վ. Ն. Տոպորովը [246], Տ. Վ. Տոպորովան [248], Ն. Դ. Արուսյունովան [124], Ի. Բ. Լևոնտինան ներկայացնում են սոցիալական միջավայրի և դրանում տեղի ունեցող փոփոխությունների հոգեվեգվաբանական և սեմիոտիկ նշանակությունները [173]: Միջավայրի սոցիալ-տարածական և նշանային հատկանիշներին են առնչվում նաև բազմաթիվ մշակութաբանական, պատմական և ազգագրական աշխատություններ, որոնք հետազոտում են էթնոսների զարգացման պատմական փուլերը, դրանցում արտահայտված պատերազմական և հետպատերազմական շրջափուլերը: Այսպես, Վ. Լ. Կազանսկին [178], Ա. Ախիեզերը [129; 130], Վ. Լ. Գլազիլը [155] և Վ. Ա. Կոլոսովը [184] հետպատերազմական միջավայրի տա-

րաժական բնութագրերը կապում են մարդաբանության, ազգային ինքնագիտակցության և մշակույթի յուրահատկության հետ: Նման յուրահատկություններից առանձնահատուկ տեղ են զբաղեցնում այն երևույթները, որոնք առավել մեծ նշանակություն ունեն հետպատերազմական միջավայրի կառուցվածքային և անվտանգային հատկանիշների ամրապնդման տեսանկյունից: Դ. Զիմինը հատուկ ուսումնասիրել է Երկրորդ աշխարհամարտից հետո հասարակական կարգի պահպանության սոցիալ-հոգեբանական և հասարակագիտական առանձնահատկությունները՝ կարծիք հայտնելով, որ այդ երևույթները որոշիչ են հետպատերազմական շրջափուլում բացասական սոցիալական իրողությունների հաղթահարման համար [176]: Նման կարծիք է հայտնել նաև Ռ. Գերմանը, ով պատերազմական և հետպատերազմական իրողություններից կարևորել է հատկապես հանցագործությունների աճը և դելիկվենտ վարքագիծը, որի նվազեցմանն ուղղվում է հասարակական կարգի պահպանության ողջ համակարգը [154]:

Ամերիկյան հետազոտողները հետպատերազմական իրողությունները հիմնականում գնահատում են անձի և սոցիալական խմբերի համար ստեղծվող նոր հնարավորությունների տեսանկյունից՝ այնպիսի հնարավորությունների, որոնք անհնար կլինեին նախապատերազմական հասարակությունում: Նման գնահատականների համար հիմք էին կազմում Երկրորդ աշխարամարտի այլ մասնակից երկրներում ընթացող հետպատերազմական իրողությունների հետ սոցիալ-տնտեսական և հոգեբանական համեմատական դիտարկումները. ամերիկյան հասարակությունը մյուս երկրներից համեմատաբար քիչ էր տուժել պատերազմի ընթացքում, ուստի հետպատերազմական իրողությունների սոցիալ-հոգեբանական բնութագրերը ստացան ուրույն տեսքն ու բովանդակությունը [23; 26; 95]: Տնտեսագիտական հետազոտությունները ցույց տվեցին, որ ամերիկյան հասարակությունը հետպատերազմյան տարիներին դարձավ ավելի հարուստ, քան ամերիկացիների մեծ մասը կարող էր պատկերացնել պատերազմից առաջ կամ դրա ընթացքում: Հանրային քաղաքականությունը, որն ամրագրվեց 1944 թվականին ընդունված այսպես կոչված GI իրավունքների օրինագծում, հիմնված էր սոցիալական փաթեթների ձևավորման և տարածման գաղա-

փարի վրա. գումար էր տրամադրում պատերազմի վետերաններին ուսման, տներ և ֆերմաներ գնելու համար: Չնայած նրան, որ նման հանրային քաղաքականությունն, ընդհանուր առմամբ, ունեցավ գերազանցապես ոչ թե տնտեսական, այլ հոգեբանական նշանակություն, այնուամենայնիվ, այն օգնեց պատերազմից վերադարձող վետերաններից շատերին ինտեգրվելու հասարակությունում և բա-րելավելու իրենց սոցիալ-տնտեսական կարգավիճակը:

Ոչ բոլոր ամերիկացիներն էին հավասարապես ներառվում հետպատերազմական կյանքի այս հնարավորություններին և աճող տնտեսական բարգավաճմանը: Ընդհանուր տնտեսական բարգավաճման պատկերն ու այն վերընթաց սոցիալական զարգացումը, որը գերազանցապես վերաբերում էր սպիտակամորթ ամերիկացիներին, հանգեցրեց որոշակի սոցիալ-հոգեբանական նորագոյացությունների ձևավորմանը: Արդյունքում, աֆրոամերիկացիները, իսպանախոս ամերիկացիները և այլ էթնիկ համայնքների ներկայացուցիչներ սկսեցին դրսևորել սոցիալական ակտիվություն՝ փորձելով նվաճել իրենց լիարժեք ազատությունները և քաղաքացիական իրավունքները, որոնք երաշխավորված էին Անկախության հռչակագրով և ԱՄՆ Սահմանադրությամբ: Այս տեսանկյունից, ամերիկյան հասարակության ներսում հետպատերազմական կարևոր իրողություններից կարելի է առանձնացնել սոցիալական շարժունությունը, որը խթան հանդիսացավ սոցիալական միջավայրի արագ զարգացմանն ու հետպատերազմական շրջափուլի հաղթահարմանը: Այդ տարիների հետազոտողների գերազանցապես լավատեսական կանխատեսումները երկրի զարգացման և ԱՄՆ քաղաքացիների սոցիալ-տնտեսական բարգավաճման ու հոգեբանական բարեկեցության վերաբերյալ սկսեցին փոփոխվել այն բանից հետո, երբ ամերիկյան հասարակությունը բախվեց նոր իրողություններին: Պատերազմի ավարտից հետո մոտ երկու տարվա ընթացքում նոր մարտահրավերներ և սպառնալիքներ ի հայտ եկան, որոնք քայքայեցին այդ կանխատեսումները: 20-րդ դարի կեսերից սկզբնավորվող Սառը պատերազմի շրջափուլը որոշ չափով ձևավորեց նոր իրողություն, երբ ներհասարակական սոցիալ-հոգեբանական և տնտեսական գործընթացները սկսեցին ընկալվել միջազգային աշխարհաքաղաքական գործընթացների միջոցով՝ սրվեցին

«մենք-նրանք», «յուրային-օտար» հակադրությունները, իսկ Երկրորդ աշխարհամարտին հաջորդող հետպատերազմական շրջափուլը աստիճանաբար վերափոխվեց «սառը հակամարտող» քաղաքակրթությունների շրջափուլի [51]:

Հետպատերազմական բացասական երևույթները որքան էլ հանդիպում են ամենուրեք, այդուհանդերձ, առավելապես հատուկ են էթնիկապես տարասեռ հասարակություններին, որտեղ անհնար է գծել «ազգային» սահմանները՝ առանց վնաս պատճառելու այլ էթնիկ խմբերին և, հետևաբար՝ առանց նախապայմաններ ստեղծելու լուրջ հակամարտությունների համար» [224]: Այսպիսի միջավայրի օրինակ է հանդիսանում Բոսնիա և Հերցեգովինան՝ նախկին Հարավսլավիայի մի հատվածը, որը բազմազգ է և բազմամշակութային, բնակեցված է հիմնականում սերբերով, խորվաթներով և բոսնիացիներով [45; 70]: Հետազոտությունները ցույց են տալիս, որ հետպատերազմական իրողությունների սոցիալ-հոգեբանական բնութագրումներն այս տարածաշրջանում խորը պատմական արմատներ ունեն, որոնք առնչվում են երկիրը բնակեցնող ազգերի էթնոգենեզի տեսություններին: Մշակութային, էթնիկական և ազգային ինքնության բազմաշերտ առանձնահատկությունները, դժվարին պատմական անցյալն ու ներկայի ոչ միանշանակ ընկալումները հող են պատրաստել հետպատերազմական շրջափուլում բնութագրվող սոցիալ-մշակութային և հոգեբանական ճգնաժամի առաջացման համար: Ուստի, հետպատերազմական իրողությունների սոցիալ-հոգեբանական բնութագրումների ուսումնասիրման նպատակով կարող ենք օգտագործել համեմատական պատմական մոտեցումը և վերլուծել այն գործոնները, որոնք ազդել են սերբական մշակութային ինքնության ձևավորման վրա, ինչպես նաև այն գործոնները, որոնք առաջացրել են Բոսնիա և Հերցեգովինայի սերբերի մշակութային ինքնության ճգնաժամը [222; 273]:

Էթնիկ ինքնությունը սերտորեն կապված է էթնիկ խմբի ընկալման հետ, երբ անձն իրեն նույնացնում է որոշակի սոցիալական խմբի հետ, որոնք միավորված են ընդհանուր լեզվով, պատմական ժառանգությամբ, տնտեսական հարաբերություններով, ինքնագիտակցության հատկանիշներով, մշակութային և կրոնական ավանդույթներով [47; 187; 201]: Բնութագրելով էթնիկ ինքնության էական

հատկանիշները՝ ազգագրագետ Մ.Ն. Գուբոգլոն նշում է, որ ազգապահպան գործոնները շեշտադրվում են հասարակության ներսում էթնիկ աֆիլիատիվ նշանակություն ունեցող երևույթների գնահատման միջոցով, երբ մարդիկ գնահատում են էթնիկ պատկանելիության այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ընդհանուր լեզուն, պատմական ճակատագիրը, ավանդական մշակույթը, ֆիզիկական և սոցիալական տարածքը, մշակութային բնութագրիչները՝ ազգային հագուստը, սնունդը, կենսակերպը, ծեսերը և այլն [160]: Մի շարք հեղինակներ իրավացիորեն շեշտում են, որ էթնիկ ինքնությունը ձևավորվում և փոխանցվում է ընտանեկան, սոցիալական և միջսերնդային կապերի միջոցով [236; 249]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրիը բնակեցնող երեք հիմնական էթնիկ խմբերը՝ սերբերը, բոսնիացիները և խորվաթները, կազմում են բնակչության շուրջ 98,5%-ը, ապա Ավստրո-Հունգարիայի տիրապետության շրջանում տեղի ունեցող ռազմական բախումները հանգեցրել են այդ երեք քաղաքակրթությունների՝ հարավսլավոնական, արևմտյան և արևելյան, մշակութային ինքնության ճգնաժամի: Ինչպես նշում է Է.Կ. Վյազեմսկայան, «սերբերը ձգտում էին հակադրվել խորվաթներին, խորվաթները՝ սերբերին, նրանք էլ՝ այլ մահմեդականներին, կրոնական և մշակութային տարբերությունները սկսեցին շահագործվել՝ դրանով իսկ խախտելով սոցիալական համակեցության հիմնական մշակութա-բարոյական և սոցիալ-հոգեբանական նորմերը [153]: Հասարակության ներքին կյանքը, հատկապես պատերազմական գործողություններից հետո, սկսեց կորցնել նախկին նորմերին և վաքականոններին հետևելու հատկանիշները. տարբեր էթնիկ խմբերի գաղթը, նոր իրողության մեջ իրավիճակային լուծումներով առաջնորդվելը, հոգեբանական հարմարման դժվարությունները և ապագայի հանդեպ սպասելիքների անորոշությունը դարձան բնորոշիչ: Այլ խոսքերով, հետպատերազմական ժամանակահատվածը այդ երկրում գերազանցապես բնութագրվեց բացառապես նոր հատկանիշներով, երբ խախտվեց սոցիալական համակեցության սոցիալ-մշակութային և հոգեբանական հավասարակշռությունը, իսկ անհատական վարքագծում նկատելիորեն աճեցին մարզինալ և դելիկվենտ գործոնները:

րը: Այսպիսով, հետպատերազմական իրողությունների սոցիալ-հոգեբանական բնութագրումներից շեշտադրվեցին՝

- հետպատերազմական միջավայրի կառուցվածքային և անվտանգային նոր ընկալումները,
- պատմական հիշողության աղավաղումները,
- լեզվամտածողության փոխակերպումը,
- էթնոմշակութային ծեսերի անտեսումը,
- ընտանեկան վիճակագրության դետրուկտիվ միտումները,
- ներքին և արտաքին միգրացիոն գործընթացների աճը,
- սոցիալական շարժունությունը և բևեռացումը,
- սոցիալական ակտիվության հակասական դրսևորումները տարբեր սոցիալական խմբերում,
- «մենք-նրանք», «յուրային-օտար» հակադրությունների սրացումը,
- վարքագծային նորմերի ձևախեղումները,
- հանցագործությունների աճը և դելիկվենտ վարքագիծը,
- Ես-կոնցեպցիայի և ինքնության փոխակերպումները,
- հետտրավմատիկ սթրեսային խանգարումները,
- արժեքային ճգնաժամը:

Հետպատերազմական հասարակությունում արժեհամակարգի ճգնաժամի պատճառահետևանքային կապերը հասկանալու համար անհրաժեշտ է վեր հանել արժեքային այն շեշտադրումները, որոնք առավել բնութագրական են հետպատերազմական շրջափուլում և ուղղորդում են անձանց և սոցիալական խմբերին պատերազմի արհավիրքը հաղթահարելու և բնականոն կյանքին վերադառնալու ձգտումներին:

Արժեքային ճգնաժամի առաջացման կամ խորացման ցուցիչներից է **պատմական հիշողության փոխակերպումը**: Ճգնաժամային են համարվում պատմական հիշողության էթնիկ և մշակութային աֆիլիատիվ աղավաղումները.

- մի դեպքում անձը մերժում կամ ստորադասում է սեփական միջավայրի արժեքները և կողմնորոշվում է օտար միջավայրերի արժեքներին կամ կարծրատիպերին,

- մյուս դեպքում տեղի է ունենում սեփական արժեքային համակարգի գերազնահատում, ինչի արդյունքում ծիսականացվում են աֆիլիատիվ արժևորման հոգեբանական մեխանիզմները [8; 10; 16]:

Պատմական հիշողության փոխակերպման գործընթացը կապված է հանրային դաշտում արժեքային նորագոյացությունների կամ փոփոխությունների հետ՝

- առաջանում են պատերազմական ժամանակի հերոսացման նշաններ,
- իրական ժամանակն ու տարածությունն ընկալվում են մինչև հետպատերազմական շրջափուլերի հակադրության տեսանկյունից,
- առավել ամրապնդվում են այն արժեքները, որոնց միջոցով հանրային դաշտում հիմնավորվում է պատերազմի ելքը:

Հետպատերազմական հասարակություններում տեղի են ունենում արժեհամակարգային նոր շեշտադրումներ, որոնք աչքի են ընկնում ոչ միայն հանրային դաշտում ամրապնդված արժեքների փոփոխություններով, այլև՝ նոր արժեքային կողմնորոշումների ձևավորմամբ: Արժեքային այդ փոխակերպումներն ինքնին նշանավորում են արժեհամակարգի ճգնաժամը, որը հետպատերազմական հասարակությունում բնութագրվում է արժեքային կողմնորոշումների և պահանջմունքների նոր շեշտադրումների միջոցով [244; 245; 264; 272]: Նման շեշտադրումներից է պատերազմի հետևանքների և հետպատերազմական միջավայրում տեղի ունեցող հասարակայնորեն **նշանակալի իրողությունների հանրային ճանաչման արժեքային պահանջմունքը**: Այսպես, սերբական հետպատերազմական միջավայրում ՋԼՄ-ները լայնորեն շրջանառում էին գաղափար առ այն, որ սերբերը պետք է իմանան Սրբերենիցայի ջարդերի մասին ողջ ճշմարտությունը [23; 61]: Նմանատիպ արժեքային շեշտադրումներ նկատելի են եղել Հյուսիսային Իռլանդիայի, Հարավաֆրիկյան պետության և շատ այլ հետպատերազմական միջավայ-

րերում [75; 87]: Ճշմարտախոսության արժեքային պահանջմունքը, որպես կանոն, հուզականորեն հագեցած է, իսկ հասարակական կարծիքները հիմնականում վկայակոչում են մարդու իրավունքների, փրկագնման և ազատագրման հասկացությունները [113]: Այդ իսկ պատճառով հետպատերազմական տարբեր միջավայրերում շեշտադրվում է **պատերազմական գործողությունների մասին զանազան պատումների շարադրման, վերապատման արժեքային կողմնորոշումը**, ինչը դիտվում է ոչ միայն որպես ճշմարտախոսության, ճշմարտությունն իմանալու արժեքային կողմնորոշման ճգնաժամային դրսևորում, այլև պատերազմը վերապրելու սոցիալ-հոգեբանական կարևոր մեխանիզմ: Պատերազմի վերապատման արժեքային կողմնորոշումը հաճախ դրսևորվում է ծիսականացված վարքային մոդելի միջոցով. առաջ է գալիս «ոչինչ չի մոռացվում, ոչ մեկը չի մոռացվում» արժեքային կարգախոսը, որն ինքնին ուղղված է հետպատերազմական շրջափուլում պատմական հիշողության ձևափոխմանը և վերակառուցմանը [34]: Այդ կարգախոսով ձևավորվող վարքագիծը ենթադրում է, մի կողմից, պատերազմական գործողությունների ընթացքում բացահայտված առավել նշանակալի արժեքների պահպանում / «սառեցում», իսկ մյուս կողմից, այդ արժեքների վերապրում / «տեղափոխում» պատմական հիշողության տիրույթ:

Հետպատերազմական միջավայրում արժեքային նոր շեշտադրումները անցնում են ես-ի պրիզմայով: Այսպես, պատերազմի վերապատման / հանրայնացման, պատմական հիշողության մեջ նշանակալի իրողությունների ամրապնդման գործընթացներն առավել նպաստավոր են դառնում պատերազմի վերապրման համար, եթե ուղեկցվում են սեփական ես-ի հանդեպ արդար հանրային վերաբերմունքի ընկալումներով: Որքանով անձը և սոցիալական խմբերը իրենց հանդեպ հանրային վերաբերմունքն ընկալում են որպես արդար և ճշմարիտ, այդքանով հակված են դրսևորելու համագործակցային և ասերտիվ վարքագիծ, ինչը կարող է մեծ ազդեցություն ունենալ հետպատերազմական շրջափուլի ճիշտ արժևորման և հաղթահարման գործընթացի վրա՝ հավասարակշռելով պատերազմող կողմի հանդեպ ներման և վրեժխնդրության զգացմունքները և հանգեցնելով փոխզիջումային համակեցության սկզբունքների

արժևորմանը: Ինչպես նշել է Հարավային Աֆրիկայի Ճշմարտախոսության և հաշտեցման հանձնաժողովի (Truth and Reconciliation Commission / TRC) փոխնախագահ Ալեքս Բորեյնը 1999 թվականին Հյուսիսային Իռլանդիա կատարած այցի ժամանակ. «Ինչպես Հյուսիսային Իռլանդիայում, այնպես և Հարավային Աֆրիկայում մենք պարզապես պետք է սովորենք միասին ապրել (պատերազմող կողմի հետ – խմբ.՝ հեղ.), հակառակ դեպքում մենք կշարունակենք սպանել միմյանց: Դա խիստ ընտրությունն է: Մենք կարող ենք չընդունել միմյանց, բայց մենք պետք է գոյակցենք փոխադարձ հարգանքով» [22]:

Պատերազմական գործողություններից անմիջապես հետո՝ վաղ հետպատերազմական փուլում առավել կարևորվում են անվտանգության, արդարության և սոցիալական արժեքները: Վաղ հետպատերազմական շրջափուլը սկսվում է անմիջապես պատերազմական գործողությունների ավարտին պես: Այդ շրջափուլի տևողությունը կարելի է բնութագրել՝ հաշվի առնելով արժեքների գնահատման, արժեքային կողմնորոշումների շեշտադրման դինամիկան: Վաղ փուլում հասարակության մեջ աչքի են ընկնում այն արժեքները, որոնք առավելագույնս ունենալով էին պատերազմի շրջափուլում և անձի ու սոցիալական խմբերի համար կրում են կենսաապահովման նշանակություն: **Արժեքային ճգնաժամն այս փուլում դրսևորվում է ոչ միայն կենսաապահովման նշանակության արժեքների և բազիսային պահանջմունքների արժևորմամբ, այլև դրանց անիրականանալի, անհասանելի լինելու գնահատականներով:** Քանի որ հետպատերազմական շրջափուլում ձևավորվում են նոր սոցիալական խմբեր՝ կազմված փախստականներից կամ միգրանտներից, ապա աստիճանաբար կարևորվում են նաև սոցիալական հարմարվողականության և ինտեգրման արժեքները:

Ուշ հետպատերազմական փուլի հաղթահարման ժամանակահատվածը հատկապես հետաքրքիր է խաղաղության, անվտանգության և մարդու իրավունքների վերաբերյալ անհատական ընկալումների գնահատման համար: Պատերազմի ժամանակաշրջանի փորձառությունները կարող են փոխել սոցիալական գործընթացները, իսկ **արժեքային համակարգի ճգնաժամն այս փուլում գերազանցապես միտված է խթանելու հաղորդակցական բևեռացու-**

մը և փոխելու անհատի վերաբերմունքը՝ հանգեցնելով արժեքների ծայրահեղականացմանը կամ մարգինալացմանը [30; 114]: **Ուշ հետպատերազմական փուլում սոցիալ-հոգեբանական հաշտեցման ներմիջավայրային բարդույթները, որոնք արտահայտվում են դեզինտեգրացիայի, սոցիալական խմբերի և շերտերի միջև հակոտնյա արժեքների խորացման միջոցով, կարող են խստացնել նախապաշարմունքները և միջխմբային թշնամանքը** [67]: Հաթչիսոնը (2014) ցույց է տալիս, որ ոչ կոնֆորմիստական խմբերի անհատական հանդուրժողականությունը նվազում է կոնֆլիկտի ինտենսիվության հետ՝ որքան մասշտաբային և ուժգին է եղել պատերազմը, այնքան տուժում է հանդուրժողականության արժևորումը [66]: Պատերազմող խմբերը կարող են նույնիսկ տարբեր կերպ ընկալել հակամարտության բնույթը [30]: **Ուշ հետպատերազմական փուլում արժեքային ճգնաժամն առանձնանում է նաև էթնոաֆիլիատիվ աղավաղումներով:** Դիրստադի ուսումնասիրությունը նախկին Հարավսլավիայի իրավահաջորդ երկրների վերաբերյալ ընդգծում է, որ էթնիկ հակամարտությունը միշտ չէ, որ մեծացնում է էթնո-ազգայնականությունը [42]: Պատերազմի ելքը կարող է նաև նպաստել ազգային Ես-ի բացսական վերակառուցմանն ու փոխակերպմանը, երբ անձը նորովի է փորձում արժևորել յուրային էթնիկ խումբը հետպատերազմական միջավայրում:

Հետպատերազմական՝ վաղ և ուշ փուլերի, տարանջատումը բավականին պայմանական է: Որոշ հակամարտություններին կարող են զուգահեռ հաջորդել ինչպես բազիսային կենսաապահովման արժեքների և պահանջմունքների ճգնաժամը (վաղ փուլ), այնպես էլ՝ սոցիալական միջավայրի ստրատիֆիկացիոն և դեզինտեգրատիվ փոխակերպումները (ուշ փուլ): Այդուհանդերձ, տարբեր երկրներում անցկացրած հետազոտությունների գերակշիռ մասը հուշում է նրա մասին, որ հետպատերազմական շրջափուլում արժեքային ճգնաժամի սկզբնական շրջանում առավել ակնառու են դառնում անհատական անվտանգային և կենսաապահովման նշանակության արժեքների աղավաղումները և փոխակերպումները [17; 24; 32; 33; 40; 49; 50; 52; 72; 85; 88; 112]:

Արժեքային ճգնաժամի հաջորդ փուլն արդեն արտահայտվում

է խորքային սոցիալ-հոգեբանական՝ հաղորդակցական, ադապտացիոն և ինտեգրատիվ գործընթացների արժևորման տրանսֆորմացիայով և վերակառուցմամբ:

Հետպատերազմական հասարակությունում արժեքային ճգնաժամը դրսևորվում է հետկոնֆլիկտային միջավայրի սուբյեկտիվ ընկալումներում: Այդ ընկալումները ձևավորվում են հիմնականում սուբյեկտիվորեն գնահատվող բարեկեցության, կյանքի իմաստների և հետկոնֆլիկտային խաղաղության հասկացությունների շուրջ: Ուստի, արժեքային ճգնաժամը կարող է պայմանավորված լինել՝

- մինչպատերազմական շրջանում պատերազմող խմբերի միջև հարաբերություններով,
- խաղաղության արժեքային գնահատմամբ,
- երկարատև կամ «անվերջ» պատերազմի մասին պատկերացումներով:

Այս գործոնները թույլ են տալիս վերլուծել հետպատերազմական միջավայրում խաղաղության և կայունության տարբեր փորձառությունները և շաղկապել դրանք արժեքային համակարգի փոխակերպումների հետ: Ինչպես տեսանք, հետպատերազմական փոխակերպումները ներառում են գործոնների լայն շրջանակ, որոնք վերաբերում են ոչ միայն պատերազմին վերադառնալու ռիսկին, այլև հետպատերազմական միջավայրի, դրանում հետպատերազմական խաղաղության վերաբերյալ անձանց սուբյեկտիվ ընկալմանը: Մանրամասնում ենք վերը նշված գործոններից յուրաքանչյուրը:

Առաջին գործոնը ներառում է պատերազմական փոխադեցություններում ներգրավված անձանց և սոցիալական խմբերի միջմշակութային և միջէթնիկ փոխհարաբերությունների ողջ շրջանակը, որի արժեքային գնահատումը կախված է նրանից, թե որքանով են ամրապնդված պատմական հիշողության մեջ երկու էթնիկ հանրույթների միջև, մի կողմից, պատերազմական փոխհարաբերությունները և, մյուս կողմից, բարեդրացիական / հարևանական փոխհարաբերությունները: Հասարակական խմբերի փոխհարաբերությունների մասին տեղեկատվությունը, որը սովորաբար կապ-

ված է նախկինում պատերազմող կողմերի մասին պատկերացումների հետ, հուշում է հետպատերազմական շրջափուլում փոխհարաբերությունների կարգավորման ընթացքի մասին: Որքան կարճ ժամանակահատված է հաջորդել պատերազմին, այնքան կենդանի են պահպանվում պատմական հիշողության մեջ հակամարտությանը նախորդող բացասական երևույթները, փոխհարաբերություններում առկա երբեմնի հակասություններն ու հակադրությունները: Պատերազմական գործողությունների՝ հեռավոր անցյալում մնալու դեպքում, միջմշակութային հակասությունները ծիսականացվում են և պահպանվում են պատմական հիշողության մեջ գերազանցապես առասպելական մտածողության միջոցով [4; 5; 6]:

Արժեքային ճգնաժամը պայմանավորող երկրորդ գործոնը խաղաղության մասին պատկերացումների միջոցով բնութագրվող հետպատերազմական միջավայրի անվտանգության մակարդակի գնահատումն է: Անվտանգության գնահատումը խաղաղության բնութագրման հիմնական տարրն է [39]: Մի շարք հեղինակներ [2; 3; 31; 46; 48; 94] գտնում են, խաղաղության ընկալումները, թեև որոշ չափով տարբերվում են պատերազմական և ոչ պատերազմական միջավայրերի բնակչության շրջանում, այդուհանդերձ, խաղաղության գնահատման և արժևորման գործում որոշիչ են դառնում անձնական և ընտանեկան անվտանգության արժեքները: Ոչ պատերազմական հասարակություններում արված հարցումները ցույց են տալիս, որ խաղաղությունը գերազանցապես գնահատվում է «փողոցներում ազատ քայլելու» կամ «խանութ գնալու համար ապահով զգալու» ձևակերպումներով: Սակայն հետպատերազմական միջավայրերում խաղաղությունը գնահատվում է ոչ թե կենցաղային/անհատական կյանքի, այլ առավելապես՝ ողջ համայնքի կամ հասարակության անվտանգության ապահովման տեսանկյունից: Այսպես, հետպատերազմական վաղ փուլում խաղաղությունը հասկացվում է պատերազմական գործողությունների վերսկսման անհանրինության և երկիրը պաշտպանող բանակի կամ զինված ուժերի ֆիզիկական անվտանգության գաղափարների միջոցով: Հետպատերազմական ուշ փուլում խաղաղության նոր բաղադրիչներ են ի հայտ գալիս, ինչպիսիք են՝ նախկինում պատերազմող կողմերի միջև շփման հնարավորությունը, փոխադարձ առևտրային և սո-

ցիալական փոխգործողությունները, այլ: 2020 թվականի Արցախյան պատերազմից հետո իրականացված հետազոտությունը ցույց տվեց, որ հայ հասարակության շրջանում պատերազմին հաջորդող 3 տարիների ընթացքում գերիշխում էին խաղաղության մասին հետպատերազմական վաղ փուլին բնորոշ գնահատումները:¹

Երրորդ գործոնն արտահայտում է «անվերջ» պատերազմի ֆենոմենը որպես հետպատերազմական փուլում արժեքային ճգնաժամի բնութագրիչ: Ժամանակակից հասարակություններում միջէթնիկ կամ միջազգային կոնֆլիկտների ժամանակագրությունը ցույց է տալիս, որ պատերազմական գործողությունները հաճախ դրսևորվում են հատվածայնությամբ, հրադադարի և ռազմական էսկալացիայի ժամանակահատվածների պարբերականությամբ, տեղեկատվական հակամարտության միջոցների երկարատև կիրառմամբ: Նման գործընթացները հանգեցնում են հաճախ պատերազմի սկզբի և վերջի հստակ տարանջատման անկարողությանը, իսկ բուն կոնֆլիկտը ստանում է «առանց հաշտության, առանց պատերազմի» ձևակերպումը [234]:

Այս գործոններից յուրաքանչյուրը ներկայացնում է պատերազմի ավարտից հետո սոցիալական միջավայրի փոփոխությունների սուբյեկտիվ հետահայաց գնահատականը: Խաղաղության վերաբերյալ անձանց գնահատականները պարտադիր չէ, որ հիմնված լինեն օբյեկտիվ զարգացումների կամ պատերազմի ավարտի պայմանների ճշգրիտ հիշողության վրա: Բայց դրանք առանցքային են հասկանալու համար, թե ինչպես են անհատները գնահատում իրենց ներկայիս իրավիճակը՝ հետպատերազմական շրջափուլի մասին իրենց հիշողությունների հետ համեմատած: Անցյալի հանդեպ դրական հիշողությունների պահպանման դեպքում հետպատերազմական ներկան համեմատաբար ավելի ցածր է արժևորվում, գնահատականները գերազանցապես հոռետեսական երանգներ են ստանում: Արժեքային ճգնաժամի պայմաններում այդ երևույթները կարող են արտահայտվել «անվտանգությունից հարաբերական զրկվածության» զգացման միջոցով: Այն միջավայրերի ներ-

1 Հետազոտությունն իրականացվել է 21T-5A311 ծածկագրով «Հետպատերազմական շրջանում անձի արժեհամակարգի ճգնաժամի և անոմիայի հիմնախնդիրը և հաղթահարման մեթոդաբանությունը» գիտական թեմայի շրջանակներում:

կայացուցիչները, ովքեր հետպատերազմական փուլում իրենց ընկալում են որպես պարտված կողմ, ամենայն հավանականությամբ, ավելի շատ դժգոհություն կցուցաբերեն խաղաղության ներկայիս գնահատականներում, քան պատերազմում հաղթանակած կողմը: Այս գնահատականների արմատավորումը հետպատերազմական շրջանում կարող է նպաստել «անհավասար խաղաղության» մասին ընկալումներին, որտեղ հասարակության տարբեր սոցիալական խմբեր տարընկալումներով են գնահատում ձեռք բերված անվտանգությունը՝ ինչն արդյունքում խորացնում է հետպատերազմական հասարակության մեջ արժեքային ճգնաժամը [110; 122]: Այս խնդրին մանրամասն անդրադարձել են մի շարք հեղինակներ, ովքեր ուսումնասիրել են Շրի Լանկայում հետպատերազմական շրջափուլը, դրանում արտահայտված անձանց և սոցիալական խմբերի արժեքային ճգնաժամը: Արժեքային ճգնաժամի առաջացման հարցը հատկապես արդիական է այն երկրների համար, որտեղ պատերազմն ավարտվել է մի կողմի ակնհայտ հաղթանակով մյուսի նկատմամբ [104; 106; 109]: Տիպիկ դեպք է Շրի Լանկայի քաղաքացիական պատերազմը, որն ավարտվեց 2009 թվականին թամիլների հանդեպ իշխող ուժի՝ սինհալցիների, տարած հաղթանակով: Արտաքինից, պատերազմից մեկ տասնամյակ անց, նախկինում պատերազմող սինհալցիների և թամիլների հարաբերությունները կայուն էին և առանց լուրջ առճակատումների: Այնուամենայնիվ, որոշ հեղինակներ նշում են, որ երկար տարիների ընթացքում, ընդհուպ մինչև 2015 թվականը, թամիլների համար անվտանգության, մարդու իրավունքների դաշտը գործում էր որոշ սահմանափակումներով, իսկ այն ոլորտները, որտեղ նման սահմանափակումներ չկային, միևնույն է, թամիլների կողմից գնահատվում էին ավելի ցածր՝ սինհալցիների կողմից արված գնահատականների համեմատ [79; 96]: Պատերազմի ավարտին թամիլների մեծ մասը հայտնվեց անկայուն սոցիալ-տնտեսական և հոգեբանական պայմաններում՝ պատերազմի ընթացքում կորցնելով ընտանիքի անդամներին ու ընկերներին: Հետևաբար, հետպատերազմական հասարակությունում հասարակայնորեն նշանակալի ցանկացած դրական փոփոխություն կարող է դիտվել որպես հասարակական կյանքի բարելավում համեմատած պատերազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայ-

մանների հետ: Մյուս կողմից, հաղթանակած սինհալցիների շրջանում, ովքեր չեն ներգրավվել պատերազմական գործողությունների մեջ, թվում էր, որ արժեքային համակարգի բաղադրատարրերը պետք է մնային կայուն և ամբողջական: Այդուհանդերձ, արժեքային ճգնաժամի տարրերը նկատվեցին թե պարտված թամիլների, և թե՝ հաղթանակած սինհալցիների շրջանում: Մինչդեռ պարտված կողմը նկատելիորեն թերագնահատում էր հետպատերազմական շրջափուլում խաղաղության, մարդու իրավունքների և անձնական անվտանգության մակարդակը, հաղթանակած կողմը, հակառակն, ցուցաբերեց վերը նշված արժեքների գերագնահատում: Այլ խոսքերով, թե թամիլների, և թե սինհալցիների մոտ նկատվեց **արժեքների գնահատականներում անհամարժեքություն, ինչը ևս վառ ցուցիչ է հետպատերազմական շրջափուլում արժեքային ճգնաժամի առկայության համար:**

Ընդհանուր առմամբ, հաղթանակած մեծամասնության (սինհալացի) էթնիկ խմբի անդամները քաղաքացիական պատերազմի ավարտից հետո անվտանգության և մարդու իրավունքների բարելավումները ավելի դրական են գնահատում, քան պարտված փոքրամասնության (Շրի Լանկայի թամիլական) էթնիկ խմբի անդամները: Սակայն այդ դրական գնահատականները հաճախ իդեալականացվում էին, իսկ արժեքների բաղադրատարրերին տվում էին ծայրահեղ բարձր գնահատականներ: Եվ հակառակը, պատված թամիլական էթնիկ խմբի անդամների կողմից նկատվեց արժեքների բաղադրատարրերի ծայրահեղ ցածր գնահատման միտում, ընդորում, դիխտոմիկ ծայրահեղ բևեռներում, որպես կանոն, հայտնվում էին նույն արժեքները:

Հետկոնֆլիկտային երկրներում խաղաղության ընկալումները հասկանալը կարող է կապված լինել ոչ միայն անցյալի, այլև ապագայի գնահատականների հետ: Այն դեպքում, երբ հանրային դաշտում հակամարտության վերսկսման հեռանկարը գնահատվում է որպես անհավանական կամ անիրատեսական, ապա ամրապնդվում են այն արժեքները, որոնք ձևավորվել են հետպատերազմական շրջափուլում: Հակամարտության վերսկսման դրական հեռանկարների առկայությունը կամ տևական խա-

ղաղության հանդեպ դրական հեռանկարների բացակայությունը կարող է, հակառակը, խաթարել հետպատերազմական շրջափուլում ձեռք բերված հաշտեցման ջանքերը և ազդարարել անհատների մտավախությունը երկրի կայունության վերաբերյալ:

Արժեքային ճգնաժամի հաղթահարման համատեքստում չափազանց կարևոր է, որպեսզի հանրային դաշտում՝ որպես զանգվածային սոցիալ-հոգեբանական գործընթաց, հետպատերազմական միջավայրի դրական հետահայաց գնահատումը, նույնպես վերածվի դրական հեռանկարային գնահատման:

Մաս 2

Արժեհամակարգի ճգնաժամի պատճառահետևանքային կապերը հետպատերազմական հասարակությունում

Անձի արժեհամակարգի ճգնաժամը մեր կողմից քննվում է հետպատերազմական իրողությունների սոցիալ-հոգեբանական բնութագրման տեսանկյունից: Այն ստանում է նշանային իմաստավորում, ինչն, իր հերթին, արտահայտվում է անձի արժեհամակարգում:

Հասարակական գիտակարգում արժեքային ճգնաժամի պատճառահետևանքային կապերի վերլուծություններն առնչվում են սոցիալական միջավայրի բնութագրման, զարգացման օրինաչափությունների և փոխակերպումների ուսումնասիրություններին: Սոցիալական միջավայրն անձի կենսագործունեության հասարակական դրսևորումն է: Սոցիալական միջավայրը նաև հասարակական հարաբերությունների զարգացման որոշակի փուլի արտահայտություն է. այն կարող է բնութագրվել անձի որոշակի տնտեսաքաղաքական, հասարակական-դասային, մասնագիտական կամ որևէ այլ պատկանելիությամբ: Այսպես՝ տարբերում են քաղաքային, գյուղական, գիտական և այլ միջավայրեր, ուստի սոցիալական միջավայրն իր ընդհանուր բնութագրմամբ անձի համապատասխան կենսակերպի, վարքի և գործունեության արտաքին արտահայտությունն է:

Անձի իմաստարժեքային կողմնորոշումը, աշխարհի ամբողջական, հնարավորինս համաչափ պատկերը կառուցելու ձգտու-

մը իրագործվում են իդեալական իրականության տարածաժամանակային մոդելավորման միջոցով: Այդ մոդելի համապատասխանությունը իրականությանը արտահայտվում է սոցիալական միջավայրում անձի հոգևոր կայունությամբ և իր գործողությունների նկատմամբ վստահությամբ, կարգավորում է գործունեությունը և լցնում այն բովանդակությամբ: «Սոցիալական միջավայր» եզրույթը, արտահայտելով հասարակության մեջ անձի գոյության գաղափարը, սերտորեն կապված է անձի՝ որոշակի տարածության (քաղաք, գյուղ) կամ սոցիալական կարգավիճակի (սոցիալական շերտավորում) սահմաններում գործունեության հետ: Այլ խոսքերով, սոցիալական միջավայրը կենսական, ֆիզիկական աշխարհի արժեքային և սոցիալ-մշակութային բովանդակությունն է՝ իր մեջ ներառելով հասարակությունում անձի գոյության ու գործունեության բոլոր կողմերը [9]:

Միջավայրի նկատմամբ հասարակագիտական հայեցակետի ձևավորմանը նպաստել են մի շարք հարակից գիտությունների նվաճումները, որոնք հիմք են դարձել միջավայրի սոցիալ-հոգեբանական մեկնությանը: Տվյալ խնդրին առնչվող գիտական գրականությունը կարելի է ներկայացնել մի քանի ուղղություններով՝ բնագիտական, փիլիսոփայական, հոգեբանական, ազգագրական, սոցիոլոգիական, մշակութաբանական, այլ:

Փիզիկական միջավայրի և նրա կառուցվածքի հարցերին են նվիրված Ի. Ռ. Պրիգոժինի [216, 225; 226], Գ. Ռեյնհերթսի [231], Լ. Դ. Լանդաուի [190], Ս. Հոքինգի, Ջ. Էլլիսի, Ռ. Պենրոուզի [269; 270], Ա. Մ. Բեկարևի [135] և այլ հետազոտողների աշխատանքները: Դրանցում ամփոփվում են ճշգրիտ գիտությունների՝ աստղագիտության, ֆիզիկայի և մաթեմատիկայի տվյալները, որոնք բնութագրում են սոցիալական խմբերի համակեցության ֆիզիկական պայմանները: Սոցիալական միջավայրերի էությունն ու առանձնահատկությունները դիտարկվում են ըստ բնակլիմայական, տարածական, հաղորդակցական-լոգիստիկ ցուցիչների: Ուստի, այդ ցուցիչների դրսևորումների առանձնահատկություններով էլ պայմանավորված են արժեհամակարգի ճգնաժամի առաջացման մասին բնագիտական հայացքները: Ճգնաժամային են համարվում այն սոցիալական միջավայրերը, որոնց գոյության համար առկա

են անբավարար բնակլիմայական պայմաններ, անբարենպաստ կենսաապահովման գործոններ, որոնք էլ **որոշիչ են դառնում այդպիսի սոցիալական միջավայրերը բնակեցնող անձանց արժեհամակարգի փոխակերպումների և ձևախեղումների** համար: Խնդրի փիլիսոփայական հարցադրումները բացահայտվում են Կ. Կ. Աբասովի [118], Վ. Ֆոկի [260], Ռ. Ա. Արոնովի [123], Յու. Ուրմանցևի [253], Ա. Գրունբաումի [159] և Յու. Ռումերի [233] աշխատանքներում, որոնք ժամանակակից բնագիտության տվյալները դիտում են աշխարհի միասնության տեսանկյունից: Աշխատությունների այս շարքը ձևավորում է տարածության ժամանակակից տեսակավորումը, ուր իրական ֆիզիկական տարածությունը նկարագրվում է որպես միջավայրի գոյություն ունեցող հիմք, իմացության օբյեկտ, որի շրջանակներում ձևավորվում է պերցեպտուալ գիտելիքը՝ որպես շրջակա միջավայրի անձնական զգայական ընկալում:

Փիլիսոփայության պատմության մեջ միջավայրի հասարակագիտական ուսումնասիրմանը անդրադարձել են բազմաթիվ մտածողներ՝ Ի. Կանտը [179], Օ. Շպենգլերը [276], Ա. Շոպենհաուերը [120], իսկ ներկայումս՝ Լ. Վիտգենշտեյնը [151], Է. Տոֆֆլերը [250], այլք: Եվ սա դեռ ամբողջական ցանկը չէ: Ռուս փիլիսոփաներից միջավայրի՝ որպես սոցիալական համակեցության մոդելի խնդիրն են բարձրացրել Ն. Ա. Բերդյաևը [138], Պ. Ա. Ֆլորենսկին [259], Վ. Ի. Վերնադսկին [149], իսկ ներկայումս՝ Մ. Կ. Մամարդաշվիլին [203], Ա. Մ. Մոստեպանենկոն [213; 214] և սիներգետիկայի ժամանակակից շատ հետազոտողներ, որոնք հանդես են եկել կենսական տարածության սոցիալական նշանակության և ամբողջականության գաղափարներով [28; 60; 105; 121; 146; 239]: **Արժեհամակարգի ճգնաժամի առաջացման փիլիսոփայական տեսանկյունը բացահայտում է քաղաքակրթությունների դինամիկ զարգացման շարժընթացը, որի մաս է կազմում սոցիալական միջավայրի «մայրամուտը»՝ մի ժամանակաշրջան, երբ միջավայրի ներսում տեղի են ունենում քաղաքակրթական այնպիսի փոխակերպումներ, որոնք «քանդում են» նախկին սոցիալական նորմերն ու արժեքները, «ձևավորում են» արժեքային նախադրյալներ սոցիալական միջավայրի փոխակերպման համար:**

Միջավայրի ընկալման հոգեբանա-մարդաբանական հարցերին են առնչվել Մ. Մերլո-Պոնտին [205], Ի. Ռենչերը, Բ. Հերցբերգերը, Դ. Էփսթայնը [232], իսկ ռուսական իրականության մեջ՝ Ա. Շարովը [274], Բ. Գ. Անանևը [119], Դ. Գ. Էլքինը [279], Դ. Բ. Էլքոնինը [280]: Ա. Շատոխինը [275], և Բ. Ռասսելը [230] անդրադարձել են սոցիալական տարածության ընտելացման՝ որպես միջավայրի կառուցման երևույթի հոգեբանական հարցերին: Նրանք տարածությունը ներկայացնում են որպես կենտրոնական նյարդային համակարգի գործունեության հիմնարար դրսևորումներից մեկը: Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում Ա. Գ. Դանիլինի [163] և Օ. Հաքսլիի [267] աշխատությունները, որոնք վերաբերում են տարածության ընկալմանը, նրա կառուցմանը մարզինալ, այսինքն՝ գիտակցության փոփոխված վիճակներում՝ լինի դա թմրանյութերի ազդեցության արդյունք, թե շոկային որևէ իրավիճակ կամ դեպրեսիա:

Միջավայրի նկատմամբ սոցիոլոգիական հետաքրքրությունը արտահայտել է Է. Սոջան, ով գրել է սոցիալական իրականության տարածական լինելու մասին: Ըստ նրա կարծիքի՝ տարածությունից դուրս գոյություն չունեն սոցիալական որևէ պրոցեսներ և իրականություն: Նույնիսկ բացարձակ վերացականության և գաղափարախոսության մակարդակում առկա է թաքնված տարածական կառուցվածքը [97; 98]:

Սոցիալական միջավայրի կառուցման օրինաչափությունների հետազոտման արդիականությունը առավելապես պայմանավորված է ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող դինամիկ գործընթացներով, որոնք ձևափոխում և, նույնիսկ, խախտում են սոցիալական կայունության սովորական համակարգերը [35]: **Կենտրոնի ու ծայրամասի, ընդհանուրի և մասնավորի հարաբերակցությունը հաճախ դառնում է սոցիալական միջավայրում արժեքային ճգնաժամերի ուսումնասիրության առարկա:**

Հոգեբանների ուշադրությանն են արժանանում սոցիալական միջավայրում անձի վարքագծի փոխակերպման օրինաչափությունները, մասնավորապես, հետպատերազմական շրջափուլում սոցիալական նոր պայմաններին հարմարման սոցիոմշակութային մեխանիզմները, սոցիալական կարգ ու կանոնի ինստիտուցիո-

նալ ձևերի վերարժևորումը, սոցիալական փոխգործողությունների նորովի իմաստավորումը և հետպատերազմական սոցիալական կառույցում գիտելիքի և գործառույթների բաշխումը և դրանց համապատասխանեցումը արժեքային կողմնորոշումներին:

Միջավայրի կառուցման սոցիալ-տարածական մեխանիզմներին և օրինաչափություններին, սոցիալական քրոնոտոպի կառույցներին և գործառության հնարավորություններին են անդրադարձել մի շարք հեղինակներ՝ Ս. Մորոզը, Վ. Օնոպրիենկոն [211], Գ. Զիմմելը [158], Է. Դյուրկհեյմը [168], Ի. Կանտը [179], Ա. Լեֆևրը [195], Ռ. Փարկը [219], Տ. Պարսոնսը [220], Պ. Սորոկինը [240], Մ. Հայդեգերը [266]: Սոցիալական կառուցվածքի և դիֆերենցիացիայի միջև հարաբերակցությունները, որպես անձի արժեհամակարգի ճգնաժամի առաջացման հիմք, բացահայտվում են Պ. Բուրդյեի [147], Ժ. Դելեզայի [204], և Ժ. Դերրիդայի [164] կողմից: Վ. Իլյինը [177], համարելով տարածությունը որպես սոցիալական միջավայրի հիմնական կատեգորիա, **տարածության ձևախեղումը՝ սահմանափակումը կամ ընդարձակումը, դիտարկում է անձնային մակարդակում դրսևորվող վարքային և արժեքային փոխակերպումների առաջացման գլխավոր պատճառը:**

Տարածական ձևերի, դրանց նկարագրման և արժևորման ֆենոմենոլոգիական ավանդույթը սկիզբ է առնում Մ. Հայդեգերի [265] աշխատություններից և շարունակվում է Գ. Բաշլյարի [150], Յու. Ռումերի [233], Տ. Դոբրոխտովայի [165], Ա. Յակովլևայի [282], և ուրիշների կողմից: Միջավայրում սոցիալական տարածության կառուցման, կենտրոնի և ծայրամասի, ինչպես նաև դրանց արժեքային փոխակերպումների տեսությունները կապված են Ա. Լեֆևրի [194] և Լ. Կորբյուլեի [210] անունների հետ: Ա. Բերգսոնի [142] և Ֆ. Նիցշեի [217], Է. Գուսերլի [162], Ժ. Դելեզայի [204], Մ. Մերլո-Պոնտիի [205], Ժ. Պ. Սարտրի [235] և Մ. Հայդեգերի [265] կողմից **սոցիալական միջավայրը դիտարկվել է որպես էթզիստենցիալ ֆենոմեն, իսկ դրանում տեղի ունեցող փոխակերպումները՝ որպես արժեքային և գոյաբանական ճգնաժամի աղբյուր:**

Սոցիալական միջավայրը կառուցող տարածության կատեգորիայի արժևորման անձնային-անհատական ընկալումները վեր են հանում Կ. Ուիլբերը [252] և Ա. Ֆիլիպովը [256]: Ա. Բերգսոնը

[137], Ն. Բերնշտեյնը [139] և Մ. Մամարդաշվիլին [203] հատուկ տեղ են տվել մարմնի շարժումներին, ժեստերին, որոնք մասնակցում են սոցիալական տարածության ստեղծմանը: Մարմնի սոցիալականացման հարցերին բավական մեծ ուշադրություն են դարձնում Մ. Բախտինը [133], Պ. Բերգերը, Տ. Լուկմանը [136], Մ. Մոսսը [212], Ա. Տխոստովը [251], Ա. Շյուտցը [277], Մ. Ֆուկոն [263] և շատ ուրիշներ, սակայն հարկ է նշել, որ աշխատությունների գերակշռող մասը հանգում է այդ ֆենոմենի նեղ արտահայտություններին՝ ոչ վերբալ կամ տարածական վարքին: Բաց է թողնվում այդ երևույթի սոցիալ-մշակութային կողմը, միջավայրում անձի դրսևորման արժեքային բովանդակությունը, ինչպես նաև՝ այդ **արժեքային բովանդակության սոցիալ-հոգեբանական փոխակերպումները**, որոնք **հատկապես նկատելի են դառնում արտակարգ իրավիճակներում, պատերազմական և հետպատերազմական շրջափուլերում**: Ուստի մարմինը՝ որպես միջավայրում սոցիալական տարածության դիֆերենցիացիայի և արժևորման արտահայտչամիջոց, դեռ մնում է հասարակագիտական մտքի ծայրամասում: Այնինչ, սոցիալական տարածությունը, լինելով միջանձնային հարաբերությունների դաշտ, մեծապես կապված է հոգևոր-արժեքային դիրքորոշումների հետ:

Միջավայրի սոցիոլոգիական ուսումնասիրության տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում Պ. Սորոկինի [240; 241] և Պ. Բուրդյեի [147] գաղափարները սոցիալական տարածության մասին, Յու. Մ. Լոտմանի տեսությունը՝ առնչվող մշակույթների փոխգործողություններին [199], Ու. Բեքի դրույթը՝ տարբեր մշակույթների «գործունեության, կյանքի և ընկալման համար սոցիալական տարածության» ստեղծման անհրաժեշտության վերաբերյալ [134]: Սոցիոլոգիական հետազոտություններում տարածությունը քննվում է հիմնականում աշխարհաքաղաքական մարզինալության ենթատեքստում և ներկայանում է որպես ազգի կենսագործունեության և պետության կազմակերպման միջոց, իսկ **արժեքային ճգնաժամը կապվում է** սոցիալական տարածության անկանոն կազմակերպման գաղափարի հետ: Այդ ուղղության գերմանական դպրոցի հիմնադիրներն են եղել Կ. Հաուսհոֆերը և Ֆ. Ռաուցելը [191]: Նրանց տեսակետները շարունակել են Ա. Լեֆևրը [195], Պ. Լ.

Բերգերը, Տ. Լուքմանը [136], Գ. Զիմմելը [158] և Գ. Ե. Զբորովսկին [174]:

Մշակութաբանության մեջ միջավայրը նույնպես եղել է բազմաթիվ հեղինակների ուշադրության կենտրոնում, որոնք անդրադարձել են մշակութային մարգինալության կամ արժեքային ճգնաժամի բնութագրերին: Նշենք հատուկ Դ. Ս. Լիխաչովի սահմանների տեսությունը մշակույթում [196], Կ. Յյուրիերի տեսակետը՝ մշակույթների միջև սահմանային գոտիների վերաբերյալ [271], ինչպես նաև Դ. Պ. Կուդրյայի տեսակետը՝ մշակույթների միջև սահմանների մասին: Սահմանը, ըստ Դ. Պ. Կուդրյայի, կարող է և՛ բաժանել, և՛ միավորել մշակույթները: «Կենդանի սահմանը» ստեղծում է շփում մարդկանց, մշակույթների և «մշակութային ֆենոմենների» միջև [188]: Հետաքրքիր են նաև Վ. Ս. Բիբլերի գաղափարները նրա մասին, թե մշակույթի կենտրոնը գտնվում է սահմանի վրա՝ այնտեղ, որտեղ նա բախվում է այլ մշակույթների հետ [140]:

Ժամանակակից գիտակարգերում սոցիալական միջավայրը, դրանում առաջացող արժեքային փոխակերպումները և ճգնաժամը, իմաստավորվում են տարբեր տեսանկյուններից՝

- ✓ ֆիզիկան քննում է միջավայրի բնական, կառուցվածքային հատկությունները,
- ✓ սոցիոլոգիան՝ հասարակական կապերի փոխհարաբերությունները,
- ✓ մշակութաբանությունը քննում է մշակույթի տարածական ֆենոմենները և խորհրդանիշները,
- ✓ հոգեբանությունը՝ միջավայրում անձի գործունեությունն ու միջավայրի անձնային և խմբային ընկալման յուրահատկությունը,
- ✓ փիլիսոփայությունը ամփոփում է միջավայրի կենսական, խորհրդանշանային և իմաստային բնութագրերը:

Այսպիսով՝ սոցիալական միջավայրի ֆենոմենը, լինելով գիտական մտքի խաչմերուկում, որոշակի կերպով առնչվում է անձի և սոցիալական խմբերի արժեքային կողմնորոշումների, դրանց փոխակերպումների կամ ճգնաժամի հետ: Սոցիալական միջավայրը

յուրաքանչյուր գիտական կոնցեպտում ընկալվում է յուրովի և ստանում համապատասխան մեկնաբանություն: Սոցիալական միջավայրում անձի արժեհամակարգը ձևավորվում, ընտելացվում և միավորվում է արտաքին սոցիալ-մշակութային նորմերի հետ, իսկ **սոցիալական միջավայրում տեղի ունեցող գլոբալ, հասարակական նշանակություն ունեցող գործընթացները հանգեցնում են նաև անձի և սոցիալական խմբերի արժեհամակարգի ճգնաժամին և փոխակերպմանը** [27]: Համակարգելու համար հասարակայնորեն նշանակալի այն գործընթացները, որոնք նախադրյալ են հանդիսանում հետպատերազմական շրջափուլում արժեհամակարգի փոխակերպմանն ու ճգնաժամի ձևավորմանը, մեր կողմից առանձնացվում են հետևյալ հիմնական սոցիալ-հոգեբանական գործոնները.

- պատերազմի անավարտության աստիճանի գնահատումը,
- պատերազմի արդյունքի գնահատումը,
- սոցիալական փոխօգնության աստիճանը,
- հետպատերազմական միջավայրում ադապտացիայի աստիճանը,
- հետպատերազմական միջավայրում դերային փոփոխությունները:

Վերը թվարկած գործոնների բացահայտմանն է ուղղված Մ. Ռոկիչի արժեհամակարգի բաղադրիչների գնահատման մեթոդը, որը թույլ է տալիս վեր հանելու հետպատերազմական հասարակությունում արժեքների ռեյտինգավորումը և արժեքային կողմնորոշումների առաջնահերթությունները [89; 90; 91; 171; 283]: Արժեքային բաղադրիչների քննությունն իրականացվել է 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմից հետո ընկած ժամանակահատվածում հայ հասարակության շրջանում, իսկ ձեռք բերված տվյալները վերլուծվել են ըստ հարցվողների քանակի տոկոսային ցուցանիշների:² Հետպատերազմական իրողությունների սոցիալ-

2 Մեթոդը կիրառվել է 21T-5A311 ծածկագրով «Հետպատերազմական շրջանում անձի արժեհամակարգի ճգնաժամի և անոմիայի հիմնախնդիրը և հաղթահարման մեթոդաբանությունը» գիտական թեմայի շրջանակներում:

հոգեբանական ազդեցությունները վերլուծվել են ՀՀ Երևան քաղաքում (N=1400) և Շիրակի (N=620), Լոռու (N=730), Վայոց Ձորի (N=820), Տավուշի (N=730) ու Գեղարքունիքի (N=700) մարզերում՝ ըստ հետևյալ թիրախային խմբերի.


- պատերազմի մասնակիցներ,
- պատերազմի մասնակիցների ընտանիքի անդամներ,
- պատերազմում զոհվածների ընտանիքների անդամներ,
- անհետ կորած զինծառայողների ընտանիքների անդամներ,
- պատերազմի ընթացքում գործող մասնագիտական խմբեր / բժիշկներ, փրկարարներ, սոցիալական աշխատողներ/,
- հետպատերազմյան շրջանում անօթևան մնացած անձինք,
- հետպատերազմյան շրջանում գործազուրկ անձինք,
- հետպատերազմյան շրջանում աշխատանքը պահպանած անձինք,
- պատերազմին մասնակցություն չունեցող անձինք,
- քաղաքաբնակներ,
- գյուղաբնակներ,
- սահմանամերձ գոտում բնակվողներ,
- ոչ սահմանամերձ գոտում բնակվողներ,
- ենթամշակութային խմբեր՝ հետպատերազմական շրջանում աշխարհագրական և մշակութային մարզինալներ /միգրացիոն դիրքորոշում ունեցող անձինք, էթնոմարզինալներ, կրոնական և ազգային փոքրամասնություններ/,
- հետպատերազմական շրջանում դեհանտ վարք ունեցող մարզինալներ:

Արժեքային բաղադրիչների ռեյտինգավորման արդյունքում բարձր էին գնահատվում հիմնականում այն արժեքները, որոնք արտահայտում էին հետազոտության մասնակիցների արժեքային պահանջմունքները և կողմնորոշումները:

Հետազոտվող ամբողջ ընտրանքում (N=5000) պատերազմի մասնակիցների և մասնակցություն չունեցող անձանց շրջանում որոշակի տարբերություններ են գրանցվել կոնկրետ արժեքների գնահատումներում (տես՝ Գծանկար 1):

Պատերազմական գործողություններին մասնակցած ան-


ձանց մոտ նկատելի է հաղորդակցման պահանջմունքի շեշտադրումը, ինչը երևաց լավ և հավատարիմ ընկերների հետ շփման արժևորմամբ: Առողջության արժևորումը, հակառակը, բավական թույլ է արտահայտված պատերազմի մասնակիցների շրջանում:



Գծանկար 1. Կոնկրետ արժեքների բաղադրիչների յոթինգավորումը «պատերազմի մասնակիցներ» – «մասնակցություն չունեցող անձինք» թիրախային խմբերում

Այս արդյունքներով հաստատվում են հետպատերազմական շրջափուլում տրավմատիկ սթրեսի սոցիալ-հոգեբանական հետևանքները, որոնք ընդգծվում են պատերազմի մասնակցների մոտ սեփական կյանքի և առողջության թերարժեքության մեջ, ինչն էլ փոխարինվում է կյանքի արդյունավետության և ընկերական շրջապատի արժեքներով: **Պատերազմում մասնակցություն չունեցող անձանց և սոցիալական խմբերի մոտ շեշ-**


տադրվեց հատկապես առողջության արժեքը: Առողջության արժևորվումը յուրօրինակ պաշտպանական մեխանիզմ է դիտվում, հետպատերազմական միջավայրում այն եսակենտրոնության դրսևորում է՝ հատկապես հաղորդակցական դաշտի թերարժևորման ֆոնին:



Գծանկար 2. Վերացական արժեքների բաղադրիչների ռեյտինգավորումը «պատերազմի մասնակիցներ» – «մասնակցություն չունեցող անձինք» թիրախային խմբերում

Ինչպես կոնկրետ, այնպես էլ վերացական արժեքների բաղադրիչների գնահատականներում թիրախային խմբերի միջև պատասխանները գրեթե նույն տոկոսային արտահայտվածություն են դրսևորել (տես՝ Գծանկարներ 1-2): Վերացական արժեքների խմբում գրանցվել են մեկ-երկու արժեքների գնահատականների


տարբերություններ (տես՝ Գծանկար 2): Հատկանշական է, որ ազատության արժեքային բաղադրիչը գերազանցապես կարևորվել է պատերազմի մասնակիցների շրջանում: Հաջորդ առաջնահերթությունը սեփական ուժերի մեջ համոզվածության արժևորումն է, որը նույնպես ընդգծվեց պատերազմի մասնակիցների մոտ: Ընդհանուր առմամբ, կարելի է կաճիք հայտնել առ այն, որ **պատերազմի մասնակիցների շրջանում միտում կա արժևորելու այն արժեքները, որոնք դրդում են անձին եսակենտրոնության և ինքնուրույնության: Հասարակական-հաղորդակցական արժեքային պահանջմունքները դեռևս մնալով չբավարարված մակարդակում՝ հետպատերազմական շրջափուլում որոշ չափով սահմանափակվում են այլակենտրոնության արժեքային կողմնորոշումները:**



Գծանկար 3. Կոնկրետ արժեքների բաղադրիչների ռեյտինգավորումը «պատերազմի մասնակիցների ընտանիքի անդամներ» – «զոհվածների ընտանիքի անդամներ» – «անհետ կորածների ընտանիքի անդամներ» թիրախային խմբերում

Հաղորդակցական դաշտի արժեքներից առանձնանում է հավատարիմ ընկերներ ունենալու արժեքային պահանջմունքը, որը յուրօրինակ պաշտպանական մեխանիզմ է՝ «կառուցելու» յուրային սոցիալական միջավայրը: Արժեքային համակարգի ճգնաժամն արտահայտվում է սոցիալական միջավայրի՝ միայն ընկերական շրջապատով, «նեղացման» միտումներով:

Հաջորդ երեք թիրախային խմբերում ձեռք բերված տվյալները ևս ուշագրավ էին հետապատերազմական շրջափուլում արժեքային ճգնաժամի դրսևորումների տեսանկյունից: Հատկանշական էր կոնկրետ արժեքների գրեթե բոլոր բաղադրատարրերի հանդեպ նույնական վերաբերմունքը Գծանկար 3-ում ներկայացված թիրախային խմբերի պատասխաններում: Ավելին, հետազոտությունը ցույց տվեց, որ պատերազմական գործողությունների հետ առնչվող անձանց ընտանիքների անդամների մոտ ոչ միայն դրսևորվեցին արժեքների գնահատականների գրեթե իրարից չտարբերվող ցուցանիշներ, այլև՝ այդ ցուցանիշները ներկայացան համասեռ կամ միատարր բաշխվածությամբ: Այդ իսկ պատճառով Գծանկար 3-ում ներկայացված տվյալների երեք կորերի կառուցվածքը նմանվեց գծային պատկերների: Առանձնահատուկ կանգ առնենք «ընտանեկան երջանիկ կյանքի» արժևորման պատկերին բոլոր երեք թիրախային խմբերում: Պատերազմում զոհվածների և անհետ կորածների ընտանիքների անդամները շեշտադրված կերպով ընդգծել են այդ արժեքը: Այլ խոսքերով, **կորստի վերապրման գործընթացում ընտանեկան երջանկության արժևորումը գնահատվում է որպես չբավարարված արժեքային պահանջմունք: Արժեքային այլ բաղադրատարրերի գրեթե համասեռ արտահայտվածության ֆոնին այս արժեքի շեշտադրումը հուշում է արժեքային ճգնաժամի ֆրաստրատիվ հատկանիշի մասին.** չէ՛ր որ ընտանեկան երջանկության արժեքի ռեյտինգավորումն առանձնապես չտարբերվեց մյուս արժեքների գնահատականներից պատերազմի մասնակիցների ընտանիքների թիրախային խմբում: Անկասկած, ձեռք բերված տվյալները թույլ են տալիս ճշգրտելու **արժեքային ճգնաժամի տեսամեթոդաբանական բնութագրումը՝ որպես անձի հոգեկանի վրա ֆրուստրատիվ ներգործություն ունեցող հոգեբանական երևույթ:**




Գծանկար 4. Վերացական արժեքների բաղադրիչների ռեյտինգավորումը «պատերազմի մասնակիցների ընտանիքի անդամներ» – «զոհվածների ընտանիքի անդամներ» – «անհետ կորածների ընտանիքի անդամներ» թիրախային խմբերում

Պատերազմական գործողություններում մասնակիցների ընտանիքների անդամների շրջանում իրականացված արժեքների ռեյտինգավորման հետազոտությունը հանգեցրեց նաև վերացական արժեքների գնահատականների դուրսբերմանը (տես՝ Գծանկար 4): Ինչպես կոնկրետ արժեքների գնահատականների պարագայում, այստեղ ևս երևացին արժեքային ճգնաժամի ֆրոստրատիվ

հատկանիշները: Այս անգամ հիմնական շեշտադրումները նկատվեցին կյանքի իմաստավորման գնահատականներում, որոնք նույնպես բարձր ռեյտինգավորում ցուցաբերեցին զոհվածների և անհետ կորածների ընտանիքներում: Այդուհանդերձ, **կյանքի իմաստության արժևորումը առավել կերպով դրսևորվեց հատկապես զոհվածների ընտանիքներում, այն անձանց շրջանում, ովքեր հայտնվել են կյանքը վերարժևորելու և նորովի իմաստավորելու բարդ խնդրի առջև:** Անհետ կորածների ընտանիքների անդամները, թեև նույնպես առանձնացրել են իրենց կյանքում ճգնաժամային իմաստափոխությունները, այդուհանդերձ, կյանքի իմաստության ռեյտինգավորումը փոքր-ինչ ստորադասել են ազատության արժևորմանն ու գնահատմանը: Այս արժեքային փոխակերպման հիմքում, ամենայն հավանականությամբ, ընկած է ընտանիքի անհետ կորած անդամի մասին որևէ լուր իմանալու և, նաև՝ ողջ գտնելու չմարող հույսը:


Ի տարբերություն պատերազմից ողջ վերադարձացների ընտանիքների, զոհվածների և անհետ կորածների ընտանիքներում զարգացման, սեփական ուժերի մեջ համոզվածության, ճանաչողության և ստեղծագործության վերացական արժեքները «երանգավորվել են» նեգատիվ գույներով, այս արժեքների փոխակերպումները հիմնականում նեգատիվ բնույթ են կրում, իսկ արժեքային ճգնաժամն արտահայտվում է ֆրուստրատիվ հատկանիշներով:



Գծանկար 5. Կոնկրետ արժեքների բաղադրիչների յեյրինգավորումը «մասնագիտական խմբեր» – «ենթամշակութային խմբեր» թիրախային խմբերում

2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմին հաջորդող ժամանակահատվածում մասնագիտական խմբերից հետազոտությանը մասնակցել են բժիշկների, սոցիալական աշխատողների, հոգեբանների, փրկարարների և մանկավարժների մասնագիտական խմբերը: Այս խմբերին միավորում է հաղորդակցական դաշտում մասնագիտական գործունեության հիմնական ուղղվածությունը և հետազոտության արդյունքները ցույց տվեցին հետպատերազմական շրջափուլում այդ խմբերի մոտ արժեքների գնահատման գրեթե նույնական պատկերը (տես՝

Գծանկար 5): Մասնագիտական խմբերի ներկայացուցիչները բավական բարձր էին գնահատել աշխատանքային գործունեության հետ առնչվող արժեքները: Այսպես, շեշտադրվեցին ոչ միայն հետաքրքիր աշխատանքի, այլև՝ ակտիվ, գործունյա և արդյունավետ կյանքի արժեքները: Ենթամշակութային խմբերում ներգրավվեցին ՀՀ-ում բնակվող կրոնական և ազգային փոքրամասնությունները, միգրացիոն կողմնորոշում ունեցողները, ինչպես նաև՝ դեհանտ վարքագծով անձինք (մասնավորապես, ալկոհոլային, սննդային կախվածություն ունեցողները):




Գծանկար 6. Վերացական արժեքների բաղադրիչների ռեյտինգավորումը «մասնագիտական խմբեր» – «ենթամշակութային խմբեր» թիրախային խմբերում

Եվ պատահական չէ, որ հետպատերազմական շրջափուլը նշանավորող արժեքային համակարգի ճգնաժամի պայմաններում առավել արժևորվել են այն արժեքները, որոնք նպաստում են ներմշակութային համախմբվածությանն ու հետպատերազմական իրողություններին ադապտացմանը: Նման արժեքներից առավելագույնս ընդգծվեցին ընտանեկան երջանկությունն ու առողջությունը:

Հետաքրքիր փաստ է նաև այն, որ **բացի կրոնական և ազգային փոքրամասնություններից, ընտանեկան երջանկության և առողջության արժեքային առաջնահերթությունները նկատվեցին նաև հետպատերազմական շրջափուլում որոշ կախվածություններ ունեցող անձանց մոտ: Ակնհայտ է, որ առավել վտանգված արժեքային պահանջմունքները գնահատվեցին բարձր ռեյտինգավորմամբ՝ արտահայտելով անձի ճգնաժամը և ապահով ապրելու պահանջմունքի ֆրոնտորացիան:**

Վերացական արժեքների ռեյտինգավորման արդյունքում կրոնական և ազգային փոքրամասնությունների շրջանում հիմնական արժեքային շեշտադրումը սիրո գնահատումն էր (տես՝ Գծանկար 6), ինչը նույնպես հավաստի աղբյուր է առ այն, որ **հետպատերազմական շրջանում առավել ակտիվանում են կոլեկտիվիզմի, ներմշակութային համախմբվածության և վստահության արժեքային առաջնահերթությունները:**


Մասնագիտական խմբերում, հակառակը, որոշակի չափով ակտիվանում են անհատականության, եսակենտրոնության դրսևորումները, որոնք արտահայտվում են զարգացման, սեփական ուժերի մեջ համոզվածության և ազատության արժեքների բարձր գնահատականների միջոցով:



Գծանկար 7. Կոնկրետ արժեքների բաղադրիչների ռեյտինգավորումը «աշխատողներ» – «գործազուրկներ» – «անօթևաններ» թիրախային խմբերում

Հետաքրքիր տվյալներ են ստացվել աշխատանքային և սոցիալական ոլորտների հիմքով առանձնավցված թիրախային խմբերում (տես՝ Գծանկար 7): Աշխատողների խումբը ձևավորվել է հետպատերազմական շրջափուլում աշխատանքը պահպանած անձանցից, և հակառակը, աշխատանքը կորցրած անձինք կազմել են գործազուրկների թիրախային խումբը: Կարևոր էր առանձնացնել նաև անօթևաններին, ովքեր հիմնականում Արցախից բռնագաղթած այն անձինք էին, ովքեր ժամանակավոր բնակություն էին հաստատել պետական աջակցության սոցիալական տարբեր կենտրոններում: Այդ երեք թիրախային խմբերի պատասխանների՝ մեկ աղուսակում պատկերման արդյունքում տեսնում ենք հետպատերազմական շրջափուլում գրեթե նույնական գնահատականներ կոնկրետ արժեքների վերաբերյալ՝ **բոլոր երեք խմբերը ընդգծված կերպով շեշտադրել են ընտանեկան երջանիկ կյանքը:** Գործազուրկների և

անօթևան մնացածների շրջանում թեև այդ արժեքի շեշտադրումը կարող է նշանակել այն, որ պատերազմական գործողությունների հետևանքով առանձնանում է այն արժեքը, որից զրկվել են մարդիկ՝ հայտնվելով ֆրուստրացիայի մեջ, սակայն տեսնում ենք, որ **հետպատերազմական շրջափուլում արժեքային ճգնաժամի ֆրուստրատիվ հատկանիշը կրում են ոչ միայն գործազուրկ և անօթևան մնացած անձինք, այլև աշխատանքը պահպանած անձինք նույնպես:**



Գծանկար 8. Վերացական արժեքների բաղադրիչների ռեյտինգավորումը «աշխատողներ» – «գործազուրկներ» – «անօթևաններ» թիրախային խմբերում

Տարբեր թիրախային խմբերի պատասխանները համադրելիս պարզ է դառնում, որ ընտանեկան երջանկության արժեքը հիմնականում ընկալվում է առողջության արժեքի հետ միասին. Աշխատանքը պահպանած անձանց մոտ ընտանեկան երջանկության արժեքն ավելի է շեշտադրված, քան նույնիսկ այլ թիրախային խմբերում: **Արժեհամակարգի ներկայացման այս պատկերը, փաստորեն հուշում է հետպատերազմական շրջափուլում ընտանիքի ինստիտուտի վտանգված լինելու և դրանով պայմանավորված՝ առանձնակի կերպով շեշտադրվելու միտվածության մասին:**

Առավել խոսուն են վերը թվարկած՝ աշխատողների, գործազուրկների և անօթևան մնացածների, թիրախային խմբերի գնահատականները վերացական արժեքների վերաբերյալ (տես՝ Գծանկար 8): Աշխատանքը պահպանած անձանց շրջանում պատկերը փոքր-ինչ ավելի իրատեսական է և համարժեք՝ գրեթե բոլոր արժեքներն ունեն որոշակի չափով արտահայտվածություն՝ եսակենտրոնության և ազատականության միտվածությամբ: Աչքի է ընկնում սեփական ուժերի մեջ համոզվածության անհամարժեք բարձր գնահատականը գործազուրկ և անօթևան անձանց մոտ՝ մնացած այլ վերացական արժեքների գնահատականների ֆոնին: **Ինչպես այլ թիրախային խմբերում, այստեղ ևս հանդիպում ենք արժեքային ճգնաժամի ֆրուստրատիվ հատկանիշին. սեփական ուժերի մեջ համոզվածությունը ոչ միայն ամենավտանգված արժեքն է դարձել հետպատերազմական շրջափուլում, այլև Ես-ի կառուցվածքային արժեքը, որի անհամարժեք բարձր գնահատումն ինքնին պաշտպանական մեխանիզմ է ճգնաժամային պայմաններում հայտնված անձանց համար:**

Հետպատերազմական միջավայրում արժեհամակարգի ճգնաժամի սոցիալ-հոգեբանական հետևանքները դրսևորվում են ինչպես անձի կենսագործունեության կոգնիտիվ, այնպես էլ հուզական և վարքային ոլորտներում: Ի հայտ են գալիս այնպիսի երևույթներ, որոնք միտված են արժեքների բացասական փոխակերպումների ամրապնդմանը գիտակցության մեջ, անձի պաշտպանական մեխանիզմների սահմանափակմանն ու աշխարհայացքի մարգինալացմանը: Անձի հոգեկանում

տեղի ունեցող նեգատիվ փոփոխություններն առանձնանում են հուզականությամբ և արտահայտվում համապատասխան վարքային մոդելների միջոցով: Հետպատերազմական միջավայրում անձի արժեհամակարգի ճգնաժամի կարևոր ցուցիչ է սոցիալական ապատիայի ֆենոմենը: Գիտական գրականության մեջ սոցիալական ապատիան ներկայացվում է որպես վարքագծի տեսակ, ուստի կարելի է ասել, որ սոցիալական ապատիան ոչ միայն սոցիալական, այլև հոգեբանական երևույթ է, որն արտացոլում է անհատների սուբյեկտիվ բարեկեցության և սոցիալական վարքագծի դինամիկան [44; 53]: Անձի վարքագիծն ու մտածողությունը միշտ ուղեկցվում են որոշակի հույզերով՝ պայմանավորված մտավոր գործունեության առանձնահատկություններով: Անձն իր կենսագործունեության ընթացքում ընդգրկվելով սոցիալական տարբեր խմբերում, ձևավորում է սեփական ես-ի և շրջակա միջավայրի հանդեպ որոշակի զգացմունքային վերաբերմունք, որը մի շարք հեղինակների կողմից սահմանվում է որպես անձի սուբյեկտիվ բարեկեցություն: Այն հիմնված է մարդկանց սոցիալական կարգավիճակի, ընտանիքի, կյանքից ընդհանուր բավարարվածության, ինչպես նաև՝ սեփական անձի, հարազատների, գործընկերների վարքագծի հանդեպ սուբյեկտիվ գնահատականների վրա [68]: Այդ սուբյեկտիվ գնահատականներն ունեն երկու սերտորեն փոխկապակցված կողմեր՝ ռացիոնալ և զգացմունքային: Անհատական գիտակցության մեջ դրանք սերտորեն փոխկապակցված են, բայց կարող են տարբերվել իրենց դրսևորումներով: Ռացիոնալ գնահատականը կարելի է բացատրել, օրինակ, այսպիսի դատողությամբ. «Ես ինձ վստահ չեմ զգում այս թիմում, քանի որ չունեմ բարձրագույն կրթություն»: Զգացմունքային գնահատումը հաճախ իրավիճակային է, այն կարող է պայմանավորված լինել անձնական կյանքում տեղի ունեցող իրադարձություններով՝ արտացոլելով անձի տրամադրությունը, հոռետեսությունը կամ լավատեսությունը: Հայտնի է, որ սուբյեկտիվ գնահատման հուզական կողմը սովորաբար գերակշռում է ռացիոնալին: Միևնույն ժամանակ, սուբյեկտիվ բարեկեցությունը կոլեկտիվ գիտակցության երևույթ է, այն արտահայտվում է ընդհանրացված գնահատականների, հուզական ռեակցիաների և արձագանքման ձևերի տեսքով, ինչի շնորհիվ կարող է զգալիորեն

ազդել հասարակության անդամների ընկալումների վրա: Բացի այդ, սուբյեկտիվ բարեկեցության ընկալումը կարող է ազդել անհատի և սոցիալական խմբի սոցիալական գործունեության ընդհանուր ուղղվածության վրա՝ արտահայտվելով գործունեության կառուցողական կամ կոնստրուկտիվ, դեստրուկտիվ և պասիվ դրսևորումներում: Սուբյեկտիվ բարեկեցության մակարդակը առավել ցածր է գնահատվում ինչպես դեստրուկտիվ, այնպես և պասիվ սոցիալական գործունեության ընթացքում կամ արդյունքում: Սուբյեկտիվ բարեկեցության ցածր մակարդակի հիմքում է սոցիալական ապատիան, որը նույնպես հանդիպում է անձի կենսագործունեության ինչպես դեստրուկտիվ, այնպես էլ պասիվ դրսևորումներում: Իսկ որոնք են այդ դրսևորումները: Տարբեր հետազոտություններ ցույց են տալիս, որ սոցիալական ապատիան, որպես սուբյեկտիվ բարեկեցության ցածր մակարդակի ցուցիչ, դրսևորվում է՝

- անտարբերությամբ հասարակական կյանքում կատարվողի նկատմամբ,
- ապագայի հանդեպ սպասելիքների ամբողջական կամ մասնակի կորստով,
- հետաքրքրությունների և գործունեության շարժառիթների թուլացմամբ,
- կյանքի իմաստի դեստրուկտիվ կամ կործանարար փոխակերպումներով,
- սոցիալական ակտիվության անկարողությամբ:

Այս դրսևորումների տևողությունը կարող է տարբեր լինել: Եթե դրանք արտահայտվում են համեմատաբար կայուն կերպով, ապա սոցիալական ապատիայի ի հայտ գալը դառնում է անխուսափելի: Այդ դեպքում սոցիալական վարքագիծն ընդհանուր առմամբ բնութագրվում է պասիվությամբ: Պասիվությունը նույնպես տարբեր դրսևորումներ ունի՝ գրեթե աննկատ աստիճանից մինչև չափազանց ակնառու աստիճանը: Շատ հեղինակներ սոցիալական ապատիան համարում են փոփոխվող կյանքի պայմաններին

հարմարվելու յուրահատուկ միջոց, որը միաժամանակ և անխոս բողոք է իրականության դեմ, և՛ պաշտպանական մեխանիզմ [25; 59; 69; 100]: Այն հատկապես շեշտադրվում է այն երիտասարդների շրջանում, ովքեր գտնվում են արտաքին ազդակների՝ ինտերնետի, լրատվամիջոցների, գովազդի ուժեղ ազդեցության տակ: Սոցիալապես ապատիկ վարքագիծն ուղղված է, մի կողմից, անձի եսակենտրոն հատկանիշների զարգացմանը, իսկ մյուս կողմից, սոցիալապես նշանակալի գործունեության թուլացմանը:

Սոցիալական ապատիայի պատճառները պետք է փնտրել ժամանակակից հասարակության մեջ: Սոցիոլոգիան դիտարկում է ապատիան որպես հասարակական նորմերի հետ անհատի արժեհամակարգի «անհամապատասխանության», այսինքն՝ անոմիայի հետևանք: Այս մոտեցումը պայմանավորված է անձի վարքագծի ձևավորման գործում արժեքների հսկայական դերով: Արժեքների վրա հիմնված վարքագիծն ավելի խորը, ավելի ամուր հիմք ունի, քան զուտ սոցիալական նորմերի վրա հիմնված գործողությունները: Հասարակական նորմերը հիմնականում կատարում են վերահսկող գործառույթ՝ հաստատելով/թույլատրելով կամ մերժելով/չթույլատրելով անձի վարքագիծը: Անձը չի ընտրում սոցիալական նորմերը. նա ընտրում է հետևել այդ նորմերին, թե՛ ոչ: Արժեքները, ի տարբերություն նորմերի, անձն ինքն է ընտրում՝ որոշելով, թե ի՞նչ է իր համար նշանակալից արժեքը: Արժեքները կազմում են մարդու ներաշխարհը և ուղղորդում նրա գործունեությունը: Ողջ կյանքի ընթացքում մարդը կարող է փոխել արժեքային առաջնահերթությունները, բայց այդ փոփոխությունը միշտ կլինի նրա ընտրության արդյունքը: Այն դեպքում, երբ հասարակությունը ներխուժի մարդկային արժեքների ներաշխարհ, որոշակի արժեքներ պարտադրելով կամ, ընդհակառակը, փոխակերպելով դրանք, մարդն ապրում է ներքին ցնցում, որն ազդում է նրա հոգեկան վիճակի ու սոցիալական վարքի վրա: Մի շարք գիտնականներ, այդ թվում՝ Թեյմուրին և այլք, կարծում են, որ անոմիան, որպես սոցիալական ապատիայի հետևանք, առաջացել է տնտեսական հարաբերությունների սրընթաց փոփոխության պատճառով, երբ բացակայում են նման փոփոխությունների համար անհրաժեշտ բարոյական հիմքերը: Այս իրողությունը հանգեցրեց

զանգվածային սոցիալական սթրեսային խանգարումների առաջացմանը, որի հետևանքներից մեկը հենց սոցիալական ապատիան է [103]:

Հասարակայնորեն նշանակալի արժեքների սոցիոլոգիական և հոգեբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շուկայական բարեփոխումներով ներմուծվող ազատական արժեքները սովորաբար լիարժեքորեն չեն համապատասխանում դարերի ընթացքում ձևավորված և ամրապնդված սոցիալ-մշակութային ավանդույթներին: Այսպիսով, սոցիալական արդարությունն ու սոցիալական հավասարությունը շարունակում են մնալ գլխավորը հասարակության արժեհամակարգում: Արժեքային փոխակերպումները չեն համընկնում անցած տասնամյակների ընթացքում ձևավորված արժեհամակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքի հետ, ինչը բացասաբար է ազդում անձի և սոցիալական խմբերի սոցիալական բարեկեցության ընկալումների վրա, հանգեցնում է իրականությունը մերժելու կամ իրականությունից «փախչելու» ցանկությանը: Այլ խոսքերով, անտարբերությունը պաշտպանական արձագանք է սոցիալական իրականության փոփոխություններին, որոնցից կարելի է դիտարկել հետպատերազմական իրողությունները սոցիալական միջավայրում: Սեփական շահը գերակշռում է հանրային շահին և արդյունքում բարոյական նորմերը աստիճանաբար կորցնում են իրենց ուժը, սոցիալական կարևորության զգացողությունը, սոցիալական պատասխանատվությունը ենթարկվում է ատրոֆիայի. անձը՝ զրկված լինելով ավանդական արժեքների հետ բարոյական կապից, ընդհանուր սոցիալական նպատակներից և խնդիրներ, հեշտությամբ ենթարկվում է մանիպուլյացիաների, իսկ սոցիալական վարքը դառնում է կանխատեսելի և կառավարվող [77; 80; 115]:

Տեղեկատվական հասարակությունը նույնպես նպաստում է սոցիալական ապատիայի խորացմանը: Անձը ստանում է հսկայական քանակությամբ տարատեսակ տեղեկություններ, որոնք համակարգված և ընկալելի չեն կամ ներկայացվում են թերի ու մասնատուված կերպով: Ընդհակառակը, տեղեկութի նման տարափը հաճախ սուբյեկտիվ կարծիքներ կամ հմտորեն ձևավորված գաղափարախոսական քարոզչություն է պարունակում:

Բացի այդ, տեղեկատվության հասանելիությունը ստեղծում է «ամեն ինչ ամեն ինչի մասին» իմացության պատրանք: Արդյունքում զգացմունքային գնահատականները սկսում են գերակշռել, իսկ քննադատական մտածողությունը թուլանում է: Անձն այլևս չի հասկանում գործընթացների էությունը, ուստի նա սկսում է չմասնակցել կամ խուսափել այդ գործընթացների կատարումից:

Սոցիալական ապատիա առաջացնող մեկ այլ մակրո-սոցիալական պատճառը սպառողական հասարակությունն է: Ժամանակակից հասարակություններին հատուկ սպառողականության մթնոլորտը, ապրանքների առատությունը և նյութական բարիքներով հագեցվածությունը առաջացրել է մի վիճակ, որն արևմտյան գիտնականներն անվանում են «երջանիկ ապատիա»: Սպառողական հասարակությունը իրականում զրկված է անհատական ազատությունից, ուժեղ ինտեգրված է արտադրությանը, քանի որ սպառողական, մարդկային կյանքը պարփակված է «արտադրություն-սպառում» գծային տրամաբանության մեջ [63]:

Նյութական արժեքների վրա կենտրոնանալը, հոգևոր պահանջմունքների անտեսումը հանգեցնում են քաղաքակրթության «հիվանդությանը», անձը դառնում է ոչ զգայուն այլ մարդկանց նկատմամբ, միակողմանի է ընկալում սոցիալական միջավայրում տեղի ունեցող իրադարձությունները: Այնուամենայնիվ, տնտեսական, սոցիալ-քաղաքական ճգնաժամերը ավելի են խորացնում սպառողական վարքագիծը՝ ուժեղացնելով իրավիճակը փոխելու կամ կառավարելու անզորության դրսևորումները: Նշենք նաև, որ մարդիկ հաճախ չեն տեսնում վերը թվարկած երևույթների տարածման վտանգի խորությունը, հետևաբար, հոգեսոցիալական ոլորտի մասնագետների համար առաջնային է դառնում անձի սուբյեկտիվ բարեկեցության գնահատումը և սոցիալական ապատիան չեզոքացնող մեխանիզմների բացահայտումը: Ժամանակակից հոգեբանական գիտակարգում պատահական չէ, որ սոցիալական ապատիայի, դրա հաղթահարման արդյունավետ ուղիների փնտրտուքը դարձել է հիմնական խնդիրներից մեկը, որը ներառում է նաև կրթական ոլորտում և հասարակության բոլոր շերտերում մասնագիտական աշխատանքը:

Սոցիալական ապատիայի կամ անտարբերության եզրույթը հոգեբանության ոլորտում նկարագրում է հոգեկան այնպիսի վիճակ, որում անհատի մոտ դրսևորվում է հուզական դաշտի արտահայտվածության թուլացում, դեպրեսիվություն, հոգեսոմատիկ խնդիրների խորացում, հուզական այրում, հոգեմետոդեղամիջոցներից կախվածություն և այլն: Ընդհանուր առմամբ, նման երևույթները սովորաբար ենթադրում են հոգեթերապևտիկ երկարաժամկետ ուղեկցում: Սոցիալական ապատիայի բարդ բնույթը, ինչպես նաև ձևավորման պատճառների և դրսևորումների բազմազանությունը, պահանջում է նոր ուղիների և ռազմավարությունների որոնում մասնագիտական գործունեության մեջ՝ գտնելու համար լծակներ, որոնք կօգնեն անհատին հարմարվել արագ փոփոխվող սոցիալական պայմաններին: Այս առումով անհրաժեշտ է ուսումնասիրել հարաբերությունները սոցիալական ապատիայի և անձի անհատական սոցիալ-հոգեբանական բնութագրերի միջև, որոնց դրսևորումները կապված են բարդ իրավիճակների լուծման, սթրեսի և այլ բացասական ազդեցությունների հաղթահարման հետ: Անձնական հատկանիշները մեծապես որոշում են անձի հարմարվողականության հաջողությունը կամ ձախողումը, և միևնույն ժամանակ հարմարվողականությունն ինքնին հզոր խթան է անհատական զարգացման համար [111; 116; 117]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ավելի խոցելի են այն մարդիկ, ովքեր արտաքին ազդակներին արձագանքում են ագրեսիվ, անզուսպ և ցույց են տալիս բարձր աստիճանի դիմադրություն: Նման մարդիկ հակված են թերագնահատելու իրենց խնդիրները և դրանց լուծման համար պահանջվող ժամանակը: Հաղթահարելու համար սոցիալական ապատիան մարդու համար կարևոր է առերեսվել ոչ միայն սթրեսային գործոնների, այլև երկարատև սթրեսի հետևանքների հետ, որոնք որոշակիորեն կապված են հուզական այրման, սոցիալական անտարբերության և անզորության երևույթների հետ: Որոշ հեղինակներ կարծում են, որ սոցիալական ապատիայի համախտանիշի խորացումը կարող է հանգեցնել նրան, որ անձը հիասթափվի սեփական հաջողություններից, քանի որ դրանք չեն կարող ապահովել սուբյեկտիվ բարեկեցության զգացողությունը, իսկ անձի սոցիալական վարքն ուղեկցվում է

հոգեբանական էներգիայի ավելորդ կորստով և հանգեցնում հոգեսոմատիկ մակարդակում դրսևորվող հոգնաժողովան, հուզական հյուծման, և որպես հետևանք՝ տագնապայնության, գրգռվածության, զայրույթի, ցածր ինքնագնահատականի, քնի խանգարումների, ինչպես նաև հուզական անկայունության, կասկածամտության, պահպանողականության և իմպուլսիվության: Նման պարագայում առանձնահատուկ նշանակություն ունեն անձի ինտրովերտության գծերը, որոնք էլ ավելի են խորանում [83]:

Սոցիալական ապատիան դրսևորվում է նաև աշխատանքային կախվածության հետևանքով առաջացող հուզական այրման համախտանիշի միջոցով: Հուզական այրման ենթակա խոցելի կատեգորիա համարվում են աշխատանքի մեջ ընկղմված անձինք, որոնք ենթարկվում են հասարակայնորեն նշանակալի արժեքների որոշակի արժեզրկմանը, ինչի փոխարեն առաջ են մղվում աշխատանքից բավարարվածության կարիքները: Նման մարդիկ աշխատանքի մեջ ներգրավվածության միջոցով հակված են խուսափել անձնական խնդիրներից: Որպես հետևանք, անձը շեշտադրում է միայն իր աշխատանքը, ձգտում է երևալ միշտ որպես անհրաժեշտ և կարևոր աշխատակից: Նման մարդիկ, որպես կանոն, կախված են հատկապես արտաքին գնահատականներից [20]: Մի կողմից, աշխատանքի մեջ խորասուզված անձանց մոտ նկատվում է Ես-կառուցվածքի աճ, շեշտադրվում է անհատականությունը, տեղի է ունենում գործունեության որակի զարգացում, իսկ մյուս կողմից՝ նկատելի են դառնում նաև անհատականության որակական փոփոխությունները, որոնք ներառում են սոցիալական միջավայրի հանդեպ հավասարակշռող և հարմարվողական մեխանիզմների ճնշումը և նույնիսկ ոչնչացումը, շատ դեպքերում աշխատանքային կախվածությունն ունեցող անձը ներգրավված չէ մասնագիտական զարգացման մեջ: Ավելի հակված են հուզական այրման համախտանիշին այն մարդիկ, ովքեր ունեն մշտական ներքին կոնֆլիկտ՝ կապված աշխատանքի հետ: Նման խնդրի հետ հաճախ առնչվում են կանայք, ովքեր ունեն ներքին հակասություններ ընտանեկան և աշխատանքային դերերի համակցման գործընթացում [36]:

Ամերիկացի հոգեբույժ Զ. Ֆրեյդենբերգը հուզական այրումը

ընթացում է որպես համախտանիշ, միևնույն ժամանակ նա առանձնացնում է անհատական այն հատկանիշները, որոնք նպաստում են այդ համախտանիշի ներգործությանը.

1. գեր պատասխանատվություն, երբ մարդն իրեն ամբողջությամբ նվիրում է աշխատանքին, հակված է տալու ավելին, քան հետ ստանալու,

2. սեփական շահերի կորուստ, որն արտահայտվում է սոցիալական կյանքի անլիարժեքությամբ, ինչը փոխարինվում է գերձանրաբեռնված աշխատանքով,

3. ավտորիտարիզմ, որն արտահայտվում է աշխատանքային հարաբերություններում այլոց վերահսկելու կամ հնազադեցնելու ձգտումով,

4. աշխատակիցների հետ հոգեբանական նույնականացում:

Վերը թվարկած հատկանիշների ազդեցության վերաբերյալ տարբեր կարծիքներ կան, բայց անվիճելի է այն փաստը, որ բոլորը կարևոր դեր են խաղում կյանքի դժվարություններին դիմակայելու գործում, հատկապես, սոցիալական միջավայրի հետպատերազմական իրողություններին դիմակայելու տեսանկյունից:

Որոշ հեղինակներ կարծում են, որ սոցիալական ապատիայի և, որպես դրա ցուցիչներից մեկի՝ հուզական այրման, առաջացման համար մեծ ազդեցություն ունեն սոցիալական առասպելները: Յուրաքանչյուր հասարակությանը, մասնավորապես, որոշակի սոցիալական խմբերին, հատուկ են որոշակի թեմատիկայով և ուղղվածությամբ սոցիալական առասպելներ: Այդուհանդերձ, հասարակության ներսում գոյություն ունեցող սոցիալական առասպելները, որպես մտածողության կարծրատիպեր, առավելապես նշանակալի են դառնում հասարակության համար գոյաբանական նշանակություն ունեցող արտակարգ իրավիճակներում, պատերազմական և հետպատերազմական շրջափուլերում: Որքան անձը անշեղորեն հավատում և հետևում է այդ առասպելներին, այնքան «կտրվում է» իրականությունից, անընդունակ է դառնում դրսևորելու համարժեք սոցիալական վարքագիծ և ինքնառեալիզացվելու սոցիալական միջավայրում: Որպես օրինակ, նշենք նման առասպելներից մի քանիսը.

1. «Ես չեմ կարող սխալվել իմ որոշումներում»,
- 2.» Ես պետք է զսպեմ իմ պահանջմունքները, քանի որ հիմա դրա ժամանակը չէ»,
3. «Ես աշխատանքում անհաջողության իրավունք չունեմ»,
4. «Ես պետք է ամեն ինչում օրինակելի լինեմ»:

Հատկանշական է նաև, որ հուզական այրման հատկանիշները, որոնք նաև սոցիալական ապատիայի ցուցիչներն են, հանդիպում են անձի կենսագործունեության տարբեր ոլորտներում, ունեն մասնագիտական ոլորտը բնութագրող արտահայտված հատկանիշներ: Այդուհանդերձ, սոցիալական ապատիայի և հուզական այրման երևույթներն առավելապես ակնառու են դառնում սոցիալական միջավայրի անկայունության, սոցիալական ինստիտուտների անարդյունավետության, արտակարգ իրավիճակների պայմաններում: Պատահական չէ, որ այդ բացասական երևույթները հաճախ հանդիպում են հետպատերազմական միջավայրերում: Այդ ցուցիչները բացահայտում են անձի արժեքային կողմնորոշումների ճգնաժամը՝ արժեքների ոչ կառուցողական փոխակերպումները, հարմարվողական կարողությունների մակարդակը՝ անձի սոցիալական հարմարվողականությունը, դիմադրողականությունը արտաքին սթրեսորների հանդեպ, հուզական կայունության, սոցիալական ակտիվության կամ սոցիալական ապատիայի աստիճանը և այլն [80]: Դ. Մեդիգանը և Թ. Քարրընը, ովքեր ուսումնասիրել են անձի հուզական այրման և մոտիվացիայի փոխազդեցությունը, հանգել են կարծիքի, որ մարդիկ, ովքեր դժգոհ են իրենց մասնագիտական աճից և ինքնավարության բացակայությունից, ավելի հակված են հուզական այրման: Ընդհանրացնելով այդ եզրակացությունը, կարելի է ենթադրել, որ սոցիալախես նշանակալի սպասելիքների անբավարարվածությունը կարող է հանգեցնել ապատիկ վիճակի, երբ անձն արդեն ոչ թե չի կարողանում հասնել նորանոր հաջողությունների կամ ձեռքբերումների իր կենսագործունեության մեջ, այլ՝ «չի ուզում» կամ այլևս մոտիվազգված չէ ինքնազարգացման և ինքնառեալիզացման

մարտահրավերներով [59; 73]:

Այսպիսով, կարելի է ընդգծել, որ սոցիալական ապատիայի տարածումը ժամանակակից հասարակության մեջ պայմանավորված է վերջին տասնամյակներում ի հայտ եկած սոցիալական վարքագծի ազդեցությամբ, որը դրսևորվում է դեպի շուկայական հասարակություն անցման, կենսագործունեության անհատականացման և սպառողական մշակույթի ամրապնդման մեջ: Սոցիալական ապատիան հետևանք է անձի արժեքային համակարգի ճգնաժամի, այն առաջացնում է անտարբերություն ոչ միայն արտաքին, սոցիալական երևույթների, այլև սեփասկան ես-ի հանդեպ: Արժեհամակարգի ճգնաժամի հետևանքով առաջաված անտարբերությունը սեփական ես-ի և արտաքին աշխարհի հանդեպ թույլ չի տալիս մարդուն գիտակցել իր նշանակալի կողմերը և կարողությունները, իսկ սոցիալական ապատիայի խորացումը ոչ միայն նպաստում է արժեհամակարգի ճգնաժամի պահմանմանը, այլև հանգեցնում է անձի ինքնության կառուցվածքային ճգնաժամի:

Անձի նույնության (ինքնության) ճգնաժամը կարող է ենթադրել նույնության տարբեր մոդելների միջև հակասության առկայություն: Հետպատերազմական միջավայրում անձի արժեքային ճգնաժամը կարող է արտահայտվել ինքնությունը ներկայացնող կարծրատիպերի մարգինալացմամբ և, ընդհանուր առմամբ, մարգինալ ինքնության առկայությամբ՝ որպես հետպատերազմական իրողություններին հարմարվողական մեխանիզմ: Անձի սոցիալական, էթնիկական և մասնագիտական նույնության դրսևորումները դադարում են լինել կայուն, և տիրապետող է դառնում իրավիճակային, փոփոխական նույնության մոդելը: Այլ խոսքերով, հետպատերազմական միջավայրում սոցիալական ապատիայի հետ զուգընթաց հաճախ կարելի է հանդիպել սոցիալական մոբիլության երևույթի: Մինչ արտակարգ իրավիճակում կամ մինչպատերազմական շրջափուլում դրսևորված անձի նույնության մոդելն աստիճանաբար ձեռք է բերում սոցիալական մոբիլության հատկանիշներ՝ նույնության մոդելը վեր է ածվում նույնականացման մոդելի, ձեռք է բերում գործընթացային բնույթ, որն առավելապես կախված է լինում արտաքին սթրեսորների ազդեցությունից: Անձի

ինքնության մոդելների միջև ստեղծվող հակասությունը նույնպես կարող ենք համարել անձի արժեհամակարգի ճգնաժամի հետևանք, երբ փոփոխությունների է ենթարկվում անձի սոցիալական և հոգեբանական նույնությունը: Է. Էրիկսոնը այդ ֆենոմենն անվանում է հոգեսոցիալական ճգնաժամ, որը դիտարկում է որպես նոր ինքնության ծեռք բերման անխուսափելի փուլ: Ինչպես մենք միայն հիվանդության ժամանակ ենք գիտակցում մեր օրգանիզմի բարդությունը, այնպես էլ միայն ճգնաժամի (թե՛ հասարակական և թե՛ անհատական) պայմաններում է միայն պարզ դառնում, թե անհատը իրար հետ փոխկապակցված գործոնների ինչպիսի զգայուն ամբողջություն է ներկայացնում: Որոշ մարդկանց ու խմբերի և պատմության որոշ փուլերում այդ ճգնաժամը կարող է դրսևորվել նվազագույն ուժով, իսկ ուրիշ մարդկանց ու խմբերի և պատմության այլ շրջաններում այդ ճգնաժամը կարող է ունենալ կրտիկական, պայթյունավտանգ իրավիճակի գծեր, դառնալ մի յուրատեսակ «երկրորդ ծնունդ», որը կարող է ուղեկցվել լայն տարածված ներուզով կամ սուր արտահայտված գաղափարական խռովքով: Նման դեպքերում տարբեր են լինում մարդկանց կեցվածքները. որոշ մարդիկ հանձնվում են ճգնաժամին, այսինքն՝ հայտնվելով դրա ճիրաններում, դրսևորում են ներոտիկ կամ հանցավոր վարքագիծ, մյուսները հաղթահարում են ճգնաժամը ակտիվորեն, անձնուրաց ձևով մասնակցելով գաղափարական, կրոնական, քաղաքական, մշակութային և այլ շարժումներին [281]: Ինքնության ճգնաժամը արդյունք է այն վիճակին, երբ անձը չի կարողանում համատեղել նոր իրավիճակի կողմից առաջադրված պահանջները նախկին դիրքորոշումների ու հայացքների հետ:

Այդ պատճառով էլ անձի ինքնության ձևավորման վրա ազդում են մի շարք գործոններ, որոնք պայմանավորված են սոցիալական շրջապատի և, մասնավորապես, հետպատերազմական իրողությունների սոցիալ-հոգեբանական յուրահատկություններով: Այդ կտրվածքով՝ նշանակալից դեր են խաղում հետպատերազմական միջավայրում արժեքային դիրքորոշումները և ընկալումները, որոնք կարող են նպաստավոր լինել անձի ինքնության գիտակցմանը: Ներխմբային կամ ներհասարակական տեսանկյունից անձի

ինքնությունը հիմնվում է սոցիալական խմբի էթնո-մշակութային գծերի համալիրի վրա, որոնցով այդ խմբի անդամները տարբերում են իրենց այլ՝ նույնիսկ մշակութային առումով մոտիկ, խմբերից: Նշենք հետպատերազմական միջավայրում օտար խմբերի վերաբերյալ պատկերացումների կարծրատիպային դառնալու ընդհանուր միտման մասին, երբ խմբի մասին պատկերացումները ամբողջացվում են և սոցիալական խումբն իրեն բնութագրում է այլ խմբերի հետ հակադրվելու կարծրատիպերի միջոցով: Այլ խոսքերով՝ հետպատերազմական միջավայրն առանձնանում է ոչ միայն անձի արժեհամակարգի ճգնաժամի հատկանիշներով, այլև սոցիալական խումբը նույնպես հայտնվում է նույնության ճգնաժամի պայմաններում:

Անձի ինքնության գոյության առաջնահերթ պայման է «մենք-նրանք» դուալ հակադրությունը: Այն թույլ է տալիս ոչ միայն ներկայացնել սեփական ես-ը որպես եզակի, կայուն հոգեբանական հատկանիշների համալիր, այլև կառուցել արտաքին աշխարհի մասին կայուն պատկերացումներ և արժևորել «մենք»-ը «այլոց» միջոցով: Պատահական չէ, որ անձի արժեհամակարգի ճգնաժամի պայմաններում և հետևանքով խախտվում է ինքնաճանաչողության և ինքնաներկայացման նախկին մոդելը և անձը հայտնվում է նույնականացման գործընթացի նորովի հաղթահարման խնդրի առջև՝ այն համապատասխանեցնելով հետպատերազմական միջավայրի սոցիալական մոբիլության կամ սոցիալական անկայունության պայմաններին: Քանի որ անձի և սոցիալական խմբի «մենք-այլք» համեմատությունը ներկայանում է որպես ինքնության պարտադիր հատկանիշ, ապա հետպատերազմական իրողություններով պայմանավորված արժեքային ճգնաժամն անվերապահորեն արտահայտվում է հենց այս դուալ հակադրության միջոցով՝ փոխակերպման են ենթարկվում ոչ միայն «մենք»-ի, այլև «այլոց» բնութագրող արժեքներն ու պատկերացումները:

Անձի արժեքային ճգնաժամի դրսևորումները որոշ հեղինակներ համեմատում են մարգինալ անձի ձևավորման, նրա ինքնության ճգնաժամի հասկացության շրջանակի հետ [12]: Այս համատեքստում արժեքային ճգնաժամը բացահայտվում է

մարզինալ անձի բնութագրման հետևյալ չորս մակարդակներում՝

- ✓ սոցիալ-աշխարհագրական,
- ✓ մշակութա-փոխակերպական,
- ✓ անհատական-գաղափարական,
- ✓ անձնային-ստեղծագործական:

Այս մակարդակներից յուրաքանչյուրը ճշգրտում և նեղացնում է մարզինալ անձի սահմանումը [12; 13]:

Սոցիալ-աշխարհագրական մակարդակում «մարզինալ անձ» հասկացությունը բացահայտվում է որպես անհատ, որը հայտնվել է մշակույթների հատման գծում, սակայն չի ընդունել դրանցից որևէ մեկը: Այս մակարդակի առանցքային հասկացություններն են՝ միգրացիա, ներգաղթածներ, փախստականներ, վերաբնակիչներ, սոցիալական շերտավորում, սոցիալական մոբիլություն, մշակույթների փոխազդեցություններ, միջէթնիկական (միջռասսային) ամուսնություններ, էթնիկական (ազգային) փոքրամասնություններ, գաղութացում, երկակի վարքագիծ և ինքնագիտակցություն, անհանգստություն, ագրեսիվություն, ադապտացիա, ասսիմիլյացիա, ինտեգրացիա և այլն:

Մշակութա-փոխակերպական մակարդակում մարզինալ անձն այն անհատն է, որը փոխակերպական գործընթացների արդյունքում հայտնվել է սոցիալ-մշակութային գերակայությունների (դոմինանտների) կտրուկ փոփոխությունների վիճակում, ընդամին, այդ փոփոխությունների արագությունը նշանակալից չափով գերազանցում է դրանց հանդեպ անձի ադապտացիայի ժամաակին: Այս մակարդակի առանցքային հասկացություններն են՝ պոստմոդեռնիզմ, բաց (գլոբալ) հասարակություն, փոխակերպվող (անցումային) հասարակություն, հասարակության տրանզիտային վիճակ, կառուցվածքների շարժունություն, բիֆուրկացիայի վիճակ, հատվածականություն, ապակենտրոնություն, դեզինտեգրացիա, նորմերի և արժեքների ճգնաժամ, անոմիա, նույնականություն (նոր ինքնություններ, ինքնության ճգնաժամ և այլն), կոգնիտիվ դիսսոնանս և բարոյական երկընտրանք, ֆրուստրացիա, նևրոտիզմ, սթրես և այլն:

Անհատական-գաղափարական մակարդակում մարգինալ նալ անձ հասկացությունը բացահայտվում է որպես անհատ, որն օժտված է խարիզմայով, սակայն դեռ զանգվածների (ուրիշների) վրա չունի ազդեցություն: Այս մակարդակի առանցքային հասկացություններն են՝ խարիզմատիկ (ոչ ձևական) լիդեր, ընտրյալություն, օտարում, արտամղում, ռեակտիվ կազմավորում, պրոյեկցիա, սիմվոլացում, ամրագրում, ռեյատիվիզմ, փաստերի վկայակոչում առանց գնահատումների, շեղվող վարք, ներքին հակասականություն և վարքագծի անհետևողականություն:

Անձնային-ստեղծագործական մակարդակում մարգինալ անձը ստեղծագործող անհատ է, որի ստեղծագործության արդյունքները ոչ այնքան ավանդույթի շարունակությունն են, որքան սկզբունքորեն նոր ուղղություններ՝ հոգևոր և մշակութային վերարտադրության ոլորտներում, որոնք անմիջականորեն կամ անուղղակիորեն միտված են գոյություն ունեցող ավանդույթների քանդմանը: Այս մակարդակի առանցքային հասկացություններն են՝ հակվածություն առ ստեղծագործություն, նորարարություն, դիմադրություն, ժխտում, սուբլիմացիա, կոնվերսիա, փոխհատուցում, երևակայություն, ռացիոնալիզացիա, ռեգրեսիա, սրված ռեֆլեքսիա և ինքնագիտակցություն, քննադատական և կասկածապաշտական մտածելակերպ, որը կարող է հասնել ցինիզմի աստիճանի, մեկուսացվածություն, փակվածություն, օտարվածություն, միայնություն [7; 13; 156]:

Թեև մարգինալ խմբերը, իրավիճակները և մարգինալության տիպերը բազմազան են, այնուհանդերձ, կարելի է խոսել մարգինալ անձի ընդհանրական հոգեբանական հատկությունների մասին, որոնք ի հայտ են գալիս նաև հետպատերազմական շրջափուլում՝ այս կամ այն չափով նշանավորելով անձի արժեքային փոփոխությունները և ինքնության ճգնաժամը:

Ակնհայտ է, որ հետպատերազմական իրողություններին ներկա անձը, ով այս կամ այն չափով մարգինալ անձ է, տարբերվում է «նորմալ» մարդուց, այսինքն՝ նրա կեցությունն ու գիտակցությունը, վարքագիծն ու արժեհամակարգն ունեն իրենց ուրույն տրամաբանությունն ու հոգեբանությունը: Մարգինալ անձի և ոչ մարգինալի միջև եղած գլխավոր տարբերությունն այն է, որ մարգինալ անձի հոգեկանը գտնվում է անկայուն, փոփոխական, հա-

կասական, երկփեղկված. սահմանագծային վիճակում, ինչն էլ իր հերթին պայմանավորում է նրա հոգեբանական գծերի յուրահատկությունները: Մարգինալ անձի մտածելակերպի ու գործելակերպի բնույթը պայմանավորում են նրա հոգեւոցիալական հատկությունների յուրահատկությունները [14]:

Դեռևս Ռ. Փարկը մատնանշել էր մարգինալ անձնավորության հետևյալ հատկությունները՝ լուրջ կասկած սեփական անձի արժեքի հանդեպ, անորոշ կապեր բարեկամների հետ, մշտապես մերժված լինելու զգացողություն, ստորանալու վախի պատճառով անորոշ վիճակներից խուսափելու միտում, ուրիշների ներկայությամբ հիվանդագին ամոթխածության դրսևորում, չափից դուրս երազկոտություն, ավելորդ անհանգստություն ապագայի և ռիսկային նախաձեռնության հանդեպ, հաճույք ստանալու անընդունակություն, վստահություն այն բանում, որ ուրիշները անբարյացակամ են վերաբերելու իր նկատմամբ [81]: Է. Սթոունքվիստը մատնանշել է մարգինալ անձի հետևյալ գծերը՝

- անկազմակերպվածություն, կաթվածահարություն, կոնֆլիկտի աղբյուրը որոշելու անկարողություն,
- «անանցանելի պատի» զգացողություն, չհարմարվածություն, անհաջողակություն,
- անհանգստություն, ներքին լարվածություն, տագնապալիություն,
- մեկուսացվածություն, օտարվածություն, ամոթխածություն, չներառվածություն,
- հուսախաբություն, ընկճվածություն, հուսահատություն,
- «կենսական կազմակերպության» կազմաքանդում, հոգեկան անկազմակերպվածություն, գոյության անիմաստություն,
- Եսակենտրոնություն, պատվասիրություն և ագրեսիվություն:

Գրականության մեջ, հենվելով Ռ. Փարկի և Է. Սթոունքվիստի գնահատումների վրա, սովորաբար առանձնացնում են մարգինալ անձի հետևյալ հոգեբանական բնութագրերը՝

- ✓ կյանքի դժվարություններին թույլ դիմադրություն,
- ✓ անկազմակերպվածություն, շփոթվածություն,
- ✓ տազնապալի երևույթները ինքնուրույն վերլուծելու անկարողություն,
- ✓ անհանգստություն, տազնապալիություն, ներքին լարվածություն, որը կարող է վերածվել խուճապի,
- ✓ ինքնամոռիություն, մեկուսացվածություն, հոգեբանական օտարվածություն,
- ✓ ուրիշների նկատմամբ անբարյացակամության դրսևորում,
- ✓ քննադատական, սկեպտիկական, երբեմն ցինիկ վերաբերմունք աշխարհի նկատմամբ, հարաբերապաշտական, չգնահատող աշխարհայացք,
- ✓ սեփական կյանքի կազմակերպման անկարողություն,
- ✓ ապակողմնորոշվածություն, հոգեկան անկազմակերպվածություն,
- ✓ գոյության անիմաստության զգացողություն,
- ✓ հակվածություն դեպի հոգեկան պաթոլոգիայի և ինքնասպանության, եսակենտրոնություն, պատվասիրություն և ագրեսիվություն [126; 127; 161]:

Ինչպես մարզինալ անձինք ընդհանրապես, այնպես և հետպատերազմական շրջափուլում արժեհամակարգի մարզինալացման հատկանիշներով առանձնացող անձինք դրսևորում են հոգեկան այնպիսի գծերի առկայություն, ինչպիսին է, օրինակ, անձի ապակողմնորոշվածությունը, որն արտահայտվում է «Ես-կոնցեպցիայի» և ինքնանույնացման փոխակերպումներով: Սոցիալական նույնացման ժամանակ անձը ցանկանում է ընդունվել ուրիշների կողմից, գնահատվել ռեֆերենտային խմբերի կողմից, ինչպես նաև ցանկանում է ինքն իրեն բացահայտել, իրականացնել իր ներքին պոտենցիալը, սակայն բախվում է մեծաթիվ, հաճախ անլուծելի խնդիրների հետ: Հետպատերազմական միջավայրում անձնավորության արժեհամակարգը հաճախ համապատասխանում է մարզինալ անձի հիմնական գծերին: Դրանք են՝ անտարբերություն կյանքի ու շրջապատի նկատմամբ, սիրո, ընտանիքի գաղափարների կո-

րուստ, հասարակական գիտակցության բացակայություն, կյանքի, գիտության ու մշակույթի առաջընթացի գիտակցման բացակայություն, կյանքի, գիտության ու մշակույթի առաջընթացի գիտակցման բացակայություն, կրոնական նախապաշարմունքների առատություն, որը հեռացնում է մարդուն կյանքի օբյեկտիվ օրինաչափություններից և այլն [172; 175]:

Բարոյահոգեբանական նման նկարագիր ունեցող անձնավորությունը գրեթե զրկվում է հասարակական նկարագիր ունենալուց և, հետևապես, ապրում ու գործում է կյանքի ու հասարակության օրենքներին հակառակ: Նման անձնավորությունն այնպիսի լուրջ սոցիոպաթոլոգիայի, սոցիալական ախտահարման է ենթարկվում, որ երբեմն նրան նորից կյանքի կոչելը անհնար է դառնում: Արմատապես փոխվում են մտածողության ընթացքը, երևակայությունը, խոսքը, հույզերն ու զգացմունքները, կամքը, հայացքներն ու համոզմունքները, հետաքրքրություններն ու պահանջմունքները, վերաբերմունքը շրջապատի, ուսման, աշխատանքի նկատմամբ, բարոյական ու արժեքային կողմնորոշումները, մարդկանց, նրանց արարքների ու գործունեության գնահատման չափանիշները և այլն: Այսինքն՝ մարդը դուրս է գալիս իր սոցիալական, հոգեբանական, բարոյաիրավական զարգացման նորմալ ուղուց և նրա զարգացումը ստանում է միանգամայն այլ ուղղվածություն, որը նրան տանում է աստիճանական անկման ու վերջնական կործանման [1]:

Հետպատերազմական միջավայրում արժեքային ճգնաժամի հետևանքով որոշակի փոփոխությունների է ենթարկվում նաև անձի ինքնագնահատականը: Անձի ինքնագիտակցության կարևորագույն բաղադրիչներից մեկը սեփական ուժերին, բնավորության, խառնվածքի գծերին տրվող գիտակցված գնահատականն է: Որքան մեծ է անձի անհարմարվածության աստիճանը հետպատերազմական իրողություններին, այնքան էլ ցածր է ինքնագնահատականը: Ցածր ինքնագնահատականի կառուցվածքում, ըստ Գ. Լասուելի, ընկած են հինգ բացասական զգացմունքներ՝

- սեփական անկարևորության, աննշանության զգացմունք,
- բարոյական անլիարժեքության զգացմունք,
- թուլության զգացմունք,

- միջակության զգացմունք,
- ինտելեկտուալ անադեքվատության զգացմունք:

Եվ, հակառակը, եթե անձը բարեհաջող հաղթահարում է նոր իրողություններին հարմարման գործընթացը և արժեքային ճգնաժամը, ապա նրա ինքնագնահատականը լինում է բարձր:

Հաշվի առնելով հետպատերազմական միջավայրում արժեքային ճգնաժամի հետևանքով ի հայտ եկող նույնության և ինքնագնահատականի որոշակի փոխակերպումները, գրեթե անխուսափելի են դառնում անձի կողմից սոցիալական նոր դերերի ստանձնումն ու կատարումը: Անձի և սոցիալական դերերի հարաբերակցության հարցը կարևոր նշանակություն է ստանում արժեքային ճգնաժամի հետ կապված խնդիրների, նախ և առաջ հետպատերազմական միջավայրում անձի և սոցիալական դերերի մարգինալացման գործընթացների համատեքստում:

Հետպատերազմական հասարակության մեջ մարգինալացման գործընթացի հետևանքով հայտնվում են մարդիկ, ովքեր զրկվում կամ կորցնում են իիրենց սոցիալական կարգավիճակը և սոցիալական դերերը, ժամանակավորապես դառնում կարգազուրկ և դերազուրկ, որից հետո նրանք փնտրում և կատարում են նոր դերեր: Նույնիսկ եթե մարդը ձեռք է բերում նոր կարգավիճակ, ապա այդ կարգավիճակի հետևանքով նա հայտնվում է անսովոր, այսինքն՝ մարգինալ, միջանկյալ, սահմանագծային իրավիճակում: Հոգեբանական առումով անձը, մի կողմից, այդքան հեշտությամբ չի կարողանում «մոռանալ» իր սոցիալական կարգավիճակը ու սոցիալական նույնությունը և դրա հետ կապված դերերը, որոնք իրենց էմոցիոնալ կողմով նշանակալից հետք են թողել նրա հոգեկանի վրա, մյուս կողմից՝ հեշտությամբ չի կարողանում հարմարվել կամ ձեռք բերել նոր կարգավիճակներ ու դերեր: Ավելի հաճախ ոչ թե նա է ընտրում իր նոր կարգավիճակը, այլ օբյեկտիվ հանգամանքներն են նրան պարտադրում որոշակի, հաճախ ոչ այնքան նպաստավոր, կարգավիճակ և դրա հետ կապված սոցիալական դերեր: Բնականաբար, նման իրավիճակում կարող են հայտնվել ոչ միայն պատերազմի մասնակից անձինք, այլև նրանց ընտանիքի անդամները, բռնի տեղահանվածներն ու փախստականները:

Հետպատերազմական հասարակությունում սոցիալական դերերի փոխակերպումն առաջանում է հետևյալ դեպքերում՝

- երբ ռեֆերենտային խմբում անձը չի կարողանում ինտեգրվել կամ ունենալ սպասվելիք կարգավիճակը,
- երբ սոցիալական դերերի իրականացման ժամանակ առաջանում է հոգեբանական կոնֆլիկտ,
- երբ հակասություն է առաջանում անձի հոգեկանի կառուցվածքային տարրերի, բազում «Ես-կոնցեպցիաների», հատկապես գործող և իդեալական «Ես»-երի, ըստ այդմ էլ՝ իրական և երևակայական դերերի միջև,
- երբ դերային կառուցվածքում տեղի են ունենում խախտումներ,
- երբ բացակայում է դերի հետ նույնացման գործողությունը կամ, հակառակը, չափազանց մեծ է անձի և դերի միջև առկա հոգեբանական հեռավորությունը,
- երբ առկա են անհիմն կամ չափից դուրս դերային սպասումները:

Արժեքային ճգնաժամի հետևանքով փոխակերպված դերերը տարբերվում են ոչ ճգնաժամային դերերից նախևառաջ այն բանով, որ առաջիններին բնորոշ է հակասականությունն ու կոնֆլիկտայնությունը: Սոցիալական դերի անարդյունավետ կատարումը հիմնականում կապված է դերային կոնֆլիկտում անձի ներառվածության աստիճանի հետ: Որքան ուժեղ է անձը ներառված դերային կոնֆլիկտում, այնքան էլ մեծ է դերակատարման անարդյունավետությունը:

Հետպատերազմական իրողություններով պայմանավորված՝ արդեն իսկ անձի հոգեկանի կառուցվածքում առկա է հակասություն նրա կայուն և դինամիկ կողմերի, անգիտակցական-գիտակցական մակարդակների միջև: Համեմատաբար կայուն է անձի հոգեբանական դիրքորոշումների և վարքագծի կարծրատիպերի համակարգը, իսկ անձի հոգեկան տրամադրությունը, իրական և իրադրային վիճակները փոփոխական են: Անձի ձևավորած սոցիալական դերերի համախմբությունը անձից պահանջում է սոցիալական նորմերի ու

սպասումների շրջանակում կանխատեսելի վարքագիծ, որը բխում է սոցիումի մեջ զբաղեցրած նրա սոցիալ-հոգեբանական կարգավիճակից, հետպատերազմական իրողության սուբյեկտիվ գնահատումից և պատերազմական գործողություններին ներառվածության աստիճանից: Անձի կայուն կարծրատիպերի և դիրքորոշումների բախումը ճգնաժամային կենսափորձի հետ կարող է անդրադառնալ հետպատերազմական միջավայրում հավակնությունների մակարդակի և սեփական հոգեֆիզիկական ուժերի պոտենցիալի և հնարավորությունների, մոտիվացիաների, ձգտումների, նպատակների և դրանց գործնական իրականացման հոգեբանական պատրաստվածության մակարդակի միջև եղած հակասություններում: Վերջինների հիմքում ընկած են անձի ինքնագիտակցության պահանջմունքների իրացման դժվարությունը կարգավորելու սեփական ներքին արժեքներն ու դերերը: Արժեքային ճգնաժամի պայմաններում և հետևանքով անձին դժվար է որոշել, թե արժեքներից որոնք են առաջնահերթ, կամ որոնք են, որ համապատասխանում են անձի իսկական շահերին: Հետպատերազմական իրողություններով պայմանավորված դերային կոնֆլիկտը, որպես հոգեբանական կոնֆլիկտի մի վիճակ, կարող է զարգանալ անձի մոտ սոցիալական նոր կամ փոխակերպված դերի իրականացման ընթացքում և արտահայտվել սոցիալական նորմերի, պահանջների ու դերակատարողի սպասումների անհամատեղելիությամբ: Ինչպես նկատում է Ս. Ի. Երինան, դերային կոնֆլիկտային իրավիճակի հիմնական բնութագիրն այն է, որ դա բնորոշվում է անորոշությամբ, ֆրուստրացվածությամբ և դերակատարի նկատմամբ հնարավոր պատժամիջոցների կիրառմամբ՝ կապված սպասումների հանդեպ նրա վարքագծի անհամապատասխանության հետ: Հենց այս բնութագրերն են դերակատարի մոտ առաջացնում անհանգստություն, լարվածություն և կոնֆլիկտ [170]:

Հետպատերազմական միջավայրում անձի կյանքում դերային կոնֆլիկտներն անխուսափելի են այն իմաստով, որ անմիջականորեն և միջնորդավորված ձևով կապված են արժեքային համակարգի և դրա ճգնաժամի հետ: Ինչպես նշել ենք, արժեքային ճգնաժամն առհասարակ բնորոշ է հետպատերազմական միջավայրին: Սակայն հնարավոր է, որ անձը չընկալի և չգիտակցի, որ ինքը գտնվում

է արժեքային առումով հակասական իրավիճակում: Արդյո՞ք նման դեպքերում գործ ունենք մարգինալության երևույթի հետ: Որոշ հետազոտողներ կարծում են, որ դերային կոնֆլիկտի սահմանման դեպքում կարևոր է հաշվի առնել այն, որ դերակատարը գործում է անհամատեղելի սպասումների պայմաններում, որոնք ընկալվում և գիտակցվում են որպես անհամատեղելի, իրար հակասող և բացառող:

Դերային կոնֆլիկտի ծագման համար անհրաժեշտ է առնվազն երեք պայման.

- ✓ Անձը միաժամանակ պետք է կատարի երկու և ավելի դերեր,
- ✓ Այդ դերերը պետք է հակասական կամ մասամբ հակասական պահանջներ ներկայացնեն նրա վարքագծային ձևերին, այսինքն՝ լինեն մրցակցող պահանջներ,
- ✓ Անձը պետք է այս կամ այն չափով գիտակցի, որ իր կողմից կատարվող դերերը անհամատեղելի են, որ դրանք ենթադրում են տարբեր պահանջներ ու սպասումներ:

Սովորաբար առանձնացվում են դերային կոնֆլիկտների հետևյալ տիպերը՝ **միջդերային, ներդերային և անձնային-դերային:**

Միջդերային կոնֆլիկտների մեջ անձը հայտնվում է այն դեպքում, երբ միաժամանակ կատարում է այնպիսի դերեր, որոնք նրան առաջադրում են անհամատեղելի կամ դժվար համատեղելի գործողություններ: Միջդերային կոնֆլիկտ ստեղծվում է այն դեպքում, երբ անձը միաժամանակ կատարում է երկու այնպիսի դերեր, որոնք պահանջում են տարբեր վարքագծեր, տարբեր գնահատականներ կամ մոտեցումներ: Պետք է ասել, որ դերային կոնֆլիկտն առաջանում է ոչ թե այն ժամանակ, երբ անձը գտնվում է տարբեր սպասումների համակարգում, այլ այն ժամանակ, երբ այդ սպասումները սուբյեկտիվորեն ունեն միանման նշանակություն:

Օրինակ՝ միջդերային կոնֆլիկտ կարող է ունենալ այն զինվորականը, որի զավակը ծառայում է իր զորամասում: Պատերազմական իրադրությունում այդ կոնֆլիկտն ավելի ցայտուն է դրսևորվում. նա պարտավոր է իր զավակին ուղարկել առաջին գիծ, գիտակցե-

լով, որ նա կարող է այդտեղ զոհվել: Միջդերային կոնֆլիկտ է առաջանում նաև այն դեպքում, երբ անձը պետք է կատարի այնպիսի դերեր, որոնցից յուրաքանչյուրը նրանից պահանջում է ֆիզիկական, մտավոր, կազմակերպչական զգալի էներգիայի ծախսում:

Ներդերային կոնֆլիկտները տեղի են ունենում այն դեպքում, երբ անձն իրեն ընկալում է այնպիսի վիճակում, երբ ուրիշները նրանից բոլորովին այլ սպասելիքներ ունեն՝ կապված այդ դերի իրականացման հետ: Այսինքն՝ կոնֆլիկտն առաջանում է այն պատճառով, որ կա պարտադիր դերային վարքագիծ, սակայն տարբեր մարդիկ կամ տարբեր խմբեր տարբեր ձևերով են պատկերացնում միևնույն դերի հետ կապված պարտականությունները: Քանի որ պարտադիր դերային վարքագծի ըմբռնման երկու եղանակ կա, ուստի ներդերային կոնֆլիկտները լինում են երկու կարգի: Մեկը վերաբերում է միևնույն դերակատարի նկատմամբ տարբեր խմբերի սպասումների միջև եղած տարաձայնություններին: Մյուսը ենթադրում է յուրաքանչյուր խմբում այդպիսի տարաձայնության գոյությունը:

Անձնային-դերային կոնֆլիկտը ծագում է, երբ անձի որակները, ներքին արժեքները, մոտիվացիաները, ստանդարտները, պատկերացումներն ու պահանջմունքները չեն համապատասխանում սոցիալական դերին կամ հաստատված դերային վարքագծին: Այսինքն՝ սուբյեկտիվ «Ես»-ը բախվում է սոցիալական դերի հետ, որի իրականացնողը տվյալ անձն է: Որպես կանոն՝ դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ տվյալ դերին վերագրված գործողությունների համակարգը հակասում է սուբյեկտիվ «Ես»-ին: Ներանձնային դերային կոնֆլիկտները ծագում են այնպիսի պայմաններում, իրավիճակներում կամ միջավայրերում, որոնք հակասական պահանջներ են ներկայացնում անհատին, գործունեության սուբյեկտին՝ հարկադրելով դրսևորել սոցիալական դերերի տարբեր տիպեր:

Դերային կոնֆլիկտների դեպքում անձն, իր ներքին հոգեվիճակի կայունությունը ապահովելու նպատակով կիրառում է մի շարք պաշտպանական մեխանիզմներ: Դրանցից են՝ ռացիոնալիզացիան, գործունեության մասնատումը, ռեպրեսիան և նեգատիվիզմը:

Մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից կարևոր է պարզել, թե հետպատերազմական իրավիճակներում սոցիալական դերերը,

հատկապես գերիշխող (դոմինանտ) դերերը և դերային դիմակները ինչպիսի ազդեցություն են ունենում անձի հոգեկան աշխարհի վրա և, երկրորդ, թե անձի հոգեւոցիալական բնութագրերը, դիրքորոշումներն ու մոտեցումները ինչպիսի շտկումներ են մտցնում դերային վարքագծում:

Ժամանակի ընթացքում որոշ դերեր հաճախ դառնում են գերիշխող, պարտադրող, կարծես թե անձի էությունը ճնշող, որոնց հետևանքով աղճատվում է նրա «Ես-կոնցեպցիայի» ամբողջականությունը: Արդյո՞ք այդպիսի դերերը «խեղդում են» անձի բուն էությունը, թե՞ դոմինանտ դերի առկայությունը, անձի կողմից նրա ընդունումն ու իրականացումը, ընդհակառակը, նպաստում են անձի էության դրսևորմանը: Արդյո՞ք առկա է անձի ներքին էության համաձայնությունը դոմինանտ դեր-դերակատար հարաբերության հետ: Եթե գոյություն ունի այդպիսի ներքին համաձայնություն, ապա անձի հոգեկանում չեն լինի հակասություններ: Նման դեպքում մարդիկ նույնանում են իրենց դերին, ընդամին, նրանք ապրում, աշխատում և իրենց ընկալում են այդ դերի շրջանակներում: Իր մասերից մեկի հետ այսպիսի նույնացումը ինչ-որ ժամանակ մարդուն կարող է լրիվ բավարարել, սակայն դա ունի նաև բացասական հետևանքներ: Մասնակի նույնացումը թույլ չի տալիս ձեռք բերելու ինքնաբացահայտման նոր փորձ, ավելի խորը ճանաչելու ինքն իրեն: Դա բացառում կամ նշանակալից չափով նվազեցնում է իր անձի մյուս մասերի հետ նույնացումը: Այսպիսի մասնակի ինքնանույնացման արդյունքում մարդու ինքնադրսևորումը սահմանափակվում է: Բավական է մարդը գիտակցի կամ ունենա չգիտակցված, անորոշ զգացում, այն մասին, որ ինքն իրականացնում է իր անձնային ռեսուրսների ընդամենը մի մասը, ապա նրանում կձևավորվի անլիարժեքության բարդույթ: Եթե դերի հետ նույնացումը տևական է լինում, ապա դա անխուսափելիորեն առաջացնում է հոգեկան ճգնաժամ: Մարդը կանգնում է «հոգեբանական մահվան» առջև, իր ապրած կյանքն իմաստազրկվում է, իսկ եթե չկա ներքին համաձայնություն, ապա անհատը հարկադրված է իրականացնել իր էությանը չհամապատասխանող, պարտադրված դեր: Ինչպե՞ս է այդ դերը անդրադառնում նրա անձի ամբողջականության, հոգեկան առողջության, միջանձնային փոխհարաբերությունների վրա [12; 202]: Պարզվում է, որ հաճախ

դոմինանտ դերն այնպես է սերտաճում անձին, որ նույնիսկ նա չի կարողանում ընկալել, թե արդյոք դեմքն է իրեն առաջնորդում, թե ինքը դերին, չի կարողանում սահմանազատում մտցնել դերի և իր էության միջև: Նման դերակատարման արդյունքում նա ապակողմնորոշվում է, հայտնվում է ապակառուցողական իրավիճակի մեջ և չի կարողանում ելք գտնել դուրս գալու դոմինանտ դերի կապանքներից: Դա հատկապես տեսանելի է մասնագիտական դերերի կատարման ժամանակ: Երկար ժամանակ կատարելով միևնույն դերը, անձը ձեռք է բերում այնպիսի հատկություններ ու դիրքորոշումներ, որոնք դրսևորվում են նաև նրա գործունեության մյուս ոլորտներում: Այդ ընթացքում նրա խառնվածքի և բնավորության որոշ գծեր շեշտված են արտահայտվում, իսկ որոշ գծեր կամ չեն դրսևորվում կամ էլ, կորցնելով իրենց «ինքնուրույնությունը», ենթարկվում են գերիշխող գծերին: Օրինակ՝ ավտորիտար ոճով գործող ղեկավարը այլ հարաբերություններում (ընտանիքում, ընկերական շրջապատում) նույնպես ցուցաբերում է հրամայելու, կարգադրելու, շրջապատող մարդկանց իրեն ենթարկելու հատկություններ:

Դոմինանտ դերը հաճախ դառնում է անձի չգիտակցված և անկառավարելի մասը: Այն ստիպում է անձին իրականացնել չգիտակցված հարմարվողականություն: Եվ հետզհետե նա կարծես թե կորցնում է իր անհատականությունը՝ հոգուտ ստանձնած դոմինանտ դերի: Դերն իշխում է անձի վրա, ամբողջովին տիրում և շատ նեղ ոլորտ է թողնում նրա ներքին էության ու ներանձնային ռեսուրսների դրսևորման համար [202]: Նույնանալով իր դերին՝ մարդը դառնում է այդ դերի գերին, վերածվում զուտ դերակատարի, ինչը հղի է ներքին, ներանձնային բախումներով, անձի դեզինտեգրացիոն գործընթացներով և արժեքային ճգնաժամի խորացմամբ: Նման դեպքերում նկատվում է անձի հոգեկանում արդեն գոյություն ունեցող կամ ի հայտ եկած նոր հակասությունների սրում՝ կապված նաև նյարդային համակարգի գործունեության դեզինտեգրացման հետ: Վերջինս հաճախ արտահայտվում է ռեակտիվ հոգեծին նևրոզներով, անձնային կառուցվածքի, հարաբերությունների, շարժառիթների կապի ու հարաբերակցության փոփոխմամբ և խաղալմամբ: Այն անմիջապես ազդում է՝

- ✓ անձի կոգնիտիվ ոլորտի,
- ✓ էմոցիոնալ ոլորտի,
- ✓ վարքային ոլորտի,
- ✓ ինտեգրալ ցուցանիշների վրա:

Հետպատերազմական միջավայրում արժեքային ճգնաժամի հետևանքով հոգեկան կառուցակարգերի դեզինտեգրացիան կարող է սպառնալ անձի հոգեկան առողջությանը՝ դրսևորվելով հոգեկանի մշակութային զարգացման ձևախեղման (հոգեբանական ինֆանտիլիզմ, կոգնիտիվ ռիզիդություն, գիտակցության և ինքնագիտակցության իռացիոնալություն և այլն), սոցիալական և անձնային սթրեսայնության (հոգեսոցիալական հետզարգացում, ապատիա, միստիցիզմ և այլն), անձնային ինքնորոշման և ինքնազարգացման դեզինտեգրացիայի, դերերի աններդաշնակության ձևերով:

Մաս 3

Սոցիալ-հոգեբանական անոմիայի հիմնախնդիրը և հայեցակարգային տիպաբանությունը

Անոմիան փիլիսոփայական և սոցիալ-հոգեբանական հայեցակարգ է, որն արտահայտում է հասարակության այն վիճակը, երբ անհատների և հասարակության միջև հարաբերությունները կարգավորող սոցիալական և բարոյական հրամայականների բացակայությունը կամ անկայունությունը հանգեցնում է բնակչության զգալի մասի օտարման:

Հասարակությունը կամ սոցիալական միջավայրն իրենից ներկայացնում է մարդկության պատմական զարգացման ընթացքում ձևավորված սոցիալական կառուցվածքների, գործառույթների և հարաբերությունների համեմատաբար կայուն և ինտեգրված համակարգ, որտեղ մարդկանց միավորման ձևերն իրականացվում են նրանց փոխգործակցության ընթացքում [278] :

Անոմիան առաջացել է հունարեն *ἀνομία* բառից, որը թարգմանաբար նշանակում է «անօրինություն»:

Անոմիան ցույց է տալիս հասարակության այն վիճակը, որը բնութագրվում է սոցիալական նորմերի և ինստիտուտների անկազմակերպվածությամբ, մարդկային գործունեության պայմանների անորոշությամբ և անկայունությամբ, հասարակության կողմից հռչակված նպատակների անհամապատասխանությամբ, ինչպես նաև դրանց հասնելու օրինական միջոցների բացակայությամբ:

Մեկ այլ սահմանման համաձայն՝ անոմիան ներկայացնում է հասարակության հետ կապված անհատական հոգեբանական այն վիճակը, որը բնութագրվում է բարոյալքմամբ, հասարակության հետ կապերի թուլացմամբ և մարդկանցից օտարվածությամբ [144] :

Անոմիան սոցիալական կամ անհատական գիտակցության վիճակ է, որը բնութագրվում է բարոյական նորմերի և արժեհամակարգի փլուզմամբ [261] :

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ անոմիան մեծապես արտացոլում է հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալ-հոգեբանական, բարոյական և հասարակական փոփոխությունները, դրանց առանձնահատկությունները և հաղթահարման հնարավորությունները:

Անոմիան սոցիոլոգիական տերմին է, որը ներմուծվել է Էմիլ Դյուրկհեյմի կողմից՝ բնութագրելու հասարակության այն վիճակը, երբ նրա անդամներից շատերը կորցնում են վստահությունը՝ գոյություն ունեցող նորմերի, արժեքների և ինստիտուտների նկատմամբ [145]:

Անոմիան հայեցակարգ է, որն արտահայտվում է մշակութային տարրերի ոչնչացման պատմականորեն ձևավորված գործընթացներում: Այսպիսով՝ կարող ենք ասել, որ երբ առկա է անոմիա, հասարակությունն ապրում է էթիկական ճգնաժամ, գտնվում է անկայուն ու քաոսիկ վիճակում, երբ քայքայվում է սոցիալական կառուցվածքը, կորչում են սոցիալական արժեքներն ու մշակութային նորմերը:

Անոմիան ներառում է անկարգություն, անկազմակերպություն և ներկայացնում է կոլեկտիվ անվտանգության սպառնալիք [141]: Սոցիալական ցնցումների ժամանակ անոմիան ազդում է բնակչության բոլոր շերտերի՝ հատկապես երիտասարդների վրա [227]:

Անոմիան լայնորեն տարածված է ինչպես սոցիոլոգիական, այնպես էլ հոգեբանական գիտության շրջանակներում և մատնանշում է հասարակության արժեքային և նորմատիվ համակարգի խախտումները: Վերջին տարիներին այս եզրույթն առավել հաճախ օգտագործվում է բնութագրելու համար երիտասարդ սերնդի սոցիալական զարգացման աստիճանը, քանի որ այն երևույթները,

որոնք որոշակի պայմաններում ազդում են հասարակության խոցելի խմբերի վրա, ունենում են մեծ ազդեցություն հենց երիտասարդների շրջանում, իսկ անոմիան, որն այսօր ընկալվում է որպես սոցիալական նորմերի օտարում, ամբողջապես ներկայացնում է նոր և նախկինում ձևավորված արժեքային համակարգի հակազդումը [58]:

«Անոմիա»-ի մասին որոշակի պատկերացումներ են ձևավորվել դեռևս ավելի քան քսան դար առաջ Հին Հունաստանում, որտեղ «*anomos*» եզրույթով մատնանշվել է հասարակության «անօրինական» և «անկառավարելի» վարքաձևը: Այն հանդիպում է նաև Եվրիպիդեսի և Պլատոնի աշխատություններում: Օրինակ՝ Պլատոնն օգտագործել է «անոմիա»-ն՝ ներկացանելու անարխիան, անկարգությունը, անօրինականությունը և անարդարությունը:

Զուգահեռներ անցկացնելով գիտական գրականության այլ ասպեկտների հետ՝ տեսնում ենք, որ ոչ միշտ է «անոմիա»-ն գործածվել հասարակության մեջ գոյություն ունեցող ու հասարակությունը կազմալուծող երևույթները ներկայացնելու համար: Օրինակ՝ ֆրանսիացի փիլիսոփա Ժան Մարի Գույոն անոմիան ներկայացրել է որպես դոգմատիկ իշխանությունից անհատի ազատագրումը մատնանշող դրական երևույթ, սակայն մեծամասամբ այս եզրույթը մատնաշում է օտարումն ու հակասոցիալական վարքի դրսևորումները [11]:

«Անոմիա»-ն իր լայն կիրառումը ստացավ է ֆրանսիացի փիլիսոփա, սոցիոլոգ և հոգեբան Էմիլ Դյուրկհեյմի աշխատություններում: Ի տարբերություն այլ հեղինակների՝ Դյուրկհեյմն այն կապում էր սոցիալական պաթոլոգիայի տարբեր ձևերի հետ: Նրա դիտարկմամբ՝ անոմիան «ավանդական հասարակությունից» իր «մեխանիկական» համերաշխությամբ արդյունաբերական հասարակության «օրգանական» համերաշխության թերի անցման արդյունքն է:

Կարող ենք ասել, որ Դյուրկհեյմի անոմիան ներկայացնում է աշխատանքի սոցիալական այն բաժանումը, որը կազմում է արդյունաբերական հասարակության հիմքը և զարգանում է ավելի արագ, քան նոր գիտակցությունը:

Անոմիան առաջանում է մի կողմից կարիքների ու շահերի, մյուս կողմից՝ դրանք բավարարելու հնարավորությունների հակասության արդյունքում: Սա նշանակում է, որ այն դրսևորվում է նորմատիվային կարգավորման մասնակի կամ ամբողջական

բացակայության ճգնաժամային և անցումային իրավիճակներում, երբ հին նորմերի ու արժեքների համակարգը քայքայված է, իսկ նորը դեռ չի հասցրել հաստատվել: Արդյունքում առաջանում է սոցիալական նորմերի ազդեցության ցածր աստիճան և անարդյունավետություն, որը ներկայացվում է որպես անհատների վարքի սոցիալական կարգավորման միջոց, որտեղ արժեքային նորմատիվ կողմնորոշումները, անորոշությունը, անկայունությունն ու անհամապատասխանությունը դրվում են առաջնային օղակներում: Հենց սրանով էլ պայմանավորված է անոմիայի առաջացումը, որը կարող է դիտարկվել ինչպես կտրուկ և ակնհայտ վատթարացման, այնպես էլ կտրուկ և ակնթարթային բարգավաճման ժամանակ: Երկու դեպքում էլ քայքայվում է հասարակական կարգը, և թուլանում են նրա կարգավորիչ գործառույթները: Արդյունքում սոցիալական հավասարակշռությունը խախտվում է, մարդիկ հասարակության մեջ արագորեն կորցնում են իրենց դիրքերը, իսկ սոցիալական համակարգը ինքնին տատանվում և քայքայվում է:

Է. Դյուրկհեյմն անոմիան համարում էր «արդյունաբերական», այսինքն՝ կապիտալիստական հասարակության բնական վիճակ, երբ հասարակությունը խրախուսում է բոլորի համար անհատական հաջողության նույն նպատակներն ու արժեքները: Մարդկային ցանկությունները բավարարելու սահմանափակ հնարավորությունները կարգավորող և զսպող արդյունավետ նորմերի բացակայությունը շատերին մղում է շեղված վարքի դրսևորման՝ ընդհուպ մինչև ինքնասպանության [11]:

Է. Դյուրկհեյմից հետո շատ գիտնականներ փորձեցին կիրառել մեթոդներ, որոնք հնարավորություն կտան ուսումնասիրելու անոմիա ունեցող հասարակության մեջ ապրող մարդկանց հոգեբանությունը: Ամերիկացի հետազոտող Լեո Սրոուլը առաջինն էր, որ իր առջև խնդիր դրեց բացահայտելու սոցիալական երևույթի հոգեբանական բովանդակությունը: Դյուրկհեյմից կես դար անց՝ 1951 թվականին, Սեֆրուլը ներկայացրեց ժամանակակից մարդու կերպարը՝ որպես ապրված անոմիայի զոհ: Վերադառնալով Դյուրկհեյմին՝ պետք է նշել, որ նա դիտարկում էր սոցիալական անոմիայի երկու դրսևորում՝ տնտեսական և ընտանեկան:

Ընտանեկան անոմիան դիտվում է որպես ընտանեկան

բարոյականության կողմից տրամադրվող սոցիալական հավասարակշռության և կարգապահության խախտում, քանի որ ժամանակակից ընտանիքներում հիմնովին փոխվում են նախկինում ամուսինների զբաղեցրած դերերը, փոխակերպվում են արժեքային կողմնորոշումները, փոխվում է սերունդների հարաբերակցությունը:

Ընտանիքում անոմիայի դրսևորման հիմնական կողմերից մեկը, որը պետք է ավելի մանրամասն դիտարկել, իշխանությունը կրողի փոփոխությունն է: Եթե նախկինում ընտանիքում առաջատար դիրքը զբաղեցնում էր տղամարդը, ապա այժմ ավելի ու ավելի հաճախ ընտանիքի ղեկավարի դերը կատարում է կինը: Լինելով կենցաղային ոլորտում անվիճելի առաջատար՝ կինը, որպես կանոն, աշխատում է տղամարդուն հավասար, ինչի արդյունքում տնտեսապես կախված չէ նրանից: Այսպիսով՝ տղամարդը կորցնում է սոցիալական այն կարգավիճակը, որը նրան հեղինակավոր էր դարձնում կնոջ աչքում: Տղամարդը, որի գիտակցության և նույնիսկ ենթագիտակցության մեջ ամրագրված է նախնիների հազարամյա փորձը, դեռ հակված է իրեն համարելու ընտանիքի գլուխ, ինչը նշանակում է չենթարվել կնոջը՝ համարելով նրան ստորադաս, բայց, միևնույն ժամանակ, այդ նույն տղամարդն անհրաժեշտ ջանքեր չի գործադրում՝ ընտանիքում իր սասանված և իրենց վերագրված դիրքերն ամրապնդելու կամ սահմանելու համար:

Ինքնին ընտանիքում կնոջ գերիշխող դիրքը ոչ թե տղամարդու թուլության նշան է, այլ ժամանակակից ամուսնության հատկանիշ: Այս հատկանիշն ամենուր վերածվում է հոգեբանական լուրջ խնդրի, երբ ընտանիքում տղամարդը կորցնում է հեղինակությունն ու հարգանքը: Սովորաբար կինը, որ կարողացել է գերիշխող դիրք զբաղեցնել ընտանիքում, չի կիրառում «թաքնված առաջնորդի» մարտավարությունն իր ամուսնու հանդեպ: Այս խնդրի անուղղակի ազդեցությունն առաջին հերթին դրսևորվում է տղամարդու հեղինակության կորստով ոչ միայն կնոջ, այլև շրջապատի աչքում, ինչի արդյունքում հասարակությունը տղամարդուն տալիս է այնպիսի պիտակներ, որոնք նսեմացնում են նրա արժանապատվությունը: Դերերի հակասական այս դաշտում էլ սովորաբար առաջանում է քայքայիչ այն ազդակը, որն անվանում ենք անոմիա [11]:

Անոմիայի հաղթահարումը լուրջ սոցիալական խնդիր է,

որը չի կարող լուծվել միայն հոգեբանական միջամտությամբ: Երբ անհաղթահարելի իրավիճակը հասնում է իր կրիտիկական զանգվածին՝ անցնելով տանելի բոլոր սահմանները, հասարակությունը «ռեֆլեքսիվ» արձագանքում է արժեքների և նորմերի շտկմանը՝ նրանց տալով ավելի մեծ ներդաշնակություն, որոշակիություն և հստակություն:

Միանգամայն ակնհայտ է, որ տարբեր մարդկանց մոտ անոմիայի հետևանքները դրսևորվում են տարբեր կերպ. ոմանք ավելի դիմացկուն են, ոմանք՝ ոչ այնքան, քանի որ ոչ բոլորն են ի զորու կենսագործելու օտարման պայմաններում, երբ առկա է բարոյական դեգրադացիա և էմոցիոնալ անկման լայն շրջանակ: Այս համատեքստում հետաքրքիր է ուսումնասիրել անհատականության այն տեսակները, որոնք առավել կենսունակ են սոցիալական անոմիայի պայմաններում: Արդյունքում կարող ենք առանձնացնել հոգեբանական աջակցության այն միջոցները, որոնց օգնությամբ մարդկանց հնարավորություն է տրվում հաղթահարելու ճնշող և ոչ ցանկալի իրականությունը:

Այս հարցերի կառուցողական պատասխանները ոչ միայն արժեքավոր ներդրում կլինեն հոգեբանական գիտության մեջ, այլև կհանդիսանան սոցիալապես օգտակար կենսափորձ [228]:

Հասկանալու համար, թե իրականում ինչ է անոմիան և որոնք են նրա սոցիալ-հոգեբանական բաղադրատարրերը, նախ և առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել այն տեսական հիմքերը, որոնք բնորոշում են անոմիայի հակառակ բևեռը: Այս համատեքստում մեծապես անհրաժեշտ է դիտարկել օրենքն ու օրինականությունը, նորմերն ու կարգերը, սոցիալական ինտեգրումը, սոցիալականացումը և արժեքային համակարգը:

Օրինականությունը սահմանվում է որպես պետական կառավարման սկզբունք, ռեժիմ և եղանակ, որը հիմնված է օրենքների հրապարակման և կիրառման նկատմամբ վերահսկողության սահմանման վրա: Օրինականությունը պետական մարմինների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից օրենքի և դատարանների որոշումների պահանջների անվերապահ կատարման սկզբունքն է: Այն ենթադրում է քաղաքացիների օրինական շահերի և իրավունքների արդյունավետ պաշտպանություն, ինչպես

նաև՝ պաշտոնյաների գործողությունների դեմ դատական կարգով բողոքարկելու հնարավորություն: Օրինականությունը բնութագրվում է որպես համակարգ, որը հիմնված է հասարակության և պետության միասնության վրա և բնութագրվում է իրավական կարգերի ու նորմերի խիստ և պարտադիր պահպանությամբ [11; 169] :

Իրավաբանական իմաստով **օրենքը** սահմանվում է որպես սահմանված կարգով պետական իշխանության գերագույն մարմնի կողմից հրապարակված և բարձրագույն իրավական ուժ ունեցող ակտ, որն արտահայտում է տիրող դասակարգի կամքը, իսկ առօրյա իմաստով՝ բարձրագույն իշխանության կողմից սահմանված և բոլորի համար պարտադիր կանոն և կարգ:

Նորմը գոյություն ունեցող օբյեկտների գնահատման և ստեղծման սահմանված չափորոշիչ է: Նորմեր գոյություն ունեն միայն այնտեղ, որտեղ կան մարդկային կարիքներ և, համապատասխանաբար, նպատակներ: Նորմը բնորոշում է օբյեկտի քանակական փոփոխությունների սահմանները, որոնցում այն պահպանում է իր որակը՝ որպես նպատակին հասնելու միջոց: Տարբերակվում են նորմերի ստորին կամ նվազագույն, վերին կամ առավելագույնը և նրանց միջև եղած «ոսկե միջին» կամ օպտիմալ սահման, որը հարաբերական է յուրաքանչյուր անհատի համար [258]:

Սոցիալական ինտեգրումը կամ վերականգնումն ու համալրումը անհատի ընդունումն է խմբի այլ անդամների կողմից [11]:

Համեմատաբար անկախ, քիչ կապված սոցիալական օբյեկտների միջև օպտիմալ կապեր հաստատելու գործընթացը և դրանց հետագա վերափոխումը միասնական և ամբողջական համակարգի, որտեղ դրա մասերը համակարգված են և փոխկապակցված, հիմնված է ընդհանուր նպատակների և շահերի վրա: Հենց այս երևույթն անվանում են անհատի հաջող սոցիալականացում, ով հաղթահարել է իր իրավիճակի բացասական հետևանքները [93] :

Կարող ենք ասել, որ գիտական բառարաններում անոմիան ներկայացվում է որպես օտարման և հակասոցիալական վարքի դրսևորում, որը կազմալուծում է հասարակության բարոյահոգեբանական, սոցիալական և տնտեսական միջավայրը՝ պատճառ դառնալով քաոսիկ իրականության և արժեքային համակարգի բախման:

Անոմիայի խնդիրը ժամանակակից գիտական, սոցիալ-փիլիսոփայական և սոցիոլոգիական գիտակարգում ամենաքննարկվող հիմնախնդիրներից մեկն է: Անոմիան ուսումնասիրելու անհրաժեշտությունը կապված է առաջացող ռիսկերի հետ, որոնք ժամանակակից հասարակությունը դարձնում են անկայուն, իսկ նրանցում տեղի ունեցող գործընթացները՝ քաոսիկ: Սոցիալական գործընթացների կառավարումը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնց մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հենց անոմիան: Սոցիալական անոմիայի թաքնված ազդեցությունը հանգեցրել է նրան, որ այս խնդիրը հաճախ մնում է ստվերում [11; 215]:

Սոցիալական անոմիայի ֆենոմենն առաջին անգամ նկարագրել է ֆրանսիացի ականավոր սոցիոլոգ Էմիլ Դյուրկհեյմը: Նա հայտնաբերել է անոմիայի ֆենոմենը՝ ուսումնասիրելով ինքնասպանության պատճառները, որոնց շարքում առանձնացրել է անոմիան՝ որպես շեղվող վարքի դրսևորում: Բացատրելով այս անոմիան՝ նա ընդգծեց, որ սոցիալական կանոնները կարևոր դեր են խաղում մարդկանց կյանքի կարգավորման գործում, ուստի ճգնաժամերի կամ սոցիալական փոփոխությունների ժամանակ կյանքի փորձը դադարում է համապատասխանել սոցիալական նորմերի համատեքստում մարմնավորված իդեալներին: Արդյունքում մարդիկ զգում են շփոթություն և ապակողմնորոշում, սոցիալական նորմերը ոչնչացվում են, մարդիկ կորցնում են իրենց կողմնորոշումը և այս ամենը նպաստում է շեղվող վարքագծին: Շեղվող վարքագիծը մարդկային գործունեություն կամ սոցիալական երևույթ է, որը չի համապատասխանում տվյալ հասարակության մեջ պաշտոնապես կամ փաստացի հաստատված նորմերին, ենթադրում է հանցագործի մեկուսացում, բուժում, ազատազրկում կամ այլ պատիժ:

Է. Դյուրկհեյմի կարծիքով՝ սոցիալական կանոնները կարևոր դեր են խաղում մարդկանց կյանքը կարգավորելու գործում, քանի որ առաջադրվող նորմերը ղեկավարում են հասարակության վարքագիծը, ինչի արդյունքում մարդիկ գիտեն, թե ինչ սպասել ուրիշներից, ինչպես նաև գիտեն, թե ինչ են սպասում նրանցից հասարակության մյուս անդամները: Նրանց կյանքի փորձը քիչ թե շատ համահունչ է սոցիալական նորմերով պայմանավորված

սպասումներին [166]:

Է. Դյուրկիեյմը նշեց, որ հասարակության մեջ անոմիկ վիճակները հատկապես հաճախ են առաջանում տնտեսական ճգնաժամերի և դինամիկ բարեփոխումների պայմաններում: Սոցիալական անկազմակերպության պահին՝ լինի դա ցավալի ճգնաժամի հետևանք, թե ոչ սպասելի բարենպաստ իրավիճակ, հասարակությունը ժամանակավորապես չի կարողանում անհրաժեշտ ազդեցություն գործադրել մարդու վրա [11; 167]:

Է. Դյուրկիեյմը բնութագրում է անոմիայի հայեցակարգը որպես հասարակության վիճակ, որտեղ տեղի է ունենում հասարակական կարգը երաշխավորող նորմերի համակարգային քայքայում: Սոցիալական անոմիան վկայում է այն մասին, որ վարքագծի նորմերը լքջորեն խախտվում և թուլանում են: Անոմիան առաջացնում է հոգեբանական այնպիսի վիճակ, որը բնութագրվում է կողմնորոշման կորստի զգացումով, երբ մարդիկ բախվում են հակասական նորմերը պահպանելու անհրաժեշտությանը: Անոմիան առաջանում է, երբ աշխատանքի բաժանումը բավականաչափ արդյունավետ շփումներ չի առաջացնում հասարակության անդամների միջև, ինչի արդյունքում անտարբերության են մատնվում սոցիալական հարաբերությունների համարժեք կարգավորումները [11; 167]:

Անոմիան մեխանիկականից օրգանական համերաշխության թերի անցման արդյունք է, քանի որ վերջինիս օբյեկտիվ հիմքը՝ աշխատանքի սոցիալական բաժանումը, ավելի արագ է զարգանում, քան բարոյական աջակցությունը՝ հավաքական գիտակցության մեջ: Անոմիայի առաջացման համար անհրաժեշտ պայման է կարիքների ու շահերի հակասությունը և դրանք բավարարելու հնարավորության բացակայությունը [261]:

Է. Դյուրկիեյմն իր դասական «Ինքնասպանություն» ուսումնասիրության մեջ տվեց անոմիայի ավելի ամբողջական սահմանումը. սոցիալական կամ անհատական գիտակցության վիճակ, որը բնութագրվում է բարոյական նորմերի և արժեքային համակարգի փլուզմամբ:

Է. Դյուրկիեյմի անոմիայի հայեցակարգը համարժեք գնահատելու համար անհրաժեշտ է այն դիտարկել հասարակության

մասին նրա պատկերացումների համատեքստում՝ որպես հատուկ իրականություն, որը կանգնած է անհատներից վեր և իրականացնում է վերահսկողական գործառույթ: Այս համատեքստում հասարակությունը ներկայանում է որպես անհատների ինտեգրման միջավայր, որտեղ հեղինակը տալիս է ինքնասպանությունների էթոլոգիական դասակարգումը և առանձնացնում անհատ-հասարակություն փոխհարաբերությունների բնույթը [11; 167]:

Չնայած է. Դյուրկհեյմի հայեցակարգը քննադատության է ենթարկվել, սոցիալական անկազմակերպվածության հիմնական գաղափարն ընկած է շեղված վարքի դրսևորման մեջ: Ըստ ամերիկացի սոցիոլոգ Ն. Սմելսերի՝ «սոցիալական անկազմակերպվածությունը» հասարակության այն վիճակն է, երբ մշակութային արժեքները, նորմերն ու սոցիալական կապերը բացակայում են կամ դառնում անկայուն [238]:

Է. Դյուրկհեյմից հետո անոմիայի մեկնաբանությունը զարգացել է 2 ուղղությամբ: Առաջին ուղղության ներկայացուցիչները անոմիան դիտարկել են որպես բարոյական անարխիայի և բարոյական կարգապահության բացակայություն՝ առանձնացնելով նորմատիվ լարվածությունն ու նորմերի բախումը, որը նկարագրում է իրավիճակը, որտեղ բարոյական արժեքներն ու նորմերը չեն համապատասխանում ներդրված նպատակների իրականացման հնարավորություններին: Այս ուղղության կողմնակիցները հակված են շահերի ցանկացած բախում և բաժանում դիտարկելու որպես գործառույթների ժամանակավոր անհավասարակշռություն:

Երկրորդ ուղղության կողմնակիցները ելնում են հասարակության տեսական մոդելից՝ որպես մշտական լարվածության և տարաբնույթ հակամարտությունների մեջ գտնվող խմբերի համակարգ, որը խթան է հանդիսանում սոցիալական փոփոխությունների համար: Այս միտումը շարունակում է Է. Դյուրկհեյմի այն միտքը, որ անոմիան իրականություն է և գրեթե ցանկացած բարդ հասարակության «նորմալ վիճակ» [207]:

Անոմիայի հիմնական սոցիալ-պատմական պատճառներից մեկը սոցիալական վերահսկողության թուլացումն է: Տեսականորեն մարդու վարքագիծը Դյուրկհեյմի անոմիայի հայեցակարգի տեսանկյունից ներառում է երկու ասպեկտ. մեկը վերաբերում է որոշակի

նպատակներով գործողության ապահովմանը, մյուսը՝ որքանով են այդ նպատակները իրագործելի: Հետևաբար, ժամանակակից սոցիոլոգիայում կան անոմիա հասկացության տեսական կիրառման երկու տարբեր ուղղություններ: Երկրորդ ասպեկտը նորմերի բախումն է մշակույթում: Տեսության այս կողմն ակտիվորեն ուսումնասիրվել է Ռ.Մերտոնի կողմից, ով է. Դյուրկհեյմից հետո ամենակարևոր ներդրումն է ունեցել անոմիայի տեսության մեջ: Ըստ Ռ.Մերտոնի՝ անոմիան անհամապատասխանության և մշակութային կարգով սահմանված համընդհանուր նպատակների միջև կոնֆլիկտի արդյունք է [206] :

Ըստ Ռ. Մերտոնի՝ անոմիան առաջանում է, երբ մարդիկ չեն կարողանում հասնել հասարակության կողմից պարտադրված նպատակներին՝ իրենց կողմից սահմանված իրավական միջոցներով: Նա կարծում էր, որ անոմիան առաջանում է հասարակության մշակութային նպատակների և դրանց հասնելու սոցիալապես հաստատված միջոցների միջև եղած անջրպետից:

Անոմիայի ժամանակ բացակայում են իրավական և բարոյական նորմերի ընդհանուր ճանաչման տարրերը, որոնք հանգեցնում են սահմանված նպատակներին [11;206]:

Նպատակին հասնելու համար մարդիկ օգտագործում են երկու տեսակի միջոցներ՝ օրինականացված, հասարակության կողմից հաստատված և ցանկացած կերպ հաջողության տանող:

Մերտոնի դիտարկմամբ նպատակին հասնելու միջոցների օրինականությունն ու արդյունավետությունը միշտ չէ, որ համընկնում են իրար, ուստի մարդիկ կանգնած են ընտրության առաջ. եթե նպատակները դառնում են առաջնահերթություն, ցանկացած միջոց համարվում է արդարացված և, հակառակը, եթե հիմնականը միջոցն է, նպատակը կորցնում է իր նշանակությունը: Մերտոնը նշում է, որ երբ մարդիկ ձգտում են ֆինանսական հաջողության, բայց համոզված են, որ դրան հնարավոր չէ հասնել սոցիալականորեն հաստատված միջոցներով, նպատակին հասնելու համար դիմում են անօրինական միջոցների և նույնիսկ հանցագործության: Նպատակների և միջոցների միջև անհավասարակշռությունը հանգեցնում է անոմիայի [209]:

Կայուն հասարակության մեջ միջոցների և նպատակների

համապատասխանությունն ապահովում է նորմատիվ վարքագիծ: Երբ նպատակները չափազանցված են, առաջանում է շեղված վարքագիծ, իսկ երբ չափազանցված են միջոցները՝ «ծիսական» տիպի վարքագիծ: Նպատակների ու միջոցների միաժամանակյա մերժումը կամ փոխարինումը հանգեցնում է հեղափոխական վարքագծի դրսևորման, ապստամբության և շրջադարձի: Երկրորդ տիպի վարքագիծը, երբ հիմնական դերում հանդես են գալիս նպատակներն, իսկ միջոցների ընտրությունն անտեսված է, հանգեցնում է հակասոցիալական վարքագծի կամ հանցագործության [57]:

Մերտոնի դիտարկմամբ յուրաքանչյուր մարդ անոմիայի վիճակին հարմարվում է յուրովի՝ ցուցաբերում է կամ ենթարկվող վարքագիծ, կամ շեղվող վարք, որտեղ մերժում է հասարակության կողմից հաստատված գաղափարներն ու նորմերը: Սա է պատճառը, որ Մերտոնն մշակեց անհատի՝ շրջակա միջավայրին հարմարվելու «անոմիկ» հինգ ուղի՝ համապատասխանություն, նորարարություն, ծիսականություն, նահանջ և ապստամբություն:

Ամերիկացի սոցիոլոգ Նիլ Սմելսերը նշում է, որ հաստատված նպատակին հասնելու միջոցները ներառում են ավանդական մեթոդներ, ինչպիսիք են՝ լավ կրթությունը և աշխատանքը, սակայն երբ մարդն առերեսվում է իրականությանը, պարզ է դառնում, որ բնակչության մեծամասնությանը հասանելի չեն սոցիալապես հաստատված միջոցներ, քանի որ մեծ թվով մարդիկ չեն կարողանում վճարել լավ կրթության համար, իսկ լավագույն աշխատանքները բաժին են ընկնում սահմանափակ թվով մարդկանց [11; 238]:

Անոմիան որոշ դեպքերում կարող է դրական դեր խաղալ հասարակության զարգացման համար: Օրինակ, ամերիկացի սոցիոլոգ և քրեագետ Հովարդ Բեքերը պնդում էր, որ ցանկացած հասարակության մեջ տեղի է ունենում սոցիալական անկատարություն:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ սոցիալական անոմիայի և շեղված վարքագծի խնդիրները մեծ նշանակություն ունեն սոցիալ-քաղաքական և տնտեսական բարեփոխումների համատեքստում, քանի որ ինչպես հայտնի է, հասարակության մեջ անհատների պահվածքն ուղղակիորեն կապված է երկրի ներսում տեղի ունեցող

քաղաքական և տնտեսական գործընթացների հետ: Երկրում անկայուն վարքագիծը, որպես կանոն, ենթադրում է բացասական երևույթների աճ՝ թափառականություն, հանցագործություն, ալկոհոլիզմ, հանցագործությունների թվի աճ և այլն: Այստեղից էլ ծնվում է հասարակության ներքին նախատրամադրվածությունը, որը բնութագրվում է որպես շեղվող վարք, ինչի արդյունքում ոչնչացվում են բազմաթիվ հոգևոր և մշակութային արժեքներ: Սա հանգեցնում է այն մտքին, որ սոցիալական անոմիայի ազդեցությունը հասարակության սոցիալական գործընթացների կառավարման վրա մեծապես կախված է քաղաքական և պետական ինստիտուտներից, ինչպես նաև՝ պետական և քաղաքային իշխանությունների գործունեությունից, քանի որ կայուն հասարակության մեջ սոցիալական անոմիայի մակարդակն ավելի ցածր է: Մյուս կողմից, կայուն սոցիալական զարգացումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե կա իրավական, բարոյական և այլ նորմերի ու դրանց աջակցող սոցիալական ինստիտուտների արդյունավետ համակարգ [11; 54; 186]:

Է.Դյուրկհեյմի այն գաղափարը, որ «աննորմալության» իրավիճակն առաջանում է, երբ նկրտումները բախվում են, և կարգավորող նորմերը ոչնչացվում, այժմ կրում է հակասական բնույթ, երբ հասարակության որոշ կառույցներ որոշակի ճնշում են գործադրում հասարակության առանձին անդամների վրա՝ նրանց մղելով անհնազանդության [207]:

Ինչպես Է.Դյուրկհեյմը, Ռ.Մերտոնը նույնպես հանցագործությունը դիտում էր որպես «նորմալ մարդկանց նորմալ արձագանք աննորմալ պայմաններին» [11; 207]:

Նրա համար չափազանց կարևոր է տարբերակել տեխնիկական արդյունավետությունը մշակութային նպատակներին հասնելու միջոցների օրինականությունից: «Յուրաքանչյուր սոցիալական խումբ պարտադիր համատեղում է իր ցանկալի նպատակների սանդղակը և նպատակներին հասնելու ընդունելի ու պահանջվող ուղիների բարոյական կամ ինստիտուցիոնալ կարգավորումը: Այս տեսակի կարգավորող նորմերն ու բարոյական հրամայականները պարտադիր չէ, որ համընկնեն այն նորմերին, որոնք որոշում են ներդրված մեթոդների նպատակահարմարությունը կամ

արդյունավետությունը, քանի որ գործող միջոցների ընտրությունը սահմանափակված է ինստիտուցիոնալ նորմերով» [11; 207] :

Եթե Է.Դյուրկհեյմն անոմիա տեսնում էր նորմերի բացակայության, հասարակության նորմատիվ համակարգի ոչնչացման կամ թուլացման մեջ, ապա, Մերտոնն, անոմիան ներկայացնում էր մշակույթի հատուկ կառուցվածքային հակասության, հակամարտության և արժեքների անհավասարակշռության միջոցների կիրառման դաշտում: Եթե, ըստ Է.Դյուրկհեյմի, անոմիա առաջանում է միայն սոցիալական արագ փոփոխության ժամանակաշրջաններում, ապա Մերտոնի համար սոցիոմշակութային նպատակների և դրանց հասնելու իրավական միջոցների անհամապատասխանությունը սոցիալական համակարգում լարվածության մշտական գործոն է: Ռ.Մերտոնի տեսությունը, թեև ավելի ընդհանրական է, բայց և այնպես չի ներառում դյուրկհեյմյան հայեցակարգ: Ֆրանսիացի սոցիոլոգի մոտեցումը ներառում էր տնտեսական ասպեկտ, քանի որ նա անոմիան համարում էր աշխատանքի բաժանման ոչ ընդունելի ձև, իսկ Ռ.Մերտոնն անոմիան համարում էր սոցիալական տարբերակված իրավական միջոցների հասանելիություն և հաջողության հասնելու սոցիալ-հոգեբանական շեշտադրում [128]:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ Ռ.Մերտոնի հայեցակարգը ներառում է սոցիալական վարքագծի շարունակականություն, որի դասակարգումը որոշվում է անհատների կողմից ընդունված կամ մերժված նպատակների և միջոցների հարաբերակցությամբ: Այս մոտեցմամբ պարզվում է, որ անոմիան շեղված վարքի հատուկ էթոլոգիական գործոն չէ, ուստի դիտարկվում է որպես անհրաժեշտ, բայց ոչ միակ նախապայման: Դրա հետ մեկտեղ նպատակահարմար է առանձնացնել այն գործոնները, որոնք պայմանավորում են հաջողության հասնելու օրինական միջոցների հասանելիությունը:

Ռ.Մերտոնի դիրքորոշման հաջորդ կարևոր կետը մշակութային նպատակների և ինստիտուցիոնալ նորմերի միջև անկայուն և աններդաշնակ հարաբերությունների հաստատումն է, քանի որ նպատակների նշանակությունը կարող է փոխվել՝ անկախ ինստիտուցիոնալ միջոցների նշանակության աստիճանից: Դրամական հաջողության և նյութական բարեկեցության ձեռքբերման

ենթադրյալ գերակայությունը հանգեցնում է ցանկալիին հասնելու միջոցների կիրառման, մինչդեռ վերահսկողության ինստիտուցիոնալ եղանակները ձեռք են բերում երկրորդական նշանակություն» [11; 208]:

Է. Դյուրկհեյմի դիտարկմամբ անոմիան անկայուն իրավիճակ է, որն առաջանում է սոցիալական համախմբվածության և համերաշխության բացակայությունից և ուղեկցվում է սոցիալական արագ փոփոխություններով: Անոմիայի՝ Ռ. Մերտոնի տեսության համաձայն՝ մեծ թվով մարդիկ փորձում են հասնել մշակութային նշանակալի նպատակների, իսկ երբ հասարակությունը չի տրամադրում լեգիտիմ միջոցներ՝ մշակութային նշանակալի նպատակներին հասնելու համար, առաջ է գալիս այլընտրանքային ուղիների կիրառում:

20-րդ տարեվերջին և 21-ի սկզբին գիտնականների շրջանում անոմիայի խնդրի նկատմամբ հետաքրքրությունը ցույց տվեց, որ ավելի քան երկու հազարամյակ անոմիայի խնդիրը չի կորցրել իր արդիականությունը [82]: Անոմիայի զարգացման վրա մեծապես ազդում են հասարակության կյանքում կրոնի դերի նվազումը, գլոբալացման գործընթացները, արժեքային համակարգերի փոփոխությունները, որոնք հանգեցնում են ժողովուրդների մշակութային ինքնության կորստի և ավանդական մշակույթից անջատման: Այս դիրքորոշումը արդարացիորեն քննադատվում է, քանի որ հաշվի չի առնվում ժամանակակից հասարակության մշակութային բազմազանությունը [18; 55]: Նույնիսկ քրիստոնյաների կրոնական տեքստերում անոմիան նկարագրվում է ոչ միայն որպես հասարակության վիճակ, այլ անհատականության բնութագիր: Նման հայեցակարգ քննարկվել է ամերիկացի սոցիոլոգներ Ռոբերտ Մաքայվերի և Դեյվիդ Ռիսմանի աշխատություններում: Մաքայվերն անոմիան ներկայացնում էր որպես «անհատի՝ հասարակությանը պատկանելու զգացողության ոչնչացում»: Ըստ հեղինակի՝ անոմիան վիճակ է, երբ անհատը պոկված է իր բարոյական արմատներից, չունի վարքագծի նորմեր, և գործում են միայն ցրված դրդապատճառները [11; 74]:

Դեյվիդ Ռիսմանն անոմիան համարում էր անձի անկարողություն՝ ապրելու հասարակության մեջ: Այս անհամարժեքության

պատճառը անհատի բնավորության անհամապատասխանությունն է դարաշրջանին բնորոշ մշակութային առանձնահատկություններին: Արդյունքում, մեծ թվով մարդիկ, որոնք չեն համապատասխանում տվյալ հասարակության մեջ գերակշռող նորմերին, դառնում են կամ անոմիկ, կամ ինքնավար [86]:

Դ. Ռիսմանի հայեցակարգը, սակայն, ամբողջությամբ չի ներառում այն խնդիրները, որոնք անմիջականորեն կապված են հասարակության շրջանում նորմերի և արժեքների տարածման հետ: Այս համատեքստում հեղինակը հաշվի չի առնում լրատվամիջոցների ազդեցությունը: Թերթերը, ռադիոն և հեռուստատեսությունը մշտապես հեռարձակում են վարքի և արժեքների ընդհանուր ընդունված նորմեր՝ նպաստելով անհատների կողմից այդ նորմերի յուրացմանը: Այս դիտարկումը մեծապես կարևորվեց 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին, երբ համացանցը ձեռք բերեց զանգվածային տարածում, քանի որ համացանցային հաղորդակցությունն այսօր համեմատելի է իրական կյանքում տարվող հաղորդակցության հետ, ուստի այս հարթակը դառնում է նորմերի և արժեքների ազատ փոխանցման ամենամեծ ու հասանելի դաշտը [11; 102]:

Ամերիկացի սոցիոլոգ Լեո Սրոուլը գիտական շրջանառության մեջ մտցրեց «անոմիա» տերմինը՝ անհատական մակարդակում անոմիա ներկայացնելու համար: Նրա դիտարկմամբ անոմիան անհատականության մակարդակում սոցիալապես պայմանավորված երևույթ է [255]:

Անոմիան անհատական մակարդակում դիտարկելու գաղափարը հավանության արժանացավ գիտական հանրության կողմից:

Ամերիկացի սոցիոլոգ Էլվին Փաուելը, որ իր աշխատություններից մեկը նվիրել է անոմիայի այս նոր ըմբռնմանը, նշել է, որ այն պայմաններում, երբ անհատի գործունեության նպատակները դառնում են հակասական, անհասանելի կամ աննշան, անոմիայի վիճակը սրվում է և ուղեկցվում ապատիայի զգացումով ու կողմնորոշման ընդհանուր կորստով [84]:

Ամերիկացի հետազոտող Ռոբերտ Դուբինը ներկայացրեց փոփոխական, որնարտացոլում է անհատի փոխհարաբերությունները խմբի հետ և տարբերակում իրական վարքագիծն ու հաստատված նորմերը [41]:

Կառուցողական քննադատությունը նպաստեց անոմիայի տեսության զարգացմանը: Կարող ենք ասել, որ այժմ մեր երկրում տեղի է ունենում բարդ անցում տոտալիտար հասարակությունից դեպի ժողովրդավարական: Այս ֆոնի վրա մեծապես ակտիվանում են անոմիկ գործընթացները: Նախկին սոցիալական նորմերը կորցնում են իրենց նշանակությունը, իսկ նորերը դեռ սաղմնային շրջանում են: Այս պայմաններում ինտենսիվորեն առաջանում են իրավիճակներ, երբ նախընտրելի է դառնում վարքագծի շեղված ձևերի ընտրությունը [56]:

Անոմիայի և սոցիալական կարգի խնդիրն արդիականացվում է աշխարհում տեղի ունեցող ժամանակակից վերափոխումների հետ, երբ հասարակության առջև ծառացած դժվարությունների շարքում դասվում են, սոցիալական այնպիսի չարիքներ, ինչպիսիք են՝ կոռուպցիան, հանցագործությունը, ահաբեկչությունը և քաղաքական անտարբերությունը [99; 101]:

Սոցիալ-փիլիսոփայական առումով սոցիալական կարգի անոմիայի ուսումնասիրությունը հետաքրքրություն է առաջացնում հասարակության ամբողջականության պահպանման, սոցիալական ինտեգրման, հասարակությունը վտանգավոր վիճակից դուրս բերելու և կառավարման ռազմավարությունը հասկանալու առումով [11; 242]:

Ամփոփելով վերը նշվածը՝ գալիս ենք այն եզրահանգման, որ սոցիալական անոմիան հասարակության մեջ սոցիալական գործընթացների վերահսկողության լատենտ գործոն է: Սա հատկապես ակնհայտ է քաղաքական և սոցիալ-տնտեսական ճգնաժամի համատեքստում: Կյանքի մակարդակի կտրուկ անկումը և գործազրկության աճը հանգեցնում են հասարակական-քաղաքական անկայունության և սոցիալական բարձր լարվածության: Առօրյա ապրելակերպի ոչնչացումը, սոցիալական ենթակառուցվածքների վատթարացումը և սոցիալական ինստիտուտների դերի թուլացումը բացասաբար են անդրադառնում բնակչության կյանքի բոլոր ասպեկտների վրա: Զուգահեռաբար սկսում է գործել քաղաքական անոմիան, որը բնութագրվում է անհատների բացասական վերաբերմունքով քաղաքական նորմերին և արժեքներին:

Ուսումնասիրելով սոցիալական անոմիայի տեսությունն՝

անհրաժեշտ է առանձնացնել սոցիալական վերահսկողությունը, քանի որ հենց սա է ազդում անհատի և հասարակության ամբողջական զարգացման վրա:

Սոցիալական վերահսկողությունը կարելի է բաժանել երկու տեսակի՝ ներքին և արտաքին: Արտաքինը որոշակի մեխանիզմների շարք է, որոնք երաշխավորում են հասարակության կողմից վարքագծային նորմերի պահպանումն ու առանձնացնում են պաշտոնականն ու ոչ պաշտոնականը: Օրենքներն ու այլ իրավական ակտերը ծառայում են որպես պաշտոնական սոցիալական վերահսկողության, իսկ ոչ ֆորմալ վերահսկողության շարքին դասվում են սոցիալական արժեքներն ու բարոյական նորմերը:

Վերահսկողության երկրորդ տեսակը կոչվում է ինքնատիրապետում կամ ներքին վերահսկողություն: Այն գործում է, երբ մարդիկ վերահսկում են իրենց պահվածքը՝ հիմք ընդունելով հասարակության կողմից ընդունված և ներքնայնացված նորմերը: Ապրելով հասարակության մեջ և դառնալով առաջադրվող նորմերի կրող՝ անհատը վարում է այնպիսի ապրելակերպ, որը խրախուսելի և ընդունելի է համարվում հասարակության լայն զանգվածների կողմից, և հետաքրքիրն այն է, որ շատ հաճախ ներքին վերահսկողությունն իրականացվում է ենթագիտակցորեն կամ ներդրվում փոքր հասակում՝ սոցիալականացման գործընթացի շրջանակներում:

Է. Դյուրկհեյմը, ներկայացնելով հասարակության զարգացման իր տեսությունն, ընդգծել է ագրարային հասարակությունից արդյունաբերականի անցնելու կարևորությունը, որտեղ հասարակության մեջ սոցիալական կարգի պահպանումը տեղի է ունենում սոցիալական ինտեգրման և կարգավորման միջոցով [11]:

Ագրարային հասարակությունից արդյունաբերականին անցնելու ժամանակաշրջանում տարածվում են նոր նորմեր և արժեքներ, որոնք քայքայում են ավանդական հասարակության մեջ ձևավորված հավասարակշռությունը և կոտրում կրոնական ինստիտուտները, ավանդական հավատալիքներն ու սահմանված կարգերը, ուստի, կարող ենք ասել, որ անոմիա առաջանում է, քանի որ աշխատանքի բաժանումը բավականաչափ դրական շփումներ չի առաջացնում հասարակության անդամների միջև և չի ստեղծվում սոցիալական

հարաբերությունների արդյունավետ կարգավորում: Նման փոփոխությունները ստիպում են մարդկանց կասկածի տակ դնել հին մշակութային նորմերի և կանոնների արդյունավետությունը, ինչը հանգեցնում է անոմիայի կտրուկ աճի [115]:

Համեմատելով հասարակությունների տարբեր բնութագրեր՝ գալիս ենք այն եզրահանգման, որ հասարակությունը, որտեղ գերակշռում է տարբերակումն ու անհատականությունը, առավել հակված է աճող անոմիայի վիճակին:

Այսպիսով՝ ժամանակակից անոմիայի պատճառները առաջ են գալիս արդյունաբերական հեղափոխության դարաշրջանում աշխատանքի բարդ բաժանման և քայքայման արդյունքում: Այդ մասին իր աշխատության մեջ խոսել է նաև է նաև ամերիկացի տնտեսագետ և սոցիոլոգ Կառլ Պոլանին՝ պնդելով, որ հասարակության մեջ կարգավորվող նորմերի բացակայությունը հանգեցնում է սոցիալական հարաբերությունների շուկայական ինտեգրման [223]:

Այս իրավիճակում կարգը և վերահսկողությունը դառնում են համարժեք հասկացություններ, որոնք արտացոլում են դիտարկվող երևույթի դինամիկան, քանի որ սոցիալական կարգն այն բաղադրիչն է, որը ստեղծվում է կառավարման արդյունքում: Կառավարումն իր հերթին իրականացվում է տարբեր «գործիքներով»՝ պետություն, զանգվածային լրատվություն, հասարակություն, գաղափարախոսություն և այլն:

Շուկայական տնտեսությունը, որը գործում է վերահսկողությունից դուրս, առաջացնում է սոցիալական ավերածություններ: Իր մասշտաբների հեղափոխական փոփոխություններ արդյունքում սոցիալական վերահսկողության խնդիրն իրականում չի գիտակցվում ո՛չ իշխանությունների, ո՛չ հասարակության կողմից [115]:

Անհատի գիտակցությունն ու վարքագիծը պայմանավորված է ոչ միայն առկա աքսիոլոգիական և սոցիալ-փիլիսոփայական տեսություններով, այլ դրանց փոխանցման և ներդաշնակեցման մեխանիզմներով, սոցիալական օրինաչափություններով և անհատի գործունեության միջսուբյեկտիվ հարաբերություններով, որոնք ուսումնասիրվում են սոցիալականացման տեսության

շրջանակներում, իսկ սոցիալականացումը՝ որպես սոցիալական դինամիկայի կառուցվածքային տարր, կրում է որոշակի ֆունկցիոնալ բեռ [11; 241]:

Ժամանակակից հասարակությունը, որը գտնվում է սոցիալական և քաղաքական խորը վերափոխումների պայմաններում, բախվում է բազմաթիվ կործանարար գործոնների, որոնց դիմակայելը դառնում է կարևոր խնդիր և պայման ամբողջ սոցիալական համակարգի գոյատևման համար: Բացասական երևույթներից կարելի է առանձնացնել ծայրահեղական սոցիալական և կրոնական շարժումների ակտիվության աճը, էթնիկ հանդուրժողականության մակարդակի նվազումը, հոգեակտիվ նյութերի օգտագործման աճը, ինքնասպանությունները, արտաքին միգրացիայի ազդեցությունը և անոմիան: Այս ամենը դառնում է խնդիր արդիականացման զարգացման ընթացքում առաջացող բացասական ձևերին հակազդելու մեխանիզմների մշակման ժամանակ:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ հասարակության մեջ գործող նորմերի և պարտադրվող կարգերի հակազդումն առաջացնում է քառտիկ իրականության զգացում, որը յուրաքանչյուրի կողմից ընկալվում և հաղթահարվում է յուրովի: Սոցիալ-քաղաքական գործոնների քայքայումը կամ ոչ բավարար յուրացումը մեծապես ազդում է հասարակության հոգեբանական զարգացման վրա, ինչը ժամանակի ընթացքում հանգեցնում է այնպիսի միջավայրի զարգացման, որը բարենպաստ հող է դառնում անոմիկ հասարակության զարգացման համար [11; 64]:

Ցանկացած հասարակության հաջող և արդյունավետ զարգացման գրավականը ազգաբնակչության սոցիալ-տնտեսական և հոգեբանական բարեկեցությունն է: Ժամանակակից հասարակությունն ապրում է հերթական քաղաքակրթական, տնտեսական և սոցիալ-հոգեբանական ճգնաժամը, որի ֆոնին ակնհայտորեն դրսևորվում են շեղվող վարքագծի տարբեր ձևեր: Արդյունքում, հասարակության վերափոխման համատեքստում, մարդկային վարքի պատճառների և բնութագրերի ավելի ամբողջական և խորը ուսումնասիրության համար անհրաժեշտ է դառնում հասկանալ դրանց առաջացման հիմքերն ու պատճառները:

Մեթոդաբանության մեկնարկային այս դիրքորոշումն առաջին հերթին մարդու հոգեկան աշխարհի նկարագիրն է, որն ունի սոցիալական բնույթ և միևնույն ժամանակ հանդես է գալիս որպես պատմության արդյունք՝ ստանալով իր բովանդակային մարմնավորումը որոշակի նյութական և հոգևոր մշակույթի ոլորտներում: Այս համատեքստում որպես մեթոդաբանական գործիք օգտագործվում է հոգեբանական և պատմական վերակառուցման ընթացակարգը, որն ուղղված է որոշակի դարաշրջանի մարդկանց հոգեկանի տարբեր դրսևորումների վերստեղծմանը և վերլուծությանը [185]:

Հասարակության մեջ սոցիալական նորմերը կարող են լիարժեք գործել, եթե առաջին հերթին՝ կա գիտելիք առաջադրված և գործող նորմերի ու դրանց խախտման դեպքում սահմանված պատժամիջոցների մասին, երկրորդ՝ հասարակության մեջ ձևավորվում է արժեքային վերաբերմունք գործող նորմերի նկատմամբ, և երրորդ՝ նորմերի իմացությունը և դրանց նկատմամբ արժեքային վերաբերմունքի ներդրումը որոշում է նորմերին համապատասխան գործելու հմտության ձևավորում: Հասարակության մեջ սահմանված նորմերից զանգվածային շեղումը հանգեցնում է դեհանտ վարքի տարբեր ձևերի դրսևորման, քանի որ խախտվում է նորմերի նկատմամբ վերաբերմունքի ամենաէական և արժեքային բաղադրիչը: Դա տեղի է ունենում մի հասարակությունում, որտեղ կանոններն ու արժեքները չեն անհետացել, օրենքները չեղյալ չեն համարվել, բայց քչերի կողմից են պահպանվում: Անոմիան, հետևաբար, դառնում է ոչ թե լիակատար քաոսի, այլ բոլոր նորմերի արժեզրկման իրավիճակ [148]:

Անոմիայի հոգեբանական հայեցակարգը մեծապես ուսումնասիրվել է ամերիկացի սոցիոլոգ և հոգեբան Էեռ Սրոուլի կողմից: Նա առաջարկեց անոմիան դիտարկել որպես անհատական փորձ և չափել անոմիայի անհատական սուբյեկտիվ փորձառությունները: Որպես անոմիա ապրող անձին բնորոշ փորձ նա առաջարկեց հինգ տարբերակ, որոնցից մեկի հետ համաձայնությունը ցույց է տալիս, որ անհատն ունի անձնական անոմիա՝

1. Ես զգում եմ, որ հասարակության մեջ մեծ ազդեցություն ունեցող մարդիկ անտարբեր են իմ խնդիրներին և կարիքներին:

2. Այն հասարակության մեջ, որտեղ չկա կարգուկանոն, և ոչ ոք չգիտի, թե ինչ կլինի վաղը, քիչ բանի կարելի է հասնել:
3. Կյանքի ամենակարևոր նպատակներին հասնելու հնարավորությունները աստիճանաբար պակասում են:
4. Ինչ էլ անեն, ստացվում է, որ կյանքս իզուր վատնում եմ:
5. Ես գնալով ավելի եմ համոզվում, որ չեմ կարող հույսս դնել բարեկամական աջակցության և շրջապատի վրա [189]:

Գիտակցության այս մակարդակում գտնվող անձինք օտարվում և մեկուսանում են հասարակությունից՝ իրենց բոլոր խնդիրների լուծումը փնտրելով բոլորին մեղադրելու յուրացված համակարգում, որտեղ իսպառ բացակայում է սեփական ես-ի մեղավորության գաղափարը:

Անոմիայի հոգեբանական հայեցակարգը հետագայում մշակվել է Ռոբերտ Մակայվերի և Դեյվիդ Ռիսմանի կողմից: «Հոգեբանական անոմիա»-ն, ըստ Մակայվերի, անհատականության այնպիսի վիճակ է, երբ անհատը «պոկվում է իր բարոյական արմատներից և այլևս չի ունենում վարքագծային նորմեր, ինչի արդյունքում մնում են միայն ցրված շարժառիթներ և ոչ ամբողջական պատկերացումներ միասնության մասին» [180]:

Մակայվերն առանձնացնում է անձի անոմիայի երեք տեսակ՝

1. Երբ անհատի կյանքը դառնում է աննպատակ՝ էական արժեքների բացակայության պատճառով.
2. Երբ էներգիան ու հնարավորություններն օգտագործում են միայն սեփական անձի բարեկեցության համար.
3. Երբ անհատը զրկված է միջանձնային կապերից և հարաբերություններից:

Ամերիկացի սոցիոլոգ Դեյվիդ Ռիսմանը կարծում էր, որ անոմիան մարդու՝ հասարակության մեջ ապրելու անկարողությունն է: Նրա դիտարկմամբ ցանկացած հասարակությունում կան «արտաքին կողմնորոշվածություն», «ներքին կողմնորոշվածություն»

և «ավանդական կողմնորոշվածություն» ունեցող անհատներ: Նա, ով չի կարողանում հարմարվել հասարակության մեջ տարածված և տիրող նորմերին, դառնում է անոմիկ: Եթե ժամանակակից հասարակության մեջ առաջատար նպատակներն են ֆինանսական հաջողությունը, համբավը և հաղթանակն ուրիշների հետ մրցակցային պայքարում, ապա այդպիսի հասարակությունում իրենց տեղը գտնում են նրանք, ովքեր ունեն արտաքին կողմնորոշվածություն: Մյուսներն, ում կողմնորոշումն ավանդական է կամ ներքին է, ունենում են միայնության զգացում, քանի որ իրենց օտար են զգում մի աշխարհում, որի արժեքները չեն կիսում:

Անոմիան՝ որպես անձի անհատական վիճակ, ուսումնասիրել է ամերիկացի սոցիոլոգ և հասարակական գործիչ Էվլին Փաուելը: Նա նշում էր, որ այն պայմաններում, երբ «անհատի գործունեության նպատակները դառնում են հակասական, անհասանելի կամ աննշան, անոմիայի վիճակը սրվում է: Այն բնութագրվում է կողմնորոշման ընդհանուր կորստով և ուղեկցվում «դատարկության» ու ապատիայի զգացումով, որի արդյունքում անհատը կարող է զգալ պարզապես անիմաստ ու դատարկ միայնություն [11; 84]:

Ահատական մակարդակում անոմիայի դրսևորման ևս մեկ նշանակալից բնութագիր տվել է գերմանացի սոցիոլոգ, փիլիսոփա և սոցիալական հոգեբան Էրիխ Ֆրոմը՝ համարելով, որ հասարակության հիվանդության հիմնական ցուցանիշը անտարբերությունն է անձի հանդեպ: Այս առումով Ֆրոմի ներկայացրած անոմիկ արդյունքները դիտարկվում են այնպիսի երևույթների դրսևորման ժամանակ, ինչպիսիք են՝ «նարցիսիզմ»-ը, «նեկրոֆիլիա»-ն, «սադիզմ»-ը, «մազոխիզմ»-ը և այլն [262]:

Անհատական անոմիայի հայեցակարգի հեղինակը ամերիկացի սոցիոլոգ Ռոբերտ Ագնյուն է, ում տեսությունը հիմնված է Մերտոնի այն գաղափարի վրա, որ անհատի մոտ սոցիալական և հոգեբանական լարվածության առաջացումը պատճառ է դառնում իրավական միջոցների օտարման, ինչի արդյունքում նպատակին հասնելու համար սահմանվում են հակաօրինական միջոցներ: Ագնյուն ստեղծել է «Լարվածության ընդհանուր տեսություն», որում ներկայացվում են սոցիալ-հոգեբանական լարվածության տարբեր աղբյուրներ՝ ներառյալ նպատակների և դրանց հասնելու միջոցների

անհամապատասխանությունը: Միկրո մակարդակում անոմիայի առաջացման պատճառ կարող է դառնալ անհատի համար նշանակալի խմբի անդամներից մեկի նկատմամբ առաջացած բացասական վերաբերմունքը: Անհատական մակարդակում անոմիկ լարվածության աղբյուրը միշտ «բացասական հարաբերություններն են ուրիշների հետ, այլ կերպ ասած՝ հարաբերություններ, որոնցում անհատը չի ընկալվում այնպես, ինչպես կցանկանար, որ իրեն ընկալեն» [19]:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ հաղորդակցության մեջ ձևավորվող հակասական իրավիճակներում անհատը փորձում է խուսափել բացասական գնահատականներից, թաքցնում է իր ձախողման պատճառները կամ ընդհանրապես խուսափում է ցանկացած գործունեությունից և փոխազդեցությունից՝ նախընտրելով միայնություն:

Անոմիկ հասարակության մեջ դրսևորվող մեկ այլ սոցիալ-հոգեբանական երևույթ է *ապապրիան*: Ապատիան հունարենից թարգմանաբար նշանակում է անկիրք և անտարբեր վիճակ, որը բնութագրվում է հուզական պասիվությամբ, շրջակա միջավայրի իրադարձությունների նկատմամբ անտարբերությամբ, շարժառիթների և շահերի թուլացմամբ:

Սոցիալական ապատիան հասարակության բարեկեցությունն է, որն արտահայտվում է փախուստով և կյանքի իմասի կորստով: Անհատական մակարդակում ապատիան դրսևորվում է ընդգծված ինֆանտիլիզմով (օրգանիզմի զարգացման կասեցում, որի դեպքում հասուն տարիքում մարդու մոտ պահպանվում են ֆիզիկական և հոգեկան զարգացման մանկական գծերը), միջանձնային հաղորդակցությունից վիրտուալ իրականության շեղումով: Հաղորդակցման և տեղեկատվական ժամանակակից հնարավորությունները մի կողմից խնայում են անհատի ժամանակը, ինչը թույլ է տալիս հաղթահարել տարածական և ժամանակային սահմանները, մյուս կողմից՝ զրկում են նրան իրականության զգացումից, կշռադատ մտածողությունից և սեփական գործունեությունները համակարգելու կարողությունից: Այս հորինված իրականության արդյունքում խաթարվում է առօրյա կյանքը և առաջ է գալիս իրականության զգացողության բացասում:

Հոգեբանական անոմիայի ևս մեկ դրսևորման դերում հանդես է գալիս բարոյական անտարբերությունը, որն իրենից ներկայացնում է անտարբերություն սեփական անձի նկատմամբ: Անձնական մակարդակում բարոյական անտարբերությունը բնորոշ է առաջին հերթին կամային թույլ, ինֆանտիլ և անպատասխանատու անձնավորությանը: Անոմիկ հասարակության մեջ նման անհատների թիվն անխուսափելիորեն աճում է և հանգեցնում զանգվածների բարոյական անտարբերության [11]:

Մեր ժամանակների մեկ այլ կարևոր հատկանիշ է ոչ անձնավորված արժեքների տարածումը, երբ խոսում ենք «անհերոս ժամանակների» կամ «հակահերոս»-ների մասին: Նման իրավիճակը կապված է իդեալների բացակայության, բարոյական ընտրության անորոշության, հասարակության կողմից սոցիալապես հաստատված վարքագծային մոդելների բացակայության կամ թերի յուրացման հետ, ինչը վաղ թե ուշ հանգեցնում է անոմիայի դրսևորման: Այս դարի ամենաանկատ արհավիրքներից մեկը «հակահերոսի» համախտանիշն է, որը ոչնչացնում է գործող բոլոր պատկերացումն ու արժեքները: Հակահերոսներն օրինակ են դարձել մեծ թվով երիտասարդների համար: Պատահական չէ, որ տղամարդու և կնոջ կերպարի այլասերված ըմբռնումը, որը դրոշմված է երիտասարդների գիտակցության մեջ, հանգեցնում է արժեքային համակարգերի այնպիսի խեղաթյուրման, ինչը պատճառ է դառնում նորմատիվային փոփոխությունների, արժեհամակարգի և նախկինում ներդրված կարգերի քայքայման [65]:

Հոգեբանության գիտակարգում սկզբունքորեն անոմիա կարող է առաջանալ նաև այս հակասական դաշտում ներկայացվող անձնական ճգնաժամը, որի արդյունքում վերակազմավորվում է անհատի համոզմունքների համակարգը՝ արմատապես փոխելով նրա բարոյական և նորմատիվային վերաբերմունքը: Իր ողջ կյանքի ընթացքում մարդը կարող է բախվել տարբեր խնդիրների ու ճգնաժամերի: Դրանցից մի քանիսը կապված են կյանքի տարբեր փուլերում անձի զարգացման կամ այն սովորական, բնական իրադարձությունների հետ, որոնք տեղի են ունենում յուրաքանչյուր մարդու կյանքում և սահմանազատում են կյանքի մի փուլից մյուսի անցումը [11; 92]:

Ցանկացած «բնական» իրադարձություն մարդու կյանքում (ամուսնություն, երեխայի ծնունդ, դպրոց, հարազատի մահ, հիվանդություն և այլն) և դրա հետևանք անխուսափելիորեն առաջացնում է որոշակի խնդրահարույց իրավիճակ կամ ճգնաժամ, որն անհատից պահանջում է սեփական ռեսուրսների մոբիլիզացիա: Դրանք կոչվում են նորմատիվային սթրեսներ: Այդու խնդիրներն ու ճգնաժամերը, որոնց պետք է բախվի ժամանակակից մարդը, առաջանում են ոչ նորմատիվ իրադարձությունների պատճառով: Դրանք ներառում են վաղաժամ մահ, ամուսնալուծություն, աշխատանքի կորուստ, ձերբակալություն, բնական աղետ, գնաճ, գործազրկություն, պատերազմ և այլն: Այս համատեքստում բարոյական անտարբերության և ագրեսիայի դրսևորումները ներկայացվում են մոտավորապես հավասար հաճախականության դրսևորումներով:

Պատահական չէ, որ Տ. Պարսոնսը շեղված շարժառիթների առաջացումը բացատրում է ակնկալիքների չիրագործման հետ: Նա դեռահասների և երիտասարդների վարքագիծը դիտարկում է անոմիայի հայեցակարգի լույսի ներքո. մի վիճակ, որտեղ արժեքներն ու նորմերն այլևս պատշաճ վարքի հստակ ցուցիչներ չեն կամ կորցրել են իրենց նշանակությունը: Այս համատեքստում կարևորվում է արժեքային համակարգի պարադոքսալ բնույթը, որում կենտրոնական տեղում անձնական հաջողություններն ու արժեքներն են: Դրանց հետևելը մեծացնում է հասարակության կառուցվածքային տարբերակումը, ինչը հանգեցնում է կոնֆլիկտների և շեղված վարքագծի դրսևորման:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ հոգեբանության մեջ անոմիան դրսևորվում է հակասոցիալական վարքի և արժեքային համակարգի շարունակական քայքայման արդյունքում: Այս համատեքստում կարևոր է դառնում մեկնաբանել սոցիալական նորմի հայեցակարգը, որը հանդես է գալիս որպես ցանկացած շեղումների ուսումնասիրության մեկնարկային կետ: Ըստ ընդունված սահմանման՝ շեղված վարքագիծը շեղումն է սոցիալական նորմերից, քանի որ ցանկացած համակարգի գոյության հիմնական պայմաններից մեկը նրա կարողությունն է, որն անհրաժեշտ է պահպանել որոշակի հավասարակշռության վիճակում:

Մարդկության պատմությունը տալիս է համոզիչ օրինակներ, երբ անկարգություններն ու չպահպանվող նորմերը հանգեցնում են կործանման: Նորմերն այն մեխանիզմն են, որոնք սոցիալական համակարգը պահում են կենսունակ հավասարակշռության մեջ՝ անխուսափելի փոփոխության պայմաններում: Սոցիալական նորմերը կարող են ձևավորվել ինքնաբերի, օրինակ՝ ավանդույթների տեսքով կամ նպատակային՝ օրենքների, պաշտոնական կանոնակարգերի կամ արգելքների տեսքով: Հոգեվերլուծության հիմնադիր Զիգմունդ Ֆրեյդը կարծում էր, որ յուրաքանչյուր մարդու «նորմալություն» ու «աննորմալությունը» որոշվում են նրա անհատականության մեջ այս կամ այն իդեալական տիպի գերակշռության աստիճանով: Այս դեպքում «իդեալ» տերմինը այլ նշանակություն է ձեռք բերում և ենթադրում վերացական տարբերակ, որը գիտության մեջ ընդունված է որպես վարքի ուղեցույց [11]:

Անձի հարմարողական վարքագծի ձևավորման համար կարևոր նախապայման է հասարակության մեջ ներդրված որակների համապատասխանությունը անձնային որակներին, որտեղ էական նշանակություն են ստանում անձնային հատկությունները, հասարակության վերաբերմունքը և ձևավորված նորմերի կենսունակությունը: Սոցիալ-հոգեբանական այդ գործոնների համադրման արդյունքում հնարավոր եղավ մշակել հետպատերազմական անոմիայի հայեցակարգային տիպաբանությունը:

Հետպատերազմական անոմիայի տիպաբանության հիմքում ուսումնասիրվող երևույթի հիմնական հատկանիշների ու առանձնահատկությունների բնութագրումն է տարբեր սոցիալական խմբերում: Հետպատերազմական անոմիայի տիպաբանությունը կառուցվում է ըստ հետևյալ հետազոտական հատկանիշների.

- ✓ **հետազոտությանը մասնակցելու բարյացակամության աստիճանը,**
- ✓ **սոցիալական կամեցողության աստիճանը,**
- ✓ **համագործակցելու պատրաստակամությունը,**
- ✓ **վերբալ հաղորդակցման առանձնահատկությունները,**
- ✓ **ընդհանուր գնահատականը՝ հետպատերազմական փուլի վերաբերյալ.**

- ✓ **հետպատերազմական փուլում չլուծված խնդիրների ռեյտինգավորումը,**
- ✓ **հետպատերազմական փուլում լուծված խնդիրների ռեյտինգավորումը:**

2020 թվականի Արցախյան պատերազմից հետո իրականացված հետազոտությունը ցույց տվեց, որ պատերազմի մասնակիցների թիրախային խմբում անձինք մեծ մասամբ **անպատրաստ են երկար խոսելու** հետպատերազմական իրողությունների մասին, սակայն համակրանքով են վերաբերվում հետազոտության բուն ընթացքին: Բոլոր թիրախային խմբերում ներքոնշյալ ցուցանիշները համադրվեցին նաև ըստ Քեթթելի և Ռոջերս-Դայմոնդի հարցարանների արդյունքների հետ: Պատերազմի մասնակիցները, մասնավորապես, հիմնականում դրսևորեցին Ա տիպի գործոնի բացասական բնութագրերը՝ գերազանցապես անհաղորդ էին արտաքին սթրեսորների հանդեպ, ձգտում էին մնալ միայնակ, մարդկանց գնահատականներում ցուցաբերում էին ընդգծված խստություն: Պատերազմին մասնակցություն չունեցող թիրախային խմբի ներսում այն անձինք, որոնք հետպատերազմական շրջանում պահպանել են իրենց աշխատանքը, ցուցաբերել են ավելի արտահայտված բարյացակամ վերաբերմունք սոցիալ-հոգեբանական հետազոտությունների հանդեպ, քան այն անձինք, որոնք պատերազմին մասնակցություն չունենալով հանդերձ, կորցրել են իրենց աշխատանքը: Պատերազմի մասնակիցների, ինչպես նաև զոհվածների ընտանիքների անդամները պատրաստակամություն են դրսևորել, ունեն գլխավորապես **բարյացակամ և հանդուրժող վերաբերմունք հետազոտության թեմայի հանդեպ:** Այդ վերաբերմունքն առավել ցայտուն կերպով է արտահայտվել, երբ հարցադրումներն ու հետազոտողի հետաքրքրությունն ուղղված են եղել ընտանիքում զոհված հարազատի անձին և նրա կյանքի անցած ճանապարհին: Անհետ կորածների ընտանիքների անդամները բավական զգուշավոր են հետազոտությանը վերաբերվում, բարյացակամությունն արտահայտվում է չափավոր կերպով: Մասնագիտական

խմբերում, որոնք ներկայացված են եղել բժիշկների, փրկարարների և սոցիալական աշխատողների մասնագիտություններով, բոլոր հարցվողների մոտ նկատվում է բարյացակամ վերաբերմունք հետազոտությանը, հարցվողները պատրաստակամ են պատասխանելու հարցերին, հատկապես աչքի է ընկնում սոցիալական աշխատողների խումբը, որի ներկայացուցիչները հաճախ ցանկություն են արտահայտել լրացուցիչ ժամանակ հատկացնելու՝ իրենց մասնագիտական կարծիքն արտահայտելու համար: Ենթամշակութային խմբերում (էթնոմարգինալներ, կրոնական և ազգային փոքրամասնություններ, այլ) դրսևովել են գերազանցապես միգրացիոն դիրքորոշումներ (երկրից կամ բնակության վայրից մեկնելու պատրաստակամություն), ինչպես նաև էթնոմարգինալները, որոնք ներկայացել են երկէթնիկ ինքնության հատկանիշներով, ցուցաբերել են մասնակցության ցածր աստիճան և անբարյացակամ վերաբերմունք: Ազգային փոքրամասնություններից հարցումներին մասնակցել են եզդիներ (6%) և մոլդկաններ (5%), իսկ երևանաբնակ կրոնական փոքրամասնություններից՝ հայ կաթոլիկներ (5%): Բոլոր հարցվողները դրսևորել են բարյացակամ վերաբերմունք և ցանկություն՝ մասնակցելու հետազոտությանը: Աշխատանքը պահպանած անձանց թիրախային խմբում գրեթե բոլոր հարցվողները դրսևորել են մասնակցության պատրաստակամություն և բարյացակամ վերաբերմունք: Գործազուրկների շրջանում բարյացակամ վերաբերմունքը նկատվեց հարցվողների շուրջ 25%-ի մոտ: Մնացած հարցվողների վերաբերմունքն արտահայտված անբարյացակամ էր, հետազոտությանը մասնակցելու պատրաստակամությունը՝ շատ ցածր: Անօթևան մնացած անձանց թիրախային խմբում բարյացակամ վերաբերմունքը նկատվեց հարցվողների շուրջ 58%-ի մոտ: Մնացած հարցվողների արտահայտված վերաբերմունքն անբարյացակամ էր, հետազոտությանը մասնակցելու պատրաստակամությունը՝ նույնպես շատ ցածր: Արհամարհական վերաբերմունք. պատերազմի մասնակիցների, նրանց ընտանիքի անդամների, ինչպես նաև զոհվածների ընտանիքների անդամների ու պատերազմին մասնակցություն չունեցող անձանց թիրախային բոլոր խմբերում բացակայում էր

հետազոտության հանդեպ արհամարհական վերաբերմունքը, սակայն անհետ կորածների ընտանիքների շրջանում այն ունի թույլ արտահայտվածություն: Մասնագիտական խմբերում, ինչպես նաև կրոնական և ազգային փոքրամասնությունների շրջանում արհամարհական վերաբերմունքը բացակայում էր: Ենթամշակութային խմբերում առկա է գրեթե բոլոր այն հարցվողների մոտ, որոնք ունեն միգրացիոն դիրքորոշումներ կամ երկէթնիկ ինքնություն: Անօթևան մնացած անձանց շրջանում արհամարհական վերաբերմունքը գրանցվել է շուրջ 38%-ի մոտ, իսկ գործազուրկների շրջանում՝ 42%-ի մոտ: Ի տարբերություն այս ցուցանիշների, որոնք գրեթե նույնական են, աշխատանքը պահպանած անձանց շրջանում նկատվել է արհամարհական վերաբերմունքի դրսևորումների կտրուկ աճ՝ շուրջ 75% հարցվողների մոտ: **Սոցիալական կամեցողության աստիճանը.** պատերազմի մասնակիցներ – մասնակցություն չունեցող անձանց թիրախային խմբերում դիտարկվել է սոցիալական կամեցողության աստիճանի միջին արտահայտվածություն: Պատերազմի մասնակիցների ընտանիքների անդամների շրջանում դիտարկվել է սոցիալական կամեցողության միջինից բարձր աստիճան: Մյուս երկու խմբերում (զոհվածների և անհետ կորածների ընտանիքներ) այդ ցուցանիշն աստիճանաբար թուլանում է: Այդպես, պատերազմում զոհվածների ընտանիքի անդամների շրջանում փորձարարական հետազոտության ավարտին դիտարկվել է արդեն սոցիալական կամեցողության աստիճանի միջին, իսկ անհետ կորածների ընտանիքներում՝ ցածր արտահայտվածություն: Բժիշկների, փրկարարների, սոցիալական աշխատողների մասնագիտական խմբերում սոցիալական կամեցողության աստիճանը բարձր արտահայտվածություն ունի, ինչն առանձնահատուկ դրսևորվեց սոցիալական աշխատողների մոտ: Ցածր արտահայտվածություն դիտարկվեց միգրացիոն կողմնորոշում կամ երկէթնիկ ինքնություն ունեցողների մոտ: Զրույցին մասնակցած կրոնական և ազգային փոքրամասնությունների շրջանում սոցիալական կամեցողության աստիճանը բարձր էր: Հետպատերազմական շրջանում աշխատանքը պահպանած անձանց մոտ դիտարկվել է սոցիալական կամեցողության աստիճանի բարձր արտահայտվածություն:

Անօթևան անձինք դրսևորեցին սոցիալական կամեցողության աստիճանի միջին, իսկ գործազուրկ անձինք՝ ցածր արտահայտվածություն: Վստահություն հետազոտողի անձի հանդեպ. պատերազմի մասնակիցների, նրանց ընտանիքների, ինչպես նաև զոհվածների ընտանիքների և պատերազմում մասնակցություն չունեցող անձանց թիրախային խմբերում դիտարկվել է վստահության բարձր աստիճան: Այդ պատկերը փոխվել է անհետ կորածների ընտանիքներում, որտեղ վստահությունը բավականին թույլ էր արտահայտված. ընտանիքների անդամներից գրեթե բոլորը հետազոտողի հանդեպ չափազանց կասկածամիտ էին տրամադրված: Մասնագիտական բոլոր խմբերում նույնպես դիտարկվել է վստահության բարձր աստիճան: Վստահության համեմատաբար ցածր աստիճան դիտարկվեց միգրացիոն կողմնորոշումներ ունեցող անձանց մոտ, իսկ մնացած մշակութային ենթախմբերում վստահության բարձր աստիճանը պահպանվեց: Թեպետ աշխատանքը պահպանած անձանց շրջանում դիտարկվել է հետազոտողի հանդեպ վստահության բարձր աստիճան, փոքր ինչ այդ ցուցանիշը թուլացել է անօթևան մնացած անձանց մոտ, իսկ գործազուրկ անձանց շրջանում դիտարկվել է վստահության գերազանցապես ցածր աստիճան:

Համագործակցելու պատրաստակամություն. պատերազմի մասնակիցներ – մասնակցություն չունեցող անձանց թիրախային խմբերում նկատվել է համագործակցելու պատրաստակամության միջին մակարդակ: Պատերազմի մասնակիցների, զոհվածների և անհետ կորածների ընտանիքներում համագործակցելու պատրաստակամության մակարդակները աստիճանաբար թուլանում են՝ դրսևորելով համեմատաբար բարձր մակարդակը պատերազմի մասնակիցների, իսկ ցածր մակարդակը՝ անհետ կորածների ընտանիքների շրջանում: Մասնագիտական խմբերում դիտարկվել է համագործակցության բարձր մակարդակ, իսկ քննվող ենթամշակութային խմբերում՝ միջին մակարդակ: Աշխատանքը պահպանած, անօթևան մնացած և գործազուրկ անձանց շրջանում համագործակցության պատրաստակամությունը դրսևորվում է աստիճանաբար թուլացման միտվածությամբ: Այսպես, աշխատող անձանց մոտ այն դրսևորվել է ամենաբարձր, իսկ գործազուրկ

անձանց մոտ՝ ամենացածր մակարդակները: Ներքոնշյալ փոփոխականների (շարժումների բնութագրումը, ծայնի տոնայնությունը, բառապաշարի ընտրությունը և լոգոնկրոզի առկայությունը) խումբը ձևավորվել է բացահայտելու համար անոմիկ վարքի արտաքին ցուցանիշները: **Շարժումների բնութագրումը.** պատերազմի մասնակիցների մոտ շարժումները հիմնականում հանգիստ են, նկատվում է դանդաղաշարժություն զրույցի ընթացքում: Պատերազմին մասնակցություն չունեցող անձանց մոտ շարժումները հիմնականում հանգիստ են, հավասարակշռված: Երբեմն նկատվում են նյարդային շարժումներ: Ինչպես պատերազմի մասնակիցների, այնպես էլ՝ մասնակցություն չունեցող անձանց կողմից չեն գրանցվել ձեռքերով կտրուկ շարժումներ կամ հարվածներ սեղանին, այլ առարկաներին: Պատերազմի մասնակիցների ընտանիքների անդամների մոտ դիտարկվել են հիմնականում հանգիստ, հավասարակշռված շարժումներ: Մյուս երկու խմբերում՝ զոհվածների և անհետ կորածների ընտանիքների անդամների մոտ շարժումները հիմնականում նյարդային, անհավասարակշիռ են: Ձեռքերի շարժումները լայնաթափ են և արտահայտիչ: Այդ երկու խմբերում նկատվում է անկայունություն շարժումների ռիթմի և խտության հատկանիշներով: Գրանցվել են մեկ նյարդային, անհավասարակշիռ, մեկ՝ սառեցված դիրքով, դանդաղ շարժումներ: Պատերազմի մասնակիցների ընտանիքի անդամների կողմից չեն գրանցվել ձեռքերով կտրուկ շարժումներ կամ հարվածներ սեղանին, այլ առարկաներին, ինչը չի կարելի ասել մյուս երկու քննվող խմբերի մասին, որտեղ արձանագրվել են հազվադեպ հարվածներ տարբեր առարկաներին: Մասնագիտական խմբերի մոտ շարժումները հանգիստ են և հավասարակշռված: Ենթամշակութային խմբերում շարժումները նույնպես հիմնականում հանգիստ են, սակայն երբեմն նկատվում են նյարդային շարժումներ: Ինչպես մասնագիտական, այնպես էլ ենթամշակութային խմբերի ներկայացուցիչների կողմից չեն գրանցվել հարվածներ սեղանին կամ այլ առարկաներին: Աշխատողների շրջանում շարժումները հանգիստ են, հավասարակշռված: Նկատվում է որոշակի արագաշարժության միտում զրույցի ընթացքում: Արագաշարժությունը գրեթե բացակայում է գործազուրկ և անօթևան

մնացած անձանց մոտ: Այս վերջին երկու խմբերում նկատվում է անկայունություն շարժումների ուղիքի և խտության հատկանիշներով: Գրանցվել են մեկ նյարդային, անհավասարակշիռ, մեկ՝ սառեցված դիրքով, դանդաղ շարժումներ: Աշխատանքը պահպանած անձանց մոտ չեն գրանցվել հարվածներ սեղանին կամ այլ առարկաներին, սակայն նման շարժումներ դիտարկվել են գործազուրկ և անօթևան մնացած անձանց մոտ: Ձայնի տոնայնություն. պատերազմի մասնակիցներ – մասնակցություն չունեցող անձանց թիրախային խմբերում էլ դիտարկվել է ձայնի ցածր տոնայնություն: Ձայնի տոնայնությունը ցածր է պահպանվել պատերազմի մասնակիցների ընտանիքների անդամների կողմից: Զոհվածների և անհետ կորածների ընտանիքներում ձայնի տոնայնությունը կայուն չէր և դրսևորում էր բարձրանալու պարբերական միտվածություն: Մասնագիտական և ենթամշակութային երկու խմբերում էր դիտարկվել էր ձայնի ցածր տոնայնություն: Աշխատանքը պահպանած անձանց շրջանում այլ մեթոդիկաների կիրառման ընթացքում հիմնականում պահպանվում էր ձայնի ցածր տոնայնություն, սակայն անօթևան և գործազուրկ անձանց շրջանում ձայնի տոնայնությունը հաճախ բարձրանում էր: **Վերբալ խոսքի առանձնահատկություններ.** պատերազմին մասնակցած, ինչպես նաև մասնակցություն չունեցող անձանց մոտ բառապաշարը չափավոր է, հաճախ կիրառվող բառերը կրկնվելու միտում ունեն, պահպանվում է առօրյա խոսակցական լեզուն: Պատերազմի մասնակիցների ընտանիքների անդամների մոտ բառապաշարը չափավոր է, հաճախ կիրառվող բառերը կրկնվելու միտում ունեն, պահպանվում է առօրյա խոսակցական լեզուն: Զոհվածների և անհետ կորածների ընտանիքների անդամների մոտ բառապաշարը սուղ է, հաճախ կիրառվող բառերը կրկնվելու միտում ունեն, նկատվում է խոսքի միատարրություն, մեկ թեմայի շուրջ խոսքի ֆիքսվածություն, պահպանվում է առօրյա խոսակցական լեզուն: Մասնագիտական խմբերում բառապաշարը սուղ է, հաճախ կիրառվող բառերը չունեն կրկնվելու միտում, նկատվում է խոսքի բազմատարրություն, պահպանվում է առօրյա խոսակցական լեզուն, որի հետ զուգահեռ կիրառվում է նաև մասնագիտական բանավոր խոսքը: Ենթամշակութային խմբերում բառապաշարը չափավոր է,

հաճախ կիրառվող բառերը կրկնվելու միտում ունեն, պահպանվում է առօրյա խոսակցական լեզուն: Աշխատանքը պահպանած անձանց մոտ բառապաշարը չափավոր է, հաճախ կիրառվող բառերը կրկնվելու միտում ունեն, պահպանվում է առօրյա խոսակցական լեզուն: Գործազուրկ և անօթևան մնացած անձանց մոտ բառապաշարը համեմատաբար հարուստ է, բազմատարր, նյարդային, հաճախ կիրառվող բառերը չունեն կրկնվելու միտում, պահպանվում է առօրյա խոսակցական լեզուն: **Լոգոնկրոզի դրսևորումներ.** Պատերազմի մասնակիցների շրջանում լոգոնկրոզի դրսևորումները նկատվել են հարցվողների 7% մոտ: Պատերազմում մասնակցություն չունեցող անձանց շրջանում՝ հարցվողների 2% մոտ: Պատերազմի մասնակիցների ընտանիքների շրջանում լոգոնկրոզի դրսևորումները դիտարկվել են հարցվողների 4% մոտ: Պատերազմում զոհվածների ընտանիքների անդամների մոտ՝ շուրջ 28%, իսկ անհետ կորածների ընտանիքների անդամների մոտ՝ հարցվողների 33% մոտ: Մասնագիտական խմբերում լոգոնկրոզի դրսևորումներ չեն դիտարկվել: Ենթամշակութային խմբերում՝ շուրջ 3% մոտ: Աշխատանքը պահպանած անձանց շրջանում լոգոնկրոզի դրսևորումները դիտարկվել են հարցվողների շուրջ 5%-ի մոտ, գործազուրկների շրջանում՝ հարցվողների 38%-ի, իսկ անօթևան մնացած անձանց շրջանում՝ 42%-ի մոտ:

Հետպատերազմական անոմիայի հոգեախտորոշման նպատակով մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են հոգեբանական զրույցի թիրախային հարցադրումներ, ինչպիսիք են՝

- 1) **ընդհանուր վերաբերմունքը հետազոտության նկատմամբ.**
- 2) **ընդհանուր գնահատականը՝ հետպատերազմական փուլի վերաբերյալ.**
- 3) **հետպատերազմական փուլում չլուծված խնդիրների ռեյտինգավորում.**
- 4) **հետպատերազմական փուլում լուծված խնդիրների ռեյտինգավորում:**

Ընդհանուր վերաբերմունքը հետազոտության նկատմամբ.

պատերազմի մասնակիցների կողմից հետազոտության նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը դրական էր: Թեև մասնակցության ակտիվությունը դրսևորվել է չափավոր, այդուհանդերձ, հետազոտության թեմատիկան կարևորվել է և իմաստավորվել հարցվողների շրջանում: Պատերազմին մասնակցություն չունեցող անձինք փոքր ինչ բազմակարծիք էին հետազոտության հանդեպ: Ընդհանուր վերաբերմունքը հետազոտության ինկատմամբ քննվող երկու խմբում դրական է: Պատերազմի մասնակիցների, ինչպես նաև՝ զոհվածների ընտանիքների կողմից հետազոտության նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը դրական էր: Թեև մասնակցության ակտիվությունը դրսևորվել է չափավոր, այդուհանդերձ, հետազոտության թեմատիկան կարևորվել է և իմաստավորվել հարցվողների շրջանում: Անհետ կորածների ընտանիքի անդամների կողմից դրսևորվել է որոշակի զգուշավորություն հետազոտության նկատմամբ ընդհանուր վերաբերմունք արտահայտելիս: Մասնագիտական խմբերի ներկայացուցիչների կողմից հետազոտության նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը խիստ դրական էր: Հատկապես պոզիտիվ վերաբերմունքը, ինչպես նաև՝ աջակցելու պատրաստականությունը ցուցաբերեցին սոցիալական աշխատողները, որոնք հետաքրքրված էին սոցիալական հնչեղություն ունեցող թեմայի ուսումնասիրման մեջ: Ենթամշակութային խմբերում հարցվողները գերազանցապես նեյտրալ գնահատականներ են տվել, հիմնականում դրսևորել են որոշակի զգուշավորություն հետազոտության նկատմամբ ընդհանուր վերաբերմունք արտահայտելիս: Աշխատանքը պահպանած անձանց շրջանում հիմնականում դրսևորվում էր չափավոր արտահայտված հետաքրքրություն հետազոտության նկատմամբ: Առավել արտահայտված դրական վերաբերմունք դրսևորել են անօթևան մնացած անձինք, որոնց համար այս հետազոտությանը մասնակցելը ևս մի առիթ էր բարձրաձայնելու իրենց հուզող խնդիրները: Գործազուրկների շրջանում թեև պահպանվում էր ընդհանուր առմամբ դրական վերաբերմունք, սակայն աչքի էր ընկնում որոշակի զգուշավորություն հետազոտության նկատմամբ ընդհանուր վերաբերմունք արտահայտելիս: **Ընդհանուր գնահատականը հետպատերազմական փուլի վերաբերյալ.**

զրույցի ընթացքում նկատվել է պատերազմի մասնակիցների և մասնակցություն չունեցող անձանց գնահատականներում որոշակի տարակարծություն: Պատերազմի մասնակից հարցվողներն իրենց գնահատականները հնչեցնելիս ներկա իրողությունները ակամայից համեմատում էին պատերազմում իրենց կողմից հաղթահարված դժվարությունների հետ և համեմատաբար ավելի հանգիստ դիրքորոշում էին ցուցաբերում հետպատերազմական փուլում նկատվող սոցիալական, հոգեբանական, տնտեսական և անվտանգային անորոշ իրողությունների հանդեպ: Հետպատերազմական կենսակերպի ընդհանուր անորոշությունն ինքնին գնահատում էին նորմալ երևույթ: Պատերազմում մասնակցություն չունեցող անձանց գնահատականներում շեշտադրվում էին հատկապես իրենց ապագայի հանդեպ անորոշ սպասումները, որոնք առանձնանում էին ապագա անելիքների հանդեպ թերահավատությամբ և պահանջմունքների որոշակի սահմանափակմամբ: Այս խմբում գերակա էին անվտանգության և առողջության պահպանման պահանջմունքները: Պատերազմի մասնակիցները հետպատերազմական փուլում կարևորել են ինքնուրույնության և հաղորդակցման պահանջմունքները: Զրույցի ընթացքում պատերազմի մասնակիցների ընտանիքների անդամներն իրենց գնահատականները հնչեցնելիս ներկա իրողությունները ակամայից համեմատում էին պատերազմում իրենց ազգականի կողմից հաղթահարված դժվարությունների հետ: Դրա հետ զուգահեռ, միտում կա պատերազմի մասնակցի կողմից արդեն հաղթահարված դժվարությունները կամ դրանց հետևանքները ներկայացնելու որպես դեռևս գոյություն ունեցող և արդիական խնդիրներ: Հետպատերազմական կենսակերպն ընդհանուր առմամբ գնահատում էին որպես անորոշ և անկայուն: Պատերազմում զոհվածների ընտանիքների անդամների գնահատականներում հետպատերազմական փուլը գնահատվում էր հիմնականում վշտի վերապրման տեսանկյունից, իրենց զոհված ազգականի՝ միջավայրում ճանաչված և գնահատված լինելու հանգամանքից ելնելով: Անհետ կորածների ընտանիքներում հետպատերազմական փուլի գնահատականներն առանձնանում էին կտրուկ, երբեմն ծայրահեղ տարբերվող ձևակերպումներով:

Ընդհանուր առմամբ, զոհվածների և անհետ կորածների ընտանիքների անդամների գնահատականներում նկատվում էր պահանջմունքների որոշակի սահմանափակման միտվածություն՝ ուղղված հարազատի կորստի շեշտադրմանը և նրա կյանքի մեծարմանը: Այս խմբում գերակա էր կենսագրական հիշողության պահպանման պահանջմունքը: Հետպատերազմական փուլում անվտանգային պահանջմունքները կարևորվել են հատկապես պատերազմի մասնակիցների ընտանիքների անդամների կողմից: Զրույցի ընթացքում մասնագիտական խմբերի ներկայացուցիչները հետպատերազմական փուլը ընդհանուր առմամբ գնահատում էին որպես անորոշ և անկայուն: Մասնագետների կողմից շեշտադրվում է միջավայրում նկատվող մարդկանց վարքագծի կտրուկ, երբեմն ագրեսիվ կողմը: Ենթամշակութային խմբերի ներկայացուցիչների գնահատականներում նկատվում էր պահանջմունքների որոշակի սահմանափակման միտվածություն՝ ուղղված առօրեական առաջնահերթ խնդիրների լուծումներին: Այս խմբում գերակա էր տվյալ ենթամշակութային խմբին պատկանելիության պահպանման պահանջմունքը, որը դրվում էր սոցիալական սպասումների հիմքում: Աշխատանքը պահպանած անձանց ձևակերպումներում հետպատերազմական փուլը ընդհանուր առմամբ գնահատվում էր որպես նոր իրողություն: Այն բնութագրվում էր «Ես»-ի և միջավայրի մասին նախկին պատկերացումների վերափոխմամբ և առկա անորոշությունների հետ զուգահեռ՝ ճկուն, նոր վարքագիծ ձևավորելու ունակությամբ: Շեշտադրվում է այս փուլում ընտանեկան կայունության ամրապնդման պահանջմունքը: Գործազուրկ և անօթևան մնացած անձանց գնահատականներում նկատվում էր հետպատերազմական փուլի՝ որպես միջանկյալ շրջանի, մասին շեշտադրումը: Այն ընկալվում էր որպես անցողիկ, վերափոխվող, որոշ դեպքերում նաև՝ սխալական կամ անհասկանալի շրջափուլ: Նկատվում էր պահանջմունքների որոշակի սահմանափակման միտվածություն՝ ուղղված առօրեական առաջնահերթ խնդիրների լուծումներին: Այս խմբում գերակա էր սոցիալական սպասումների ցածր աստիճան:

Հետպատերազմական փուլում չլուծված խնդիրների ռեյտինգավորում. պատերազմի մասնակիցների շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ

ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. աշխատանքով ապահովվածություն.
2. հաղորդակցման բավարար մակարդակ.
3. սոցիալական սպասումների որոշակիություն.
4. անվտանգություն.
5. անձնական կյանք:

Պատերազմին մասնակցություն չունեցող անձանց շրջանում գրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. անվտանգություն.
2. սոցիալական սպասումների որոշակիություն.
3. աշխատանքով ապահովվածություն.
4. անձնական կյանք.
5. հաղորդակցման բավարար մակարդակ:

Պատերազմին մասնակիցների ընտանիքի անդամների շրջանում գրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. անվտանգություն.
2. սոցիալական սպասումների որոշակիություն.
3. աշխատանքով ապահովվածություն.
4. անձնական կյանք.
5. հաղորդակցման բավարար մակարդակ:

Պատերազմում զոհվածների ընտանիքների անդամների շրջանում գրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. հաղորդակցման բավարար մակարդակ.
2. սոցիալական սպասումների որոշակիություն.
3. աշխատանքով ապահովվածություն.
4. անվտանգություն.
5. անձնական կյանք:

Պատերազմում անհետ կորածների ընտանիքների անդամների շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. սոցիալական սպասումների որոշակիություն.
2. հաղորդակցման բավարար մակարդակ.
3. անվտանգություն.
4. աշխատանքով ապահովվածություն.
5. անձնական կյանք:

Մասնագիտական խմբերի ներկայացուցիչների շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. անվտանգություն.
2. սոցիալական սպասումների որոշակիություն.
3. անձնական կյանք.
4. աշխատանքով ապահովվածություն.
5. հաղորդակցման բավարար մակարդակ:

Ենթամշակութային խմբերի ներկայացուցիչների շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. սոցիալական սպասումների որոշակիություն.
2. անվտանգություն.
3. աշխատանքով ապահովվածություն.
4. հաղորդակցման բավարար մակարդակ.
5. անձնական կյանք:

Այդ ցուցանիշները գերազանցապես դրսևորել են միգրացիոն նպատակադրվածություն ունեցող անձինք: Էթնիկ և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների շրջանում չլուծված խնդիրների ռեյտինգավորումը ստացել է հետևյալ տեսքը՝

1. անվտանգություն.
2. աշխատանքով ապահովվածություն.

3. հաղորդակցման բավարար մակարդակ.
4. սոցիալական սպասումների որոշակիություն.
5. անձնական կյանք:

Աշխատանքը պահպանած անձանց շրջանում գրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. անվտանգություն.
2. սոցիալական սպասումների որոշակիություն.
3. անձնական կյանք.
4. հաղորդակցման բավարար մակարդակ.
5. աշխատանքով ապահովվածություն:

Գործազուրկ անձանց շրջանում գրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. աշխատանքով ապահովվածություն.
2. սոցիալական սպասումների որոշակիություն.
3. անվտանգություն.
4. հաղորդակցման բավարար մակարդակ.
5. անձնական կյանք:

Անօթևան անձանց շրջանում գրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. սոցիալական սպասումների որոշակիություն.
2. աշխատանքով ապահովվածություն.
3. անվտանգություն.
4. հաղորդակցման բավարար մակարդակ.
5. անձնական կյանք:

Հետպատերազմական փուլում լուծված խնդիրների ռեյտինգավորում. պատերազմի մասնակիցների շրջանում գրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է լուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. ինքնուրույնություն.
2. անձնական կյանք.
3. առողջություն.
4. հաղորդակցման բավարար մակարդակ.
5. աշխատանքով ապահովվածություն:

Պատերազմին մասնակցություն չունեցող անձանց շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է լուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. հաղորդակցման բավարար մակարդակ.
2. անձնական կյանք.
3. աշխատանքով ապահովվածություն.
4. առողջություն.
5. ինքնուրույնություն:

Պատերազմի մասնակիցների ընտանիքների շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է լուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. հաղորդակցման բավարար մակարդակ.
2. աշխատանքով ապահովվածություն.
3. ինքնուրույնություն.
4. անձնական կյանք.
5. առողջություն:

Պատերազմում զոհվածների և անհետ կորածների ընտանիքների անդամները դրսևորել են նմանատիպ պատկերացումներ լուծված խնդիրների վերաբերյալ, որոնք նույնպես ռեյտինգավորվել են (ըստ նվազման սկզբունքի)՝

1. հաղորդակցման բավարար մակարդակ.
2. աշխատանքով ապահովվածություն.
3. ինքնուրույնություն.

4. առողջություն.

5. անձնական կյանք:

Մասնագիտական խմբերի ներկայացուցիչների շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է լուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

Անհետ կորածների ընտանիքներ	0.526	***	-0.167	**	-0.552	***	-0.201	***	-0.100	**
Մասնագիտական խմբեր	-		-0.436	***	-0.697	***	-0.376	***	-0.619	**

Ըստ Դինի / Նորմի բացակայություն		Ըստ Միդլթոնի / Անգորություն		Ըստ Միդլթոնի / Իմաստի կորուստ		Ըստ Միդլթոնի / Նորմի բացակայություն		Ըստ Միդլթոնի / Մշակութային օտարվածություն		Ըստ Միդլթոնի / Սոցիալական օտարվածություն		Ըստ Միդլթոնի / Օտարվածություն աշխատանքից	
-0.320	*			-0.199	**	-0.265	***	-		-0.124	**	-	
-0.205	**	-0.232	***	-0.104	**	-0.488	**	-		-0.326	***	-0.223	**
-0.379	**			-0.111	**	-0.118	**	-		-0.114	**	-0.102	**
-0.222	***	-0.199	*	-0.325	***	-0.102	**	-0.127	***	-0.128	**	-0.328	**
-0.237	**	-0.101	**	-0.252	**	-0.112	**	-		-0.203	**	-0.168	***
-0.263	***	-0.147	**	-0.110	***	-0.146	**	-		-0.118	*	-0.232	**
-0.113	*	-0.392	**	-0.300	***	-0.274	***	-		-0.213	**	-0.347	*
-0.133	**	-0.116	**	-0.272	**	-0.101	***	-0.476	***	-0.266	***	-0.422	**
-0.212	**	-		-0.472	**	-0.353	***	-		-0.132	***	-0.377	***
-0.202	***	-0.22	***	-0.388	**	-0.474	***	-		-0.236	***	-0.328	***
-0.350	*	-0.122	***	-0.285	**			-		-0.212	***	-0.102	**
-		-0.665	***	-0.464	***	-		0.234	**	-0.432	***	0.441	***
-		-		-0.287	***	0.561	**	0.227	**	-0.372	***	0.211	*
-		-0.101	*	-0.244	**	0.401	**	0.170	*	-0.333	***	0.325	*
-0.120	*	-0.145	*	0.255	***	-0.640	*	0.206	**	-0.534	**	0.447	**
-0.335	**	-0.285	*	0.445	***	-0.678	**	0.265	**	-0.564	***	0.263	**
-0.412	**	-0.499	**	-		-0.433	***	0.198	***	-0.555	***	0.106	***

Փոփոխականներ (Spearman's rho)	Ըստ Մաքքլոսկի և Շահարի / Իմաստի կորուստ		Ըստ Մաքքլոսկի և Շահարի / Նորմի բացա- կայություն		Ըստ Մաքքլոսկի և Շահարի / Սոցիալական մեկուսացում		Ըստ Դինի / Սոցիալական մեկուսացում		Ըստ Դինի / Անզորություն	
Ենթամշակութային խմբեր	-0.133	**	0.228	**	-0.388	***	-0.371	***	-0.225	**
Աշխատողներ	-0.222	**	0.149	*	-0.302	***	-0.322	***	-0.220	**
Գործազուրկներ	0.175	**	0.111	*	-0.477	***	-0.399	***	0.221	***
Անօթևաններ	0.596	**	-0.121	**	-0.374	***	-0.298	***	0.378	***
Սահմանամերձ գոտում բնակվողներ	-0.652	*	-0.72	*	-0.433	***	-0.489	**	-	
Ոչ սահմանամերձ գոտում բնակվողներ	-0.111	*	-0.196	**	-0.410	***	-0.293	**	-	
Դեկանտ վարքագծով մարզինականներ	0.224	***	0.234	***	-0.201	***	-0.189	***	0.447	***
11. Կյանքի իմաստություն										
Պատերազմի մասնակիցներ	-0.855	***	-0.715	***	-0.606	***	-0.552	***	-0.565	***
Պատերազմում մասնակցություն չունեցող անձինք	-0.604	**	-0.112	**	-0.306	**	-0.115	**	-0.234	**
Պատերազմի մասնակիցների ընտանիքներ	-0.320	***	-0.193	***	-0.261	**	-0.421	***	-0.214	***
Զոհվածների ընտանիքներ	-0.761	***	-0.755	***	-0.655	***	-0.744	***	-0.567	**
Անհետ կորածների ընտանիքներ	-0.565	***	-0.665	***	-0.841	***	-0.464	***	-0.568	***
Մասնագիտական խմբեր	-0.432	***	-0.232	***	-0.341	***	-0.153	***	-0.252	**
Ենթամշակութային խմբեր	-0.267	**	-0.132	**	-0.344	***	-0.329	***	-0.230	***
Աշխատողներ	-0.448	*	-0.430	***	-0.264	**	-0.112	**	-0.627	***
Գործազուրկներ	-0.325	***	-0.467	***	-0.237	***	-0.525	**	-0.204	**
Անօթևաններ	-0.565	***	-0.486	***	-0.253	***	-0.647	**	-0.315	***
Սահմանամերձ գոտում բնակվողներ	-0.676	***	-0.574	***	-0.374	***	-0.426	***	-0.474	***
Ոչ սահմանամերձ գոտում բնակվողներ	-0.317	***	-0.203	***	-0.408	***	-0.405	***	-0.335	***
Դեկանտ վարքագծով մարզինականներ	-0.665	***	-0.418	***	-0.464	**	-0.503	**	-0.450	**

Ըստ Դինի / Նորմի բացակա- յություն		Ըստ Միդլթոնի / Անգորություն		Ըստ Միդլթոնի / Իմաստի կորուստ		Ըստ Միդլթոնի / Նորմի բացա- կայություն		Ըստ Միդլթոնի / Մշակութային օտարվա- ծություն		Ըստ Միդլթոնի / Սոցիալական օտարվա- ծություն		Ըստ Միդլթոնի / Օտարվածու- թյուն աշխա- տանքից	
-0.221	*	-0.262	*	-0.174	***	0.114	*	0.558	***	-0.342	**	0.255	*
-0.189	**	-0.224	**	-0.188	***	0.148	*	0.264	***	-0.333	**	0.344	***
0.101	**	0.313	***	0.110	**	-		0.266	***	-0.220	***	0.466	***
-		0,411	***	0,256	**	0,333	***	0,436	***	-0,261	***	0,253	***
-0.459	***	-		-0.111	**	-0.102	*	0.634	***	-0.333	***	-	
-0.297	**	-		-		-		0.283	***	-0.324	***	-	
0.336	***	0.385	***	0.132	***	0.199	**	0.346	***	-0.442	***	0.502	***
-0.557	***	-0.623	***	-0.363	***	-0.454	***	-		-0.335	***	-0.464	**
-0.436	***	-		-0.186	**	-0.212	**	-		-0.247	**	-0.262	***
-0.260	**			-0.239	**	-0.165	***	-		-0.224	***	-	
-0.575	***	-0.552	***	-0.654	***	-0.588	***	-		-0.4826	***	-0.778	***
-0.822	**	-0.765	***	-0.231	**	-0.548	***	-		-0.254	**	-0.492	***
-0.452	***	-0.269	*	-0.25	***	-0.102	***			-0.422	**	-0.263	***
-0.237	**	-0.200	**	-0.452	**	-0.242	***	-		-0.257	***	-0.368	***
-0.263	***	-0.367	**	-0.250	***	-0.346	***	-		-0.238	***	-0.422	***
-0.113	**	-0.392	**	-0.530	***	-0.424	***	-		-0.213	**	-0.347	**
-0.5333	**	-0.216	**	-0.272	**	-0.251	***	-		-0.446	***	-0.462	***
-0.502	***	-0.435	***	-0.372	**	-0.40	***	-		-0.532	***	-0.402	***
-0.412	**	-0.22	***	-0.288	**	-0.264	***	-		-0.266	**	-0.327	***
-0.480	**	-0.610	***	-0.485	***	-0.324	***	-		-0.237	***	-0.403	***

Փոփոխականներ (Spearman's rho)	Ըստ Մաքքլոսկի և Շահարի / Իմաստի կորուստ		Ըստ Մաքքլոսկի և Շահարի / Նորմի բացա- կայություն		Ըստ Մաքքլոսկի և Շահարի / Սոցիալական մեկուսացում		Ըստ Դինի / Սոցիալական մեկուսացում		Ըստ Դինի / Անզորություն	
12. Ազատություն										
Պատերազմի մասնակիցներ	-0.103	***	-0.147	***	-0.158	**	-0.244	***	-0.275	***
Պատերազմում մասնակցություն չունեցող անձինք	-0.203	***	-0.416	*	-0.208	*	-0.304	***	-0.223	**
Պատերազմի մասնակիցների ընտանիքներ	-0.230	***	-0.261	**	-0.406	**	-0.321	**	-0.134	**
Զոհվածների ընտանիքներ	0.536	***	-0.167	**	-0.552	***	-0.402	***	-0.434	**
Անհետ կորածների ընտանիքներ	-0.433	***	-0.266	***	-0.537	***	-0.366	***	-0.309	***
Մասնագիտական խմբեր	-0.133	**	-0.228	**	-0.418	***	-0.371	***	-0.325	**
Ենթամշակութային խմբեր	-0.242	**	-0.100	*	-0.102	**	-0.122	*	-0.236	**
Աշխատողներ	-0.575	**	-0.511	***	-0.477	***	-0.509	***	0.421	**
Գործազուրկներ	-0.296	**	-0.221	**	-0.374	***	-0.158	***	-0.378	***
Անօթևաններ	-0.552	**	-0.442	***	-0.4336	***	-0.489	**	-0.701	**
Սահմանամերձ գոտում բնակվողներ	-0.602	***	-0.578	***	-0.401	***	-0.603	***	-0.774	***
Ոչ սահմանամերձ գոտում բնակվողներ	-0.264	***	-0.434	***	-0.301	***	-0.189	***	-0.447	***
Դեկանտ վարքագծով մարզինալներ	-0.456	***	-0.398	***	-0.478	***	-0.415	***	-0.771	***
13. Ճանաչողություն										
Պատերազմի մասնակիցներ	-0.113	***	-0.140	*	-0.228	*	-0.265	***	-	
Պատերազմում մասնակցություն չունեցող անձինք	-0.214	***	-0.196	***	-0.208	*	-0.347	***	-0.120	*
Պատերազմի մասնակիցների ընտանիքներ	-0.432	***	-0.311	*	-0.335	***	-0.421	**	-0.230	***
Զոհվածների ընտանիքներ	-0.536	***	-0.447	***	-0.452	***	-0.462	***	-0.437	***

Ըստ Դինի / Նորմի բացակայություն		Ըստ Միդլթոնի / Անգորություն		Ըստ Միդլթոնի / Իմաստի կորուստ		Ըստ Միդլթոնի / Նորմի բացակայություն		Ըստ Միդլթոնի / Մշակութային օտարվածություն		Ըստ Միդլթոնի / Սոցիալական օտարվածություն		Ըստ Միդլթոնի / Օտարվածություն աշխատանքից	
-0.674	***	-0.596	***	-0.487	***	0.502	**	-0.477	***	-0.472	***	0.511	***
-0.203	***	-0.211	**	-0.144	**	-0.102	**	-0.100	**	-0.253	**	-0.201	*
-0.120	*	-0.144	**	0.355	***	-0.260	**	-0.306	***	-0.434	**	0.347	**
-0.335	**	-0.285	*	0.445	***	-0.178	**	-0.265	**	-0.404	**	0.333	***
-0.412	***	-0.299	**	-0.225	***	-0.447	**	0.198	***	-0.507	***	0.436	**
-0.231	**	-0.362	**	-0.274	***	-0.114	*	0.541	***	-0.362	***	0.255	***
-0.189	**	-0.134	**	-0.188	***	-0.150	***	-0.124	***	-0.303	**	-0.124	***
-0.101	**	0.313	***	0.110	**	-0.260	***	-0.466	***	-0.470	***	-0.526	***
-0.111	***	0.412	***	-0.206	**	-0.325	**	-0.336	***	-0.261	***	-0.253	***
-0.699	***	-0.551	**	-0.471	**	-0.422	**	-0.444	***	-0.333	***	-0.501	***
-0.467	***	-0.465	***	-0.555	**	-0.446	***	-0.655	***	-0.555	**	-0.671	***
0.336	***	0.385	***	0.132	***	-0.199	**	-0.346	***	-0.442	***	-0.502	***
-0.136	**	-0.566	***	-0.464	***	-0.561	***	-0.654	***	-0.411	***	-0.403	***
-0.100	*	-		-0.287	***	-0.161	**	-0.227	**	-0.372	***	-0.211	**
-		-0.121	*	-0.154	**	0.101	***	-0.170	**	-0.223	**	-0.115	***
-0.420	***	-0.255	**	-0.455	***	-0.420	**	-0.426	***	-0.530	***	-0.457	***
-0.535	**	-0.455	***	-0.455	***	-0.708	***	-0.475	***	-0.570	***	-0.563	***

Փոփոխականներ (Spearman's rho)	Ըստ Մաքքլոսկի և Շահարի / Իմաստի կորուստ		Ըստ Մաքքլոսկի և Շահարի / Նորմի բացա- կայություն		Ըստ Մաքքլոսկի և Շահարի / Սոցիալական մեկուսացում		Ըստ Դինի / Սոցիալական մեկուսացում		Ըստ Դինի / Անզորություն	
Անհետ կորածների ընտանիքներ	-		-0.226	***	-0.197	***	-0.176	***	-0.200	***
Մասնագիտական խմբեր	-0.773	***	-0.728	***	-0.568	***	-0.671	***	-0.755	***
Ենթամշակութային խմբեր			-0.149	*	-0.102	***	-0.122	***	-0.220	**
Աշխատողներ	-0.425	***	-0.441	**	-0.527	**	-0.497	***	-0.231	***
Գործազուրկներ	-0.420	**	-0.421	**	-0.744	***	-0.568	***	0.378	***
Անօթևաններ	-0.502	**	-0.6342	***	-0.433	***	-0.459	***	-	
Սահմանամերձ գոտում բնակվողներ	-0.121	*	-0.196	**	-0.110	***	-0.123	***	-	
Ոչ սահմանամերձ գոտում բնակվողներ	-0.212	***	-0.114	**	-0.211	***	-0.177	***	0.247	***
Դեկանտ վարքագծով մարզինականներ	-0.255	***			-0.155	**	-0.225	**	-	
14. Չարգացում										
Պատերազմի մասնակիցներ	-0.775	***	-0.645	***	-0.646	***	-0.452	***	-0.4565	***
Պատերազմում մասնակցություն չունեցող անձինք	-0.304	**	-0.412	**	-0.306	**	-0.225	**	-0.434	**
Պատերազմի մասնակիցների ընտանիքներ	-0.420	***	-0.194	***	-0.264	**	-0.321	***	-0.274	***
Ձոհվածների ընտանիքներ	-0.777	***	-0.726	***	-0.455	***	-0.644	***	-0.542	***
Անհետ կորածների ընտանիքներ	-0.425	***	-0.604	***	-0.471	***	-0.483	***	-0.568	***
Մասնագիտական խմբեր	-0.532	***	-0.602	***	-0.441	***	-0.333	***	-0.515	***
Ենթամշակութային խմբեր	-0.167	**	-0.132	**	-0.344	***	-0.329	***	-0.230	***
Աշխատողներ	-0.448	*	-0.430	***	-0.334	**	-0.142	**	-0.427	***
Գործազուրկներ	-0.525	***	-0.467	***	-0.447	***	-0.525	**	-0.404	**
Անօթևաններ	-0.465	***	-0.486	***	-0.253	***	-0.427	**	-0.365	***

Ըստ Դինի / Նորմի բացակայություն		Ըստ Միդլթոնի / Անգորություն		Ըստ Միդլթոնի / Իմաստի կորուստ		Ըստ Միդլթոնի / Նորմի բացակայություն		Ըստ Միդլթոնի / Մշակութային օտարվածություն		Ըստ Միդլթոնի / Սոցիալական օտարվածություն		Ըստ Միդլթոնի / Օտարվածություն աշխատանքից	
-0.212	***	-0.209	***	-		-0.237	***	-0.258	***	-0.555	***	-0.586	***
-0.561	**	-0.462	**	-0.574	***	-0.714	**	-0.574	***	-0.642	***	-0.475	**
-0.125	*	-0.224	**			-0.120	**			-0.233	***	-0.144	**
-0.421	**	-0.413	**	-0.110	**	-0.777	***	-0.556	**	-0.520	**	-0.466	**
-		0,411	***	0,256	**	0,333	***	0,436	***	-0,261	***	0,253	***
-0.639	***	-		-0.221	***	-0.545	**	-0.524	***	-0.433	***	-	
-0.237	***	-		-		-0.113	***	-0.244	***	-0.215	***	-	
-0.136	***	-0.205	**	-0.142	***	-0.239	***	-0.256	**	-0.242	**	-0.232	**
-		-		-0.224	**			-0.334	***	-0.142	**	-0.234	***
-0.637	***	-0.445	***	-0.467	***	-0.524	**	-0.444	**	-0.465	**	-0.565	***
-0.336	***	-0.234	***	-0.286	**	-0.242	***	-		-0.347	***	-0.362	***
-0.241	***	-0.434	***	-0.339	**	-0.465	**	-		-0.124	**	-	
-0.548	**	-0.452	***	-0.554	***	-0.56	**	-		-0.426	***	-0.670	**
-0.523	***	-0.565	***	-0.431	**	-0.758	**	-		-0.554	***	-0.602	***
-0.362	***	-0.329	**	-0.362	***	-0.417	***	-		-0.752	**	-0.653	***
-0.237	**	-0.200	**	-0.452	**	-0.242	***	-		-0.257	***	-0.368	***
-0.263	***	-0.367	**	-0.250	***	-0.266	***	-		-0.138	***	-0.322	**
-0.113	**	-0.422	**	-0.530	***	-0.364	**	-		-0.443	**	-0.547	**
-0.533	**	-0.416	**	-0.572	***	-0.451	***	-		-0.456	***	-0.562	***

Համաձայն ստացված արդյունքների, պարզ դարձավ, որ հետազոտվող թիրախային խմբերում արժեքային համակարգի այն բաղադրատարրերը, որոնք առավել ևս «տուժել են» հետպատերազմական շրջափուլում, դրսևորել են հակադիր համահարաբերակցային կապեր անոմիան չափող բոլոր վերը նշված սանդղակների փոփոխականների հետ: Այլ խոսքերով, որքան ուժեղ են արտահայտվում անոմիայի փոփոխականները, այնքան թույլ են դրսևորվում յուրաքանչյուր թիրախային խմբի համար հետպատերազմական շրջափուլում նշանակալի արժեքները:

Արժեքային ճգնաժամն, ուստի, «սնվելով» սոցիալական միջավայրում անձանց և սոցիալական բխմբերի մոտ օտարվածության, անորոշության և նորմերին հետևելու անկարողության կամ պասիվության բարձր մակարդակով, բնութագրական է դառնում ողջ հետպատերազմական շրջափուլի համար: Եվ պատահական չէ, որ այդ կապերի ուժեղ արտահայտված համահարաբերակցությունը դրսևորվեց դեռևս վարքագիծ ունեցող (ալկոհոլային, սննդային կախվածություն ունեցողներ, այլ) թիրախային խմբի ներկայացուցիչների մոտ. չէ որ նրանք ոչ միայն հայտնվել են մարզինալ կարգավիճակում՝ դեհիանտ վարքագծի կրողները լինելով հանդերձ, և օտարվածության զգացում ապրելով սոցիալական միջավայրի հանդեպ, այլև կրել են հասարակայնորեն նշանակալի հետպատերազմական իրողությունների ազդեցությունը: Արժեքային ճգնաժամի և անոմիայի բարդ համահարաբերակցական կապերն առանձնահատուկ կարևորություն ներկայացրեցին սահմանամերձ գոտում բնակվողների համար, ովքեր հետպատերազմական ժամանակահատվածը հակված են ընկալելու ոչ թե որպես անցումային կամ անցողիկ շրջափուլ, այլ՝ որպես նոր իրողություն, որին պետք է ադապտացվեն:

Նպատակադրվածության

փոխակերպումների

բացահայտման անհրաժեշտությունն առաջացավ՝ պարզելու համար հետազոտվող թիրախային խմբերում նյարդահոգեկան բռնկումների առաջացման հավանականությունը [229], հետպատերազմական շրջափուլում կյանքի նպատակների սահմանման և իրագործման ճանապարհին որպես խոչընդոտ ի հայտ գալու հնարավոր պատկերը: Կանխատեսման այս մեթոդի

կիրառումը՝ Քեթթելի և Ռոջերս-Դայմոնդի հարցարաններով ստացված արդյունքների հետ համադրությամբ, ցույց տվեց, որ նյարդային-հոգեկան բռնկումների հավանականությունը գրանցվեց հիմնականում զոհվածների ու անհետ կորածների ընտանիքների, գործազուրկների, անօթևանների և դեհանտ վարքագծով մարզի-նալների շրջանում:

Կարելի է ենթադրել, որ հետպատերազմական շրջափուլում անոմիայի և արժեքային ճգնաժամի հիմնական բացասական ազդեցությունը կրում են հենց այս թիրախային խմբերը. այս եզրակացությանը եկել ենք նաև անոմիայի հայեցակարգային տիպաբանության այլ բաղադրատարրերի ուսումնասիրման արդյունքում:

Այդուհանդերձ, նշանակալի տարբերություններ չեն հայտնաբերվել երևանաբնակների և մարզերում բնակվողների ցուցանիշներում՝ քաղաքաբնակների (երևանաբնակների և այլ մարզային կենտրոնների բնակիչների) կողմից գրանցված ցուցանիշների փորք-ինչ գերակշռությամբ:

Թիրախային խմբեր ք. Երևանում և մարզերում, միջինացված ցուցանիշներ	Խմբերում գրանցված միավորի միջինացված ցուցանիշ	Արդյունքների նկարագրություն
Պատերազմի մասնակիցներ	14 /14-28/	Նյարդային-հոգեկան բռնկումները հավանական են, եզրային ցուցանիշ
Պատերազմում մասնակցություն չունեցող անձինք	13 /0-13/	Նյարդային-հոգեկան բռնկումները քիչ հավանական են, եզրային ցուցանիշ
Պատերազմի մասնակիցների ընտանիքներ	11 /0-13/	Նյարդային-հոգեկան բռնկումները քիչ հավանական են
Զոհվածների ընտանիքներ	31 /29 և ավելի/	Նյարդային-հոգեկան բռնկումների բարձր հավանականություն

Անհետ կորածների ընտանիքներ	33 /29 և ավելի/	Նյարդային-հոգեկան բռնկումների բարձր հավանականություն
Մասնագիտական խմբեր	9 /0-13/	Նյարդային-հոգեկան բռնկումները քիչ հավանական են
Ենթամշակութային խմբեր	10 /0-13/	Նյարդային-հոգեկան բռնկումները քիչ հավանական են
Աշխատանքը պահպանած անձինք	7 /0-13/	Նյարդային-հոգեկան բռնկումները քիչ հավանական են
Գործազուրկներ	28 /14-28/	Նյարդային-հոգեկան բռնկումները հավանական են, հատկապես ծայրեղ իրավիճակում
Անօթևան մնացած անձինք	33 /29 և ավելի/	Նյարդային-հոգեկան բռնկումների բարձր հավանականություն
Սահմանամերձ գոտում բնակվողներ	11 /0-13/	Նյարդային-հոգեկան բռնկումները քիչ հավանական են
Ոչ սահմանամերձ գոտում բնակվողներ	10 /0-13/	Նյարդային-հոգեկան բռնկումները քիչ հավանական են
Դեհանտ վարքագծով մարգինալներ	30 /29 և ավելի/	Նյարդային-հոգեկան բռնկումների բարձր հավանականություն

Ինչպես տեսնում ենք վերը ներկայացված աղյուսակից, նյարդա-հոգեկան բռնկումների բարձր հավանականությունը գերազանգապես գրանցվեց հետպատերազմական շրջափուլում էքզիստենցիալ, կյանքի իմաստի, հեռանկարի խեղաթյուրված ընկալումներով, ինչպես նաև՝ մարգինալ կարգավիճակում հայտնված թիրախային խմբերում: Թեև հարկ է նշել նաև, որ բռնկումների որոշակի ձևով արտահայտված՝ միջին ֆոնը գրանցվեց գրեթե բոլոր հարցվողների մոտ:

Նմանատիպ պատկեր էր ստացվել նաև Վ. Զունգեի

և Վ. Ժմուրովի կողմից մշակված դեպրեսիվ իրավիճակների գնահատման արդյունքներով [132]: Արդյունքները ստորև նույնպես ներկայացվում են ըստ երևանաբնականների և մարզային բնակիչների կողմից գրանցված միջինացված ցուցանիշների:

Թիրախային խմբեր	Խմբերում գրանցված միավորի միջինացված ցուցանիշ	Արդյունքների նկարագրություն
Պատերազմի մասնակիցներ	10	Նվազագույն, եզրային շեմ
Պատերազմում մասնակցություն չունեցող անձինք	9	Բացակայում է, եզրային շեմ
Պատերազմի մասնակիցների ընտանիքներ	9	Բացակայում է, եզրային շեմ
Զոհվածների ընտանիքներ	47	Միջին արտահայտվածություն
Անհետ կորածների ընտանիքներ	68	Ծանր, եզրային շեմ
Մասնագիտական խմբեր	4	Բացակայում է
Ենթամշակութային խմբեր	25	Մեղմ, եզրային շեմ
Աշխատանքը պահպանած անձինք	6	Բացակայում է
Գործազուրկներ	27	Մեղմ
Անօթևան մնացած անձինք	47	Միջին
Սահմանամերձ գոտում բնակվողներ	46	Միջին
Ոչ սահմանամերձ գոտում բնակվողներ	47	Միջին
Դեիանտ վարքագծով մարզինալներ	67	Ծանր, եզրային շեմ

Հետպատերազմական շրջափուլում անձի նպատակադրվածության փոխակերպումների կամ աղավաղումների հոգեբանական

գնահատման հարցում որոշակի տեղեկատվություն է հաղորդել նաև ինքնասպանության ռեակցիաների հանդեպ հակվածության գնահատականի չափման «CP-45» թեստը: Ըստ թիրախային խմբերում գրանցված միավորների միջինացված ցուցանիշների, միայն զոհվածների և անհետ կորածների ընտանիքի անդամների մոտ են գրանցվել միջինից բարձր գնահատականներ: Այ տվյալներն, անկասկած, տեղեկատվական մեծ ներուժ են պարունակում՝ հետպատերազմական անոմիայի և արժեքային ճգնաժամի հաղթահարման մեթոդաբանության մշակման գործում:

Թիրախային խմբեր	Խմբերում գրանցված միավորի միջինացված ցուցանիշ	Արդյունքների նկարագրություն
Պատերազմի մասնակիցներ	4	կարող է առաջանալ ինքնասպանության ռեակցիա միայն երկարաժամկետ հոգեկան ցնցման ֆոնին և հոգեկանի ռեակտիվ վիճակներում
Պատերազմում մասնակցություն չունեցող անձինք	4	կարող է առաջանալ ինքնասպանության ռեակցիա միայն երկարաժամկետ հոգեկան ցնցման ֆոնին և հոգեկանի ռեակտիվ վիճակներում
Պատերազմի մասնակիցների ընտանիքներ	5	Հակվածության ցածր մակարդակ
Զոհվածների ընտանիքներ	2	ուսումնասիրվողները պատկանում են ինքնասպանության ռեակցիաների հանդեպ հակումների ի հայտ գալու բարձր մակարդակի ռիսկի գոտուն: Դժվարություններ զգալու ժամանակ նրանք կարող են ցուցաբերել ինքնաքայքայիչ վարքագիծ

Անհետ կորածների ընտանիքներ	2	ուսումնասիրվողները պատկանում են ինքնասպանության ռեակցիաների հանդեպ հակումների ի հայտ գալու բարձր մակարդակի ռիսկի գոտուն: Դժվարություններ զգալու ժամանակ նրանք կարող են ցուցաբերել ինքնաքայքայիչ վարքագիծ
Մասնագիտական խմբեր	5	Հակվածության ցածր մակարդակ
Ենթամշակութային խմբեր	5	Հակվածության ցածր մակարդակ
Աշխատանքը պահպանած անձինք	5	Հակվածության ցածր մակարդակ
Գործազուրկներ	5	Հակվածության ցածր մակարդակ
Անօթևան մնացած անձինք	4	կարող է առաջանալ ինքնասպանության ռեակցիա միայն երկարաժամկետ հոգեկան ցնցման ֆոնին և հոգեկանի ռեակտիվ վիճակներում
Սահմանամերձ գոտում բնակվողներ	5	Հակվածության ցածր մակարդակ
Ոչ սահմանամերձ գոտում բնակվողներ	5	Հակվածության ցածր մակարդակ
Դեհանտ վարքագծով մարգինալներ	5	Հակվածության ցածր մակարդակ

Սոցիալ-հոգեբանական հայեցակարգային տիպաբանության վերջին բաղադրատարրը **սոցիալական փոխգործողության փոխակերպումն** է: Սոցիալական փոխգործողության մակարդակի գնահատման բազմապիսի չափման գործիքների շարքում կիրառվել են Սակս-Լևիի անավարտ նախադասությունների մեթոդը, Ռոջերս-Դայմոնդի ադապտացիայի մակարդակի ախտորոշման, Ռոզենցվեյգի ֆրուստրացվածության

ախտորոշման, Թոմասի կոնֆլիկտայնության բացահայտման մեթոդիկաները: Պարզվել է նաև թիրախային խմբերի ներկայացուցիչների սթրեսում դեզադապտացիայի ռիսկի և նյարդահոգեկան կայունության մակարդակը, իսկ որոշակի սոցիալական փոխգործողության կառուցվածքը և բնութագգիրը հասկանալու համար անց է կացվել սոցիոմետրիկ հետազոտություն:

Թիրախային խմբեր	Խմբերում գրանցված միավորի միջինացված ցուցանիշ	Արդյունքների նկարագրություն
Պատերազմի մասնակիցներ	5	ՆՀԿ միջին մակարդակ
Պատերազմում մասնակցություն չունեցող անձինք	5	ՆՀԿ միջին մակարդակ
Պատերազմի մասնակիցների ընտանիքներ	4	Միջինից ցածր ՆՀԿ մակարդակ
Զոհվածների ընտանիքներ	2	Ցածր ՆՀԿ մակարդակ
Անհետ կորածների ընտանիքներ	2	Ցածր ՆՀԿ մակարդակ
Մասնագիտական խմբեր	6	Միջինից բարձր ՆՀԿ մակարդակ
Ենթամշակութային խմբեր	5	ՆՀԿ միջին մակարդակ
Աշխատանքը պահպանած անձինք	6	Միջինից բարձր ՆՀԿ մակարդակ
Գործազուրկներ	4	Միջինից ցածր ՆՀԿ մակարդակ
Անօթևան մնացած անձինք	3	Ցածր ՆՀԿ մակարդակ
Սահմանամերձ գոտում բնակվողներ	5	ՆՀԿ միջին մակարդակ
Ոչ սահմանամերձ գոտում բնակվողներ	4	Միջինից ցածր ՆՀԿ մակարդակ
Դեհանտ վարքագծով մարզինալներ	2	Ցածր ՆՀԿ մակարդակ

Կիրառված մեթոդների հանրագումարում պարզ է դարձել, որ հետպատերազմական շրջափուլում անձի և սոցիալական խմբերի սոցիալական փոխգործողության կարգավորման նպատակով անհրաժեշտ է մշակել արժեհամակարգի ձևավորման ռազմավարություն՝ կապելով այն որևէ նպատակին հասնելու ձգտումի, ընդհանուր առմամբ, նպատակաուղղված գործունեության գաղափարի հետ [268]: Այն պետք է՝

1. թողնի շոշափելի արդյունք անձի արժեքային կողմնորոշումների վրա,
2. պետք է դրական գնահատվի որակապես կամ քանակապես, ընդորում
3. գնահատվող գործունեության նկատմամբ պահանջները չպետք է լինեն ոչ չափազանց ցածր, ոչ էլ՝ չափազանց բարձր, այսինքն, որպեսզի գործունեությունը կարողանա ավարտվի հաջողությամբ, և, առնվազն, չպետք է իրագործվի առանց որոշակի ժամանակի և ջանքերի կիրառման:
4. Անհրաժեշտ է ունենալ որոշակի համեմատական սանդղակ և այդ սանդղակի սահմաններում՝ պարտադիր համարվող որոշակի նորմատիվային մակարդակ:
5. Վերջապես, գործունեությունը պետք է լինի ցանկալի անձի համար և նրա արդյունքը պետք է ստանա հենց ինքը՝ անձը:

Հետպատերազմական իրավիճակում կարող է ակտիվանալ սոցիալական փոխգործողության այս կամ այն կողմը: Հետազոտվող թիրախային խմբերից սոցիալական փոխգործողության առավել մեծ դժվարություններ են գրանցվել անհետ կորածների ընտանիքների անդամների, մոտ: Փոխգործողության դերային ծանրաբեռնվածությունը, որը կարող է նույնիսկ ժամանակավորապես գերիշխող դառնալ տվյալ թիրախային խմբում, սակայն որևէ դերի դոմինանտության դեպքում առաջանում է դերերի այնպիսի փոխդասավորվածություն, երբ վերջիններս գտնվում են թույլ համաձայնեցվածության, իսկ երբեմն նաև կոնֆլիկտի մեջ, որն իր հերթին խոչընդոտում է թե՛ հոգեբանական պաշտպանական կառուցա-

կարգերի ի հայտ գալուն, թե՛ դրանց պարբերաբար կիրառմանը, իսկ հաճախ նկատվել է անհետ կորածների ընտանիքների, ինչպես նաև գործազուրկների և անօթևանների շրջանում սոցիալական փոխգործողության այնպիսի տիպական ապակառուցողական երևույթների դրսևորումներ, ինչպիսիք են՝

- ֆրուստրացիան (ինտենսիվ բացասական ապրումներ),
- բախումների առկայությունը (այլ մարդկանց հանդեպ ընդդիմադիր դիրքորոշում),
- ագրեսիվ միտվածությունը,
- տրավմատիզացնող միտվածությունը:

Եթե մարդը գիտակցում է սոցիալական փոխգործողության ընթացքում դերի հետ նույնացման հետևանքները և ցանկանում է դուրս գալ այդ շրջանակներից կամ ընդլայնել նույնացման դաշտը, ապա նա սկսում է կիրառել որոշակի պաշտպանական մեխանիզմներ, որոնցից են նաև դերային դիմակները: Դրանք կարող են լինել գիտակցված, եթե մարդը գործում է նպատակասլաց կերպով, կամ չգիտակցված, երբ նա դեռ չգիտի, թե ինչ է ուզում անել: Դիմակը իսկական «Ես»-ը չէ, և առաջին հայացքից կարող է թվալ, թե կապ չունի «Ես»-ի ներքին էության հետ: Եթե հասարակության մեջ խաթարված են սոցիալ-բարոյական, փոխգործակցային հարաբերությունները, ապա մարդիկ դիմակավորվում են, որպեսզի թաքցնեն իրենց իսկական դեմքը: Փաստորեն, անձի երկու՝ իրական և իդեալական «Ես»-երի միջև դիտվում են ծայրաստիճան բևեռացված միտումներ, և որպեսզի հավասարակշռվի ու մեղմացվի այդ բևեռացումը, անձը սկսում է օգտագործել իր էությանը խորթ, սակայն անձի մակերեսային հարմարվածությունն ապահովող պաշտպանություն: Դա իր մեջ ներառում է իդեալական «Ես»-ին բնորոշ որակներ, սակայն հիմնականում աղավաղված ձևով:

«Հեռանալով» կամ օտարվելով սոցիալական միջավայրից, անոմիկ պայմաններում հայտնված անձը ցանկանում է ցույց տալ իր անկախությունը: Կամ, ընդհակառակը, նա այնքան է նույնանում նոր պայմաններում ի հայտ եկախ սոցիալական դերերին, որ կա-

րողանում է «խաղալ»՝ դրսևորելով բնավորության դեմոնստրատիվ շեշտվախություն, փորձել այդ դերի հնարավորությունները, այսինքն՝ հնարավորություն է ստանում ստեղծագործաբար մոտենալու նոր սոցիալական դերին: Այսպիսով՝ կարող ենք առանձնացնել սոցիալական փոխգործողության երկու փուլ.

1. առաջին փուլում՝ չունենալով անհրաժեշտ սոցիալական փորձ, անձն իր դերը կատարում է դրա ձևական պահանջներին համապատասխան: Այս փուլում դերը ճնշում է դերակատարին, իսկ վերջինս ձգտում է հարմարվել դերի պահանջներին: Դերը և դերակատարողը հայտնվում են որոշակի հակադրության մեջ, և ծավալվում է անհաշտ պայքար: Եթե դերն այդ պայքարում հաղթող է դուրս գալիս, ապա դա նշանակում է, որ դերակատարման մեջ գերիշխում է ոչ թե անհատական, այլ սոցիալ-տիպական մոտեցումը: Նման դեպքում անձը սուբյեկտից վերածվում է օբյեկտի:

2. Երկրորդ փուլում, դերակատարն արդեն տիրապետում է դերի բոլոր նրբություններին և սկսում է դերը հարմարեցնել իր անհատականության պահանջներին: Նա իսկապես խաղում է, դիմում իմպրովիզացիաների: Դերից օտարվելով՝ նա հնարավորություն է ստանում նորովի մեկնաբանելու ինչպես առանձին մանրամասներ, այնպես էլ ամբողջ դերը: Այլ խոսքով՝ դերի ամբողջական «յուրացման» գործում կարևոր դեր են խաղում «օտարումը» և «նույնացումը»:

Անձի հոգեկանում առկա հակասությունների հաղթահարման երաշխիքներից մեկը ինքնաճանաչողությունն է, սեփական հոգեֆիզիոլոգիական ուժերի, դրանց հնարավորությունների ու սահմանների և առանձնահատկությունների իմացությունը: Սովորաբար մարզինալ են դառնում այն մարդիկ, ովքեր չեն ճանաչում իրենց, ովքեր ադեքվատ պատկերացում ունեն իրենց ընդունակությունների, հնարավորությունների, բնավորության և խառնվածքի մասին: Հայտնվելով արտակարգ, անկայուն և անորոշ իրավիճակներում, անինքնաճանաչ մարդիկ չեն կարողանում կողմնորոշվել, օբյեկտիվորեն գնահատել ստեղծված իրավիճակները, դառնում են անհավասարակշիռ, «կորցնում» իրենց, արագ ֆրուստրացվում, կատարում աննպատակ քայլեր, ապրում են հոգեկան ճգնաժամ և այլն:

Ոչ պակաս կարևոր է նաև անձի պատկերացումն իր սոցիալական դերերի, միջդերային ու ներդերային հակասությունների հաղթահարման ուղիների, դերային նախապատվությունների ու առաջնահերթությունների մասին [12]:

Հետպատերազմական շրջափուլում իրականացված արժեքային ճգնաժամի և սոցիալ-հոգեբանական անոմիայի համահարաբերակցային կապերի քննությունը վեր հանեց հատկապես սոցիալական փոխգործակցային դաշտում արժեքպահանջմունքային ապակոդմնորոշումներն ու բացասական փոխակերպումները, որոնք տարբեր թիրախային խմբերում յուրովի ազդում են թե սոցիալական միջավայրում Ես-ի նշանակության գնահատման և թե՝ պահանջմունքների ձևավորման ու նոր՝ հետպատերազմական իրողություններին ադապտացվելու և դիմակայելու մեխանիզմների մշակման գործընթացներին:

Մաս 5

Սոցիալ-հոգեբանական անոմիայի և արժեհամակարգի ճգնաժամի հաղթահարման մեթոդաբանությունը

Հոգեբանական անոմիայի հաղթահարման գիտական մեխանիզմները որոշակի չափով մշակվել և գործարկվել են հետպատերազմական տարբեր շրջափուլերում և միջավայրերում: Օրինակ, ինչպես վկայում են բազմաթիվ աղբյուրներ, 1990-ական թթվականների կեսերին Չեչնյաում ընթացող պատերազմական գործողությունների հետևանքով հոգեբանների առջև ծառացան մասնագիտական նոր մարտահրավերներ, որոնք այս կամ այն առումով առնչվում էին սոցիալ-հոգեբանական անոմիայի հոգեախտորոշման և հաղթահարման խնդիրներին: Ուշագրավ է հատկապես 6-րդ կենտրոնական գինվորական կլինիկական հոսպիտալի (CMCH) անձնակազմի փորձը՝ երկրում և աշխարհում ամենամեծ բազմամասնագիտական վերականգնողական կենտրոնի ստեղծման և գործարկման առումով: Սոցիալ-հոգեբանական վերականգնման առաջին շահառուներից դարձան պատերազմի մասնակիցները, որոնք ծանր վիրավորվել և հաշմանդամ են դարձել դեռևս Աֆղանստանում պատերազմական գործողությունների ժամանակ: 1994-ի դեկտեմբերին Չեչնիայում ռազմական գործողությունների բռնկման հետ կապված նոր փուլ սկսվեց մարտական գործողություններից տուժածների բուժման, վերականգնողական և սոցիալ-հոգեբանական միջոցառումների ռազմավարության և մարտավարության կատարելագործման գործում:

Սոցիալ-հոգեբանական վերականգնման ռազմավարության հիմքում ընկած էր հետտրավմատիկ սթրեսի բացասական հետևանքների գնահատումը՝ որպես հոգեբանական միջոցառումների հստակ փաթեթ [15]: Գնահատման նպատակն էլ ոչ միայն մարմնի ինչպես ֆունկցիոնալ վիճակի, այնպես էլ անհատի հուզական, բարոյական և մոտիվացիոն ոլորտների կարգավորումն էր և վերականգնումը:

Հաշվի առնելով միջազգային փորձը, ինչպես նաև 2020 թվականի Արցախյան պատերազմին հաջորդող հետպատերազմական շրջափուլում մեր կողմից իրականացրված հետազոտության արդյունքները, մեր կողմից առանձնացվել են անձանց և սոցիալական խմբերի սոցիալական և հոգեբանական վերականգնման հետևյալ խնդիրները.

- թիրախային խմբերի հոգեֆիզիոլոգիական վիճակի գնահատումը,
- հոգե-հուզական խանգարման որակի և աստիճանի որոշումը,
- հոգեբանական ազդեցության ուղիների և մեթոդների որոշումը,
- հոգեֆիզիոլոգիական տրավմայի և բուժման հետևանքների նկատմամբ դրական հոգեբանական ռեակցիայի ձևավորումը,
- բուժման ընթացքում հոգեկան խանգարումների դինամիկայի ուսումնասիրությունը,
- ֆիզիկական, զգայական և ինտելեկտուալ կարողությունների գնահատումը, դրանց համադրումը մասնագիտական մասնագիտական ցուցանիշների հետ,
- հոգետոմատիկ կարգավիճակի շտկումը հոգեթերապևտիկ և հոգեֆիզիոլոգիական ներգործության մեթոդների միջոցով,
- մասնագիտական վերականգնման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մասնագիտական վերակողմնորոշման իրականացումը,
- ինքնագիտակցության, ինքնագնահատականի և հոգեբանական բարեկեցության մակարդակի շտկումը,

- երկարատև բուժման կամ կրկնակի վիրահատությունների նախապատրաստումն ու հոգեբանական ուղեկցումը,
- ֆոկուս-խմբերով հոգեբանական խորհրդատվության կազմակերպումը,
- արժեք-պահանջմունքային կողմնորոշումների վեր հանումը,
- հետպատերազմական անոմիայի պայմաններում արժեքների աղավաղումների կամ փոխակերպումների բացահայտումը,
- արժեքների վերարժևորմանն ուղղված անհատական աշխատանքը,
- ադապտիվ կարողությունների հոգեբանական գնահատումը և զարգացումը,
- հետպատերազմական անոմիայի տիպաբանության համապատասխան ռազմավարության և մեթոդական գործիքակազմի մշակումը:

Կազմելու համար անոմիայի հաղթահարման ռազմավարական ծրագիրը, նախ անհրաժեշտ էր կիրառել կենսագրական մեթոդը, որի նպատակն էր արձանագրել պատերազմական և հետպատերազմական փուլերում հարցվողների կենսագրական այնպիսի մանրամասներ, որոնք ինքնարժևորվում են հարցվողի կողմից, ներկայանում են որպես անձի ինքնության և կենսագործունեության առավել կարևորվող գործոններ:

Կենսագրական մեթոդն իրականացվել է զրույցի մեթոդի հետ զուգընթաց, իսկ հիմնական արձանագրումները ընդգրկել են հետևյալ հարցադրումներ.

1. Կենսագործունեության տեսակը մինչպատերազմական շրջափուլը
2. Կենսագործունեության տեսակի փոփոխությունները հետպատերազմական փուլում
3. Կենսագործունեության ներկայիս տեսակների ինքնագնահատականը
4. Կենսագործունեության ներկայիս տեսակների արժեքային ռեյտինգավորումը

Թիրախային խմբեր Ք. Երևան և ՀՀ 5 մարզեր	Կենսագործունեության տեսակը մինչ պատերազմական շրջափուլը	Կենսագործունեության տեսակի փոփոխությունները հետպատերազմական փուլում	Կենսագործունեության ներկայիս տեսակների ինքնագնահատականը	Կենսագործունեության ներկայիս տեսակների արժեքային ռեյտինգավորումը
Պատերազմի մասնակիցներ	Ժամկետային ծառայություն՝ 75% Այլ՝ 25%	Կենսագործունեության փոփոխում՝ 80% Անփոփոխ կենսագործունեություն՝ 20%	Ցածր՝ 14% Միջին՝ 79% Բարձր՝ 7%	1 Աշխատանքի առկայություն՝ 70% 2 Ժամանց՝ 19% 3 Ուսում՝ 11%
Պատերազմի մասնակիցների ընտանիքի անդամներ	Այլ՝ 100%	Անփոփոխ կենսագործունեություն՝ 100%	Ցածր՝ 10% Միջին՝ 88% Բարձր՝ 2%	1. Աշխատանքի առկայություն՝ 92% 2. Ուսում՝ 8%
Պատերազմում զոհվածների ընտանիքների անդամներ	Այլ՝ 100%	Անփոփոխ կենսագործունեություն՝ 75% Փոփոխված կենսագործունեություն՝ 25%	Ցածր՝ 78% Միջին՝ 22% Բարձր՝ 0%	1. Աշխատանքի առկայություն՝ 100%
Անհետ կորած զինծառայողների ընտանիքների անդամներ	Այլ՝ 100%	Անփոփոխ կենսագործունեություն՝ 55% Փոփոխված կենսագործունեություն՝ 45%	Ցածր՝ 85% Միջին՝ 15% Բարձր՝ 0%	1. Աշխատանքի առկայություն՝ 100%
Պատերազմի ընթացքում գործող մասնագիտական խմբեր /բժիշկներ, փրկարարներ, սոցիալական աշխատողներ/	Մասնագիտական գործունեություն՝ 100%	Անփոփոխ կենսագործունեություն՝ 100%	Ցածր՝ 3% Միջին՝ 50% Բարձր՝ 47%	1. Աշխատանքի առկայություն՝ 100%
Հետպատերազմյան շրջանում անօթևան մնացած անձինք	Մասնագիտական գործունեություն՝ 100%	Անփոփոխ կենսագործունեություն՝ 25% Փոփոխված կենսագործունեություն՝ 75%	Ցածր՝ 37% Միջին՝ 60% Բարձր՝ 3%	1. Աշխատանքի առկայություն՝ 100%
Հետպատերազմյան շրջանում գործազուրկ անձինք	Մասնագիտական գործունեություն՝ 100%	Փոփոխված կենսագործունեություն՝ 100%	Ցածր՝ 100%	1. Աշխատանքի առկայություն՝ 100%

Հետպատերազմյան շրջանում աշխատանքը պահպանած անձինք	Մասնագիտական գործունեություն՝ 100%	Անփոփոխ կենսագործունեություն՝ 100%	Ցածր՝ 7% Միջին՝ 85% Բարձր՝ 8%	1. Աշխատանքի առկայություն՝ 80% 2. Ժամանց՝ 20%
Պատերազմին մասնակցություն չունեցող անձինք	Այլ՝ 100%	Անփոփոխ կենսագործունեություն՝ 75% Փոփոխված կենսագործունեություն՝ 25%	Ցածր՝ 19% Միջին՝ 75% Բարձր՝ 6%	1. Աշխատանքի առկայություն՝ 70% 2. Ժամանց՝ 25% 2. Ուսում՝ 5%
Հետպատերազմական շրջանում աշխատող և մշակութային մարզինային / միգրացիոն դիրքորոշում ունեցող անձինք, էթնոմարզինային, կրոնական և ազգային փոքրամասնություններ/	Այլ՝ 100%	Անփոփոխ կենսագործունեություն՝ 15% Փոփոխված կենսագործունեություն՝ 85%	Ցածր՝ 10% Միջին՝ 84% Բարձր՝ 6%	1. Աշխատանքի առկայություն՝ 80% 2. Ժամանց՝ 17% 2. Ուսում՝ 3%

Սոցիալ-հոգեբանական վերականգնման ռազմավարությունը, անշուշտ, պահանջում էր մասնագիտական հիմնական սկզբունքների պահպանումը, որոնց թվում առաջնահերթ կարող են համարվել հետևյալները.

- **պրոֆեսիոնալիզմ.** գործողությունները պետք է իրականացվեն բժիշկների և հոգեբանների կողմից, ովքեր ունեն հատուկ պատրաստվածություն և մեթոդների խորը իմացություն, հոգեբանական փորձաքննություն, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական ուղեկցում իրականացնելու մասնագիտական փորձ,
- **օբյեկտիվություն.** մեթոդների ընտրությունը պետք է լինի մատչելի, դրանք պետք է հավաքագրվեն բժշկական և հոգեբանական վերականգնման հուսալի մեթոդների շարքից, անհրաժեշտ է մեթոդների կիրառման երկարաժամկետ պրակտիկան, որտեղ հաշվի են առնվել անոմիկ

վարքի դրսևորումները, դրանց հաղթահարման սոմատիկ և հոգեբանական առանձնահատկությունները,

- **անհատական մոտեցում.** այս սկզբունքը ենթադրում է հետապատերազմական փուլում անձանց մասնագիտական կարևոր որակների անկման մակարդակի և անոմիայի առկայության անհատական որոշում, անձի ախտաբանական փոփոխությունների առկայության բացահայտում, պատերազմական գործողություններից տուժածների զգայունությունը տարբեր բժշկական և հոգեբանական մեթոդների նկատմամբ և նրանց հանդուրժողականության աստիճանի գնահատում:
- **հոգեբանական ուղեկցման շարունակականությունը և օպտիմալ տևողությունը՝** անոմիկ դրսևորումների ի հայտ գալու պահից մինչև նորմալացում, անձի ֆունկցիոնալության և հարմարվողական կարևոր որակների վերականգնումը [62]:

Ծանր վիրավորում ստացած զինվորականների զգալի մասի վերականգնումը բնութագրվում էր երկարատև հոգե-հուզական սթրեսի առկայությամբ, որն էլ խորացնում էր անոմիայի բնույթը: Սթրեսի ուժն ու տևողությունը չեն որոշվում միայն կրած կորուստների բացասական հետևանքներով, (որոնք հաճախ անդառնալի են լինում, օրինակ՝ վերջույթների անդամահատման դեպքում), բայց նաև, մեծ չափով, վիրավորների անձնական որակներով: Ուստի, հոգեբանական անոմիայի հաղթահարման գործում գնահատվում են տրավմատիկ իրադարձության ներգործության այնպիսի ձևերը, ինչպիսիք են.

- 1) տրավմատիկ իրադարձությունների մասին անհանգստացնող հիշողություններ,
- 2) պարբերաբար կրկնվող մղձավանջներ,
- 3) տրավմատիկ իրադարձությունների անմիջական վերադարձի մասին անսպասելի մտքեր և զգայություններ (պատրանքներ, հալյուցինացիաներ, դիսոցիատիվ դրվագներ),

որոնք տեղի են ունենում ինչպես արթնության, այնպես էլ քնի վիճակում,

- 4) տրավմատիկ իրադարձությունը խորհրդանշող կամ հիշեցնող դեպքերի ոչ ադեքվատ ընկալումներ (օրինակ՝ տարեդարձ, վնասվածքներ),
- 5) պատերազմական տրավմայի հետ կապված արտաքին գրգռիչների թուլացում; ուղեկցվում է էմոցիոնալ աղքատացումով, ուրիշների հանդեպ անտարբերության զգացումով: Դրսևորվում է հետևյալ տիպի խանգարումներից առնվազն երեքով.

- գիտակցված ջանքեր՝ խուսափելու տրավմայի հետ կապված մտքերից կամ զգացմունքներից,
- խուսափում ցանկացած գործողություններից կամ իրավիճակներից, որոնք կարող են խթանել տրավմատիկ հիշողությունները,
- տրավմային շանակալի կողմը հիշելու անկարողությունը (հոգեկան ամնեզիա),
- հետաքրքրության նվազում տվյալ անձի համար նախկինում նշանակալի գործունեության տեսակների նկատմամբ,

- 6) օտարության զգացում,
- 7) այլ մարդկանց կարեկցելու ունակության նվազում,
- 8) «կրճատված ապագայի» զգացում (ապագայի նկատմամբ անորոշություն,
- 9) հիպերակտիվություն, որն արտահայտվում է հետևյալներից առնվազն երկուսով.

- քնելու դժվարություն կամ մակերեսային քուն,
- ավելացել է դյուրագրգռություն կամ զայրույթի բռնկումներ,
- կենտրոնանալու դժվարություն,
- զգոնության բարձրացում:

Հոգեբանական անոմիայի հաղթահարման հոգեհուզական վերականգնողական աշխատանքների ուսումնասիրությունները հնարավորություն են տվել բացահայտելու հոգեբանական անոմիայի մի շարք հատկանիշներ, որոնք ցույց են տալիս այս կամ այն վարքագծային ռազմավարության գերակշռումը.

- ✓ **ակտիվ-պաշտպանական** (արտաքին սոցիալական աններդաշնակություն), կարող է դրսևորվել հոգեբանական տրավմայի ծանրության անհամարժեք գնահատման տեսքով, բայց նաև որպես այն անտեսելու միտում, նկատվում են ներոտիկ խանգարումներ,
- ✓ **պասիվ-պաշտպանական** (ներհոգեբանական աններդաշնակություն), որը հիմնված է նահանջի ռազմավարության, տրավմայի հետևանքների հետ հաշտեցման վրա. բնութագրվում է դեպրեսիվ և հիպոխոնդրիկ հակումներով, նվազում է գոյատևման համար պայքարելու մոտիվացիան,
- ✓ **դեստրուկտիվ** (միջհոգեբանական թերադապտացիա), որը բնութագրվում է սոցիալական գործունեության խախտմամբ, նկատվում է ներքին լարվածություն, հաճախ նկատվում են կոնֆլիկտներ, դելինկվենտ կամ ադոլիկտիվ պահվածք:

Ռազմական գործողություններին մասնակցությունը համարվում է սթրեսոր, որը տրավմատիկ է գրեթե ցանկացած մարդու համար: Ի տարբերություն այլ սթրեսային գործոնների, պատերազմին մասնակցությունը հանգեցնում է երկարատև հոգետրավմատիզացիայի, որն ուղեկցվում է մի շարք պաթոգեն գործոններով՝ կենսաբանական վախ մահվան, վնասվածքի, ցավի, հաշմանդամության հանդեպ, հոգե-հուզական սթրես՝ կապված զինակիցների մահվան հետ կամ մարդ սպանելու անհրաժեշտությամբ: Հավելենք պատերազմի հետևանքով պայմանավորված անձի և սոցիալական խմբերի հոգեբանական բարեկեցության և պահանջմունքների փոխակերպումները, հոգեկան առողջության մակարդակի ընդհանուր նվազումը (տարածա-ժամանակային աղավաղված ընկալումներ, անորոշության զգացում, տեղի ունեցողը որպես մղձավանջի ընկալում), հոգեսոմատիկ դժվարու-

թյունները և խնդիրները, որոնք անխուսափելի են հետպատերազմական շրջափուլում (կենսաապահովման պահանջմունքների անբավարարվածություն):

Անոմիայի հաղթահարման և վերականգնման սկզբնական փուլում մասնագետները ընդգծում են հետազոտվողների որոշակի հակազդեցությունների առկայությունը՝

- ✓ իրավիճակային անհանգստության ավելացում,
- ✓ զգուշավորություն և կասկածամտություն և, ընդհակառակը, սեփական զգացմունքները կառավարելու ունակության նվազում,
- ✓ նկատելի է նաև խմբային աջակցության կարիքը:

Բացահայտվում են մի շարք որոշիչ գործոններ, որոնք ընկած են հոգեբանական անոմիայի գնահատման հիմքում: Դրանցից առանձնանում են

- ✓ նախորդ պատերազմական իրադարձություններից պահպանված հոգեբանական տրավման,
- ✓ պատերազմում գտնվելու տևողությունը, կռվի ինտենսիվությունը,
- ✓ կենսական անվտանգային սպառնալիքին անհատական ռեակցիայի առանձնահատկությունները,
- ✓ հետպատերազմական շրջափուլում հոգեկան տառապանքը, մեկուսացվածությունը, կյանքը շարունակելու անկարողությունը և այլն:

Գիտական գրականության մեջ արտացոլված հետպատերազմական սթրեսի և անոմիայի նշանների հաղթահարման փորձը ամփոփված է մի շարք հեղինակների աշխատություններում [103; 152; 243], որոնցում բացահայտվում են սոցիալ-հոգեբանական վերականգնման երեք հիմնական փուլերը.

1. ախտորոշիչ – անձի մարմնի տարբեր համակարգերի ֆունկցիոնալ վիճակի և ֆիզիոլոգիական ռեսուրսների գնահատում, հոգեբանական բնութագրերի, ինչպես նաև հոգեկան գործընթացների սթրեսին հարմարվողականության գնահատում, հոգե-

հուզական խանգարումների և դրանց ծանրության աստիճանի ախտորոշում,

2. վերականգնողական – անձի մոտ հոգե-հուզական խանգարումների առկայության դեպքում անհատական մոտեցման հստակեցում, հոգեթերապևտիկ ազդեցության ընտրություն և դրա իրականացում հոգեկան վիճակի դինամիկայի պարբերական մոնիթորինգով և թերապևտիկ միջոցառումների շտկմամբ,

3. սոցիալական ադապտացիա - կորցրած հմտությունների վերականգնում հատուկ սիմուլյատորների միջոցով, ապարատային և համակարգչային տեխնիկայի կիրառում, որը որոշում է անձի մասնագիտական պատրաստվածության վերականգնման աստիճանը և նրա կարողությունները, արժեքային կողմնորոշումների արդիականացում, սոցիալական գործունեությանն ուղղված մի շարք հմտությունների ձևավորում, անհատական հարմարվողական ներուժի ավելացում, կառուցողական վարքագծի ձևավորում, հաղորդակցման կարողությունների զարգացում:

Հետպատերազմական շրջափուլում անձի ամբողջականության, հոգեկան առողջության, ինչպես և սոցիալ-հոգեբանական անոմիայի հաղթահարման գրավականներից մեկը ճկուն «Ես-կոնցեպցիայի» առկայությունն է: Յու. Մ. Կարայանիի կողմից կատարած հետազոտությունը ցույց է տալիս, որ ռազմական գործողություններն իրենց հետքն են թողնում անձի Ես-կոնցեպցիայի կառուցվածքի վրա: Այն կարող է ունենալ արժեքային որոշակի շեշտադրումներ՝ ռազմական գործողություններին մասնակցության, ինչպես նաև՝ պատերազմական և հետպատերազմական շրջափուլերում հոգեբանական և ֆիզիկական տրավմատիզացիայի աստիճանից կախված: Հետպատերազմական շրջափուլում անձի Ես-կոնցեպցիայի կառուցվածքային աններդաշնակությունը կապված է նրա հիմնական Ես-պատկերների քայքայման և հակասության հետ: Յուրաքանչյուր մարդ ունի բազմաթիվ «Ես»-եր, «Ես»-ի տարբեր պատկերացումներ: Հոգեբանները «Ես-կոնցեպցիայի» կառուցվածքի մեջ առանձնացնում են մի քանի «Ես»-եր՝ «ֆիզիկական Ես», «իրական Ես», «դինամիկ Ես», «ֆանտաստիկ Ես», «իդեալական Ես», «հնարավոր Ես», «իրադրական (ներկայաց-

վող, գործող) Ես»: Արդյո՞ք այդ «Ես»-երը հետպատերազմական շրջափուլում բացահայտում, փոփոխում, կամ թաքցնում են բուն «Ես»-ը: Ենթադրվում է, որ առօրյա կյանքում այդ բազում «Ես»-երը պետք է փոխլրացնեն իրար, որպեսզի կարողանան միավորվել և ներկայանալ որպես Ես-ի ամբողջական համալիր: Ինչպես ցույց են տալիս մեր հետազոտությունները, հետպատերազմական շրջափուլում հաճախ փոփոխություններ են տեղի ունենում իրական Ես-ի և իդեալական Ես-ի պատկերներում: Նրանք կարող են ոչ միայն ձևախեղվել, այլև փոխարինվել մեկը մյուսով: Երբեմն ի հայգտ է գալիս Ես-ի որակապես նոր՝ նախատրամային պատկերը, որն արտահայտվում է մինչ պատերազմական փուլում սեփական անձի և հասարակության մասին հիշողությունների միջոցով՝ թե ինչպիսին էր ինքը մինչև պատերազմը սկսվելը, ինչպիսին էր սոցիալական միջավայրն ընդհանրապես և ինչ փոփոխություններ են առաջացել պատերազմից հետո: Այս պարագայում նախատրամային Ես-ի ձեռք է բերում իդեալական Ես-ին հատուկ նշաններ, իսկ իրական Ես-պատկերը աստիճանաբար դեֆորմացվում է, ձեռք է բերում անոմիկ հատկանիշներ, որտեղ գերիշխող է դառնում անորոշությունը և սոցիալ-հոգեբանական օտարվածությունը: Պատերազմի մասնակիցների շրջանում, կախված մարտական գործողությունների ընթացքում ձեռք բերված վնասվածքներից և կյանքի նոր փորձառությունից, երբեմն նկատվում է ֆիզիկական Ես-ի միջնորդավորում հայելային Ես-պատկերով: Նման դեպքում անխուսափելի է ֆիզիկական Ես-ի թուլացումը և դեֆորմացումը, նրա հայելային փոխակերպումը իրական Ես-ի աղավաղված ընկալումներով, ինչի արդյունքում տեսնում ենք իդեալական Ես-ի մոբիլիզացնող և ինքնառեակիզացնող գործառույթի դադարեցում կամ նվազում:

Պատերազմում զոհված և անհետ կորած զինծառայողների ընտանիքների և, որոշ չափով, պատերազմի մասնակիցների շրջանում Ես-կոնցեպցիայի անոմիկ վերափոխումը բնութագրվում է նրանով, որ արգելափակվում է անձի Ես-կոնցեպցիայի զարգացումը ապագայի ուղղությամբ, առաջ է գալիս «կրճատված» կյանքի հեռանկարը, ինչն ինքնին կրում է սոցիալապես դեզինտեգրացիոն բնույթ: Պատերազմը վերապրած զինծառայողների Ես-կոն-

ցեպցիաում էլ նկատվում է հաճախ անցյալի գերակայությունը, ողջ մնալու պատճառով մեղքի զգացումը, ինչը կարող է հանգեցնել «զոհի» բարդույթի ձևավորմանը [152]:

Շտկելու համար բացահայտված խնդիրները հետազոտական ծրագրի շրջանակներում իրականացվել է նախ հարցվողների ողջ ընտրանքի հոգեբանական գնահատումը, այնուհետև կազմակերպվել են քաղաք Երևանում և ՀՀ 5 մարզերում թրեյնինգային պարապմունքներ, որոնցում ներգրավվել են առավել մտահոգիչ ցուցանիշներ գրանցած հարցվողները: Այսպես, կազմվել են ֆոկուս-խմբեր, որոնց հետ տարվել է հոգեշտկող աշխատանք: Ֆոկուս-խմբերում, այսպիսով, ներառվեցին ընդհանուր թվով 1700 մասնակից: Աշխատանքի հիմքում ընկած էր սոցիալական ինտեգրման, ասերտիվ վարքագծի և արժեքային կողմնորոշման ու վերարժևորմանն ուղղված հոգեբանական խորհրդատվությունը, ֆոկուս-խմբերի անդամների մոտ հաղորդակցական կարողությունների զարգացումը և ընդհանուր հետաքրքրությունների վեր հանումը: Ֆոկուս-խմբերով աշխատանքի վերջնարդյունք է համարվել մասնակիցների կողմից արժեքային առաջնահերթությունները գնահատելու և նպատակադրվածության կարողությունների զարգացումը: Ֆոկուս-խմբերում ներգրավված հետազոտության մասնակիցների շրջանում կատարված կրկնակի թեստավորման մեթոդը բացահայտեց սոցիալ-հոգեբանական անոմիայի հիմնական ցուցանիշների՝ օտարվածության, մեկուսացման, կյանքի իմաստային աղավաղումների և անզորության փոփոխականների թուլացման միտում: Արժեքների գնահատման և ռեյտինգավորման կրկնակի արդյունքները նույնպես գրանցեցին արժեքային կողմնորոշումների հստակ դասակարգման և առաջնահերթությունների սահմանման կարողությունների զարգացման էական արդյունքներ:

Պարզվեց նաև, որ հետպատերազմական շրջափուլում անձի Ես-կոնցեպցիայի որոշ պատկերների ապաակտիվացումը դրսևորվում է անհաջողությունից խուսափման մոտիվացիոն ռազմավարության միջոցով. անձը տարվում է «երկրորդական օգուտներով», գերակայում է եսակենտրոնությունը տնտեսական վարքագծում, թուլանում է ասերտիվության դերակատարումը

